пр(ѣ) тро(пар)

Ѕ

н(е)тин благословенте мучника пре ю

Сфинцеа прѣсфнтулѹ маицѹ а тъни

са се пр(ѣ)нѹ плѣчени

прх(?)

Ку фрика [illegible] прасвате [illegible]

ми [illegible] [illegible]та а(д)зо(?)[illegible]

пр[illegible] ц[illegible] а[illegible]

ՍՏՈՒԳՎԱԾ 1951

# ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՆԱՑ,

## ՈՐ ԵՒ ԿՈՉԻ ՆՈՐ ԱՌԱԿՔ ՍԱՂՈՄՈՆԵԱՆ.

Հանեալ ՚ի Հնդիկ ձեռագրէ վաղեմի ուրումն Բրամանի.

Թարգմանեալ նախ՝ ՚ի լեզու Անգղիացի, և ապա ՚ի մեր բարբառ յԱղայ Մարգարայ Շէհրիմանեանց՝ առ ՚ի պատիւ ծերունի բարեկամի իւրոյ Աղայ Շամիրի Շամիրեանց, և ՚ի յօգուտ և ՚ի վճռասան Հայկազեան բարեւէր ընթերցողաց.

*Բազմաջան աշխատութ. օրինագրեալ անվթար ըստ Իտալական Թարգմանութե. ՚ի Հայր Մինաս Վարդապետէ Պապարեանց Երթվինցւոյ ՚ի Միաբանութենէ բարեյիշատակ Հօր մերոյ Մխիթարայ Բարունապետի և Աբբայի.*

Տպագրեալ ծախուք նորին Աղայ Մարգարայ: Յամի Տն 1784.

## ՚Ի ԹՐԻԵՍՏ.

՚Ի Տպարանի Հարց Մխիթարեանց Հռոմէական Միաբանից



Gralian del. et sc.

# Առ յարգոյապատիւ ուխտական Հարս Մխի-թարեանս որ ՚ի Թրիեստէ.

Ս ոգի առաքինութեան և բարոյա-կանութեան բուրէ ՚ի գրքոյկս յայս. որ կոչեցեալ է Տնտեսութիւն Մարդ-կային կենաց. այլ յաղագս արժանաւո-րութեան իշխեմ կոչել զսա Նոր ա-ռակք Սողոմոնեան. Քանզի նուրբ և խորին իմաստ և ճարտարութիւն շքեղա-գործ վճռոց և ասացուածոց սորա ըղ-մայլեցուցանէ զմիտս ընթերցողաց. Ուս-տի ՚ի գտանելն իմ յԱնկլիզաց լեզուի զգաղափար սորին, և յընթեռնուլն միան-գամ ըղձալի կամօք, շարժեցայ ՚ի սէր փոխաբերելոյ զսա ՚ի բարբառս մեր առ ՚ի զբօսանս և ՚ի հրահանգ Հայկազեան սեռի :

Բայց երկու գլխաւոր պակասութիւնք յոյժ ծանրացուցանէին զգործս զայս. և ար-կանէին զիս ՚ի վարանս. Նախ ան-հմտութիւն իմ բառից և շարադրութեանց մերոյս լեզուի. և զի ոչ ունէի առ ըն-թեր զկատարեալ բառարան առ ՚ի լնուլ զայս պակասութիւն, բայց եթէ միայն

զՎիլլօթն․ որ յայտ է, թէ ոչ է կա_
տարեալ 'ի սակս Թարգմանութեան, Երկ_
րորդ՝ խրթնութեան շարադրութեան բնագրին
յԱնկլիոց լեզուին, և դժուարիմացութի
ոճոյն յաղագս կարի իմն համառօտ և
հատուկտեր լինելոյ բանիցն ընդ առա_
կացն Սողոմոնի։
Սակայն հանդերձ այսու ամէն քաղցրութի
սորին բռնադատեաց զիս ձեռնամուխ
լինել 'ի վեր քան զկար իմ․ Միքա_
նիցս անգամ ձեռն արկի 'ի Թարգմա_
նութիւն, յետ փոքր միոյ վհատեալ՝ 'ի բաց
թողի․ քանզի ոչ գործին բաւական ինձ
օգնական լինէր, և ոչ հմտութի իմ
լուսաւորէր զմիտս իմ 'ի ճանաչել ըզ_
խրթնիմաց բառսն, և զկատարեալ նշա_
նակութիւն բառ պատշաճին փոխել 'ի
մեր լեզուն․ Իսկ յորժամ 'ի բաց ձգէի
զաւուրս ինչ, կրկին քաջալերեալ զիս․
ձեռն մխէի և տառապէի․ և այս ոչ
միանգամ, այլ բազում անգամ․ Ահա
այսպիսի տաժանմամբ փոքրիկ գործս այս
յերկարեաց զամիսս քսան և մի․ յորչափ
ժամանակի, իշխեմ ասել, թէ կա_
րող էի Թարգմանել զայլ գրեանս պարզ
շարադրութ աւելի քան զհինգ կամ զվեց։
Ապա ուրուրեմն ՚ով աւարտեցի զԹարգ_
մա_

մանութիս զայս վերահասու քննութ, որքան հմտութ՛ի կարողութ՛ի իմոյ բաւական եղև. և հաւատամ, թէ գլխաւոր սխալանք ոչ գոյ յայսմ, բայց եթէ վրիպակ ինչ բառից. մանաւանդ նախադրու՛եց և շաղկապից գտանիցի 'ի հայկական շարադրու՛են. կամ պակասու՛ի պատշաճագոյն բառից ըստ տեղւոյն. Քանզի ունիմք 'ի լեզուի մերում բազում բառս նոյնանշանս, զոր օրինակ՝ ճառամ, ճառումբան, ճարտասան, ճարտարախօս, պերճաբան, ճոխաբան, են. յորոց ուրեք ուրեք գլայիլագոյնն ընտրել ըստ տեղւոյն վ՟ քաղցրախօսութ՛են տկարացայ:

Նա արդ՝ որովհետև զպակասու՛ի հմտու՛ե իմոյ համարձակ խոստովանեցայ ո՛վ հարք որբազանք. և մատուցի առաջի ձեր զփոքրիկ աշխատանս իմ, թախանձանօք հայցեմ 'ի ձէնջ, քաղցրութ՛բ յանձն առէք. և օժանդակ լերուք տկարութ՛ես իմում. դիք զայս 'ի շաւիղ ուղղու՛ե առ 'ի տպագրել յանարժան յիշատակ իմ, 'ի պարծանս ձեր և 'ի զուարճու՛ի Հայկազեանս ազգի. զոր և աղաչեմ առհասարակ՝ սիրով ընդունել զառաջի եդեալ գործն նուէրս իմ:

Նախանձ գոյ յիս՝ ըսկզբնական,
առ գիտնական՝ ազգըս համայն,
մ՛ն էր չուննիմք՝ նոցին նըման,
որոց իմաստ՝ յոյժ բազմացան :
Պատճառ սորին՝ արմատական,
կարծեմ լինել՝ պակասութե՟,
սոփեստական՝ գրոց զանազան,
որով մընամք՝ յանգիտութե՟ :
Արդ՝ իմումըս՝ այս եռանդեան,
օգնեցէք դուք՝ վեհք զօրութբ՟,
գոլով վիճակ՝ ձեր պարտական,
առ իմ ազգիս՝ պայծառունե՟ :
Առանց ձերոյ՝ սատարութե՟,
ոչ հասանէ՝ գործս 'ի վախճան,
փանաք ջանիս՝ լերուք պաշտպան,
ցուցէք ըզսէր՝ ձեր հայրական :
Տուք ըզսոյն զայս՝ ռահ ուղղութե՟.
մինչ քանոնիւ՝ ձեր ուղղանան,
և աղիւ ձերով՝ համեղանան,
զի դուք էք բուն՝ իմաստութե՟ :
Յոյս այս պընեաց՝ զիս յարաժամ.
զի խիթայի՝ չլիցի խոտան,
աշխատուիս՝ իմ բազմամեան,
այլա սպասեմ՝ յանգն անխափան :

Խոնարհ և հնազանդ ծառայ
Մարգարա Շէհրիմանեանց :

# ՑՈՒՑԱԿ ՆԻՒԹՈՑ

պարունակելոց յայսմ գրքեան.

## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ.

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

Պարտականութիւնք մարդոյ նկատեալ իբր անհատ.

Հատուած. Ա. Խոկումն. 3
Հատ. Բ. Պարկեշտութի. այս է, ի չափու ունել զինքն. կամ ճանաչել զչափ անձին. 5
Հատ. Գ. Փութաջանութի. 7
Հատ. Դ. Նախանձաւորութի. 9
Հատ. Ե. Խոհեմութի. 12
Հատ. Զ. Արիութի. 15
Հատ. Է. Բաւականութի. այսինքն, գոհ լինելն. կամ ղանահաթ. 16
Հատ. Ը. Բարեխառնութի. 19

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

### Կիրք.

յօդուած. Ա. Յոյս և երկիւղ. 23
յօդուած. Բ. Ուրախութիւն և տրտմութիւն. 25
յօդ. Գ. Բարկութիւն. 28
յօդ. Դ. Կարեկցութիւն. 30
յօդ. Ե. Ցանկութիւն և սէր. 32

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.

Կին. 34

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.

### Ազգականք կամ Ընտանեկանք.

յօդուած. Ա. Այր. 38
յօդուած. Բ. Հայր. 40
յօդ. Գ. Որդի. 42
յօդ. Դ. Եղբարք. 43

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

Յառաջատեւութիւն կամ պատահական տարբերութիւնք մարդկան ։

Հատուած. Ա. Իմաստունք և տգէտք. 44
Հատ. Բ. Հարուստք և աղքատք. 46
Հատ. Գ. Տեարք և ծառայք. 49
Հատ. Դ. Թագաւորք և հպատակք. 51

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ.

Պարտականութիւնք ընկերութեան.

Հատուած. Ա. Մարդասիրութիւն. 55
Հատ. Բ. Արդարութիւն. 56
Հատ. Գ. Սէր. 58
Հատ. Դ. Երախտագիտութիւն. 60
Հատ. Ե. Անկեղծութիւն. 61

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ.

Կրօն. 63

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

Մարդն նկատեալ ընդհանրապ.

Հատուած. Ա. Կերպարան և կազմուած մարդկային. 69
Հատ. Բ. Պէտք զգայութեանց. 71
Հատ. Գ. Ոգի մարդոյ, ծագումն և զգածմունք իւր. 74
Հատ. Դ. Շրջան և կերպաւորութիւն մարդկային կենաց. 80

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

Մարդն նկատեալ ըստ տկարութեանց իւրոց և նոյին արգասեաց.

Հատուած. Ա. Ունայնութիւն կամ Մնապարծութիւն. 87

Հատ.

Հատ. Բ. Անկայունութ՟ի. 91
Հատ. Գ. Անզօրութ՟ի. 96
Հատ. Դ. Անբաւականութիւն իմաստութ՟ե. 101
Հատ. Ե. Թշուառութ՟ի. 107
Հատ. Զ. Դատումն. 111
Հատ. Է. Մեծամտու՟ի. 117

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.

Ախորժակք Մարդոյ, որք վնասակարք են ինքեան և այլոց:

Հատուած. Ա. Ագահու՟ի. 123
Հատ. Բ. Ծայլութ՟ի. 127
Հատ. Գ. Մրեժխնդրու՟ի. 129
Հատ. Դ. Անողորմու՟ի, Ատելութ՟ի և Նախանձ. 134
Հատ. Ե. Թախծու՟ի սրտի. 139

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.

Օգուտք, զորս մարդն կարէ ստանալ 'ի վր՟ քաղաքակցաց իւրոց.

Հատ. Ա. Ազնուականու՟ի և պատիւ. 146
Հատ. Բ. Գիտութ՟ի և Ուսումն. 152

Իմաստութիւն արտափայլէ յամ գործս իւր . բայց իմացականութիւն մարդկային ոչ ըմբռնէ զայն . Ստուեր գիտուն անցանէ ՚ի վ՛ր իմացականութեն մարդոյ իբրև երագ իմն . տեսանէ նա իբր ՚ի խաւարի . ընթանայ այսր անդր և կորնչի . Բայց իմաստութիւն ոչ է իբրև զլոյս երկնից . Նա ոչ տրամաբանէ . իմացումն նր է աղբիւր Ճշմարտութե :

Արդարութիւն և ողորմութիւն ապաւէն հրամանաց առ պատուանդանի աթոռոյ նորա . բարեկամութի և սէր են շառաւիղք յաւիտենական : Ո՛վ նմանի նմ ՚ի մեծվայելչութե . ո՞ մերձեսցի ՚ի վ՛ր կարողութեն ամենակալին . Ի՞նչ ոք որ հաւասարեսցի նմա յիմաստութե . Ի՞նչ ոք , որ կարիցէ համեմատիլ նմա ՚ի բարութե :

Ո՛վ մարդ նա է որ հաստեացն զքեզ . նա նշանակեաց քեզ զաստիճան քո ՚ի վ՛ր երկրի . կարողութիւնք ոգւոյ քո են պարգևք բարութե նր . սքանչելիք կազմուածոյ քոյ են գործք ձեռաց նր :

Դու ունկն դիր բարբառոյ նր . վ՛ս զի խօսի նա զխաղաղութե . և նա , որ ընկալցի զայնմանէ խրատ , ապահովացուցէ զհանգիստ ոգւոյ իւրոյ :

ՍՐ.–

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ·

## ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ ՄԱՐԴՈՅ ՆԿԱՏԵԱԼ ԻՒՐ ԱՆՁԱՏ·

### ՀԱՏՈՒԱԾ· Ա·

Խոկում.

Մուտ ՚ի ներքս ՚ի քեզ ով մարդ· և խորհեաց զվախճանն· որոյ վ՟ն ստեղծեալ ես· մտախոհ լեր ՚ի վ՟ր կարողութեանց քոց· մտախոհ լեր ՚ի վ՟ր պիտոյից քոց· և ՚ի վ՟ր զանազան վերաբերութեանց քոց· Այսպէս ուսցիս ճանաչել զպարտաւորութիւնս քո· և առաջնես քեզ մթերս ուղղութեան վ՟ս նմ՟ ճանապարհաց քոց ։

Մի՛ վտանգեր զանձն ՚ի խօսել՝ յառաջ քան զկշռելն զխօսս քո· մի՛ ձեռնամուխ լի-

լինիր 'ի գործ ինչ, բայց եթէ յետ քննելոյդ, թէ զօրպիսի ելս կարիցէ ունել. Այսպէս անարգութիւն 'ի բաց փախիցէ 'ի քէն, այսու օրինակաւ ամօթն օտար եղիցի 'ի տանէ քումմէ. այսպէս զղջումն ոչ մնացէ 'ի դրունս քո. և սոյնգունակ թախծութիւն ոչ գայցէ բնակել 'ի դէմս քո:

Մարդ' որ ոչ մտախոհ լինի, ոչ ունի սանձ լեզուի իւրում. խօսի վարկպարազի. և գտանի թակարդեալ 'ի յիմարուէ խօսից իւրոց. Զոր օրինակ' որ 'ի սրընթաց վազս ընդոստ առնելով անխորհրդաբար զցանգով իւիք, սահի 'ի վտանգ անկանելոյ 'ի խորխորատն, զոր չէր տեսել, այսպէս և մարդ, որ գահավէժս ձեռնարկէ 'ի գործ ինչ յառաջ քան զտեսանելն զհետևութիս նր:

Մատո՛ զունկն քո բանից' խոհմաց. բանք նր են բանք հանճարոյ. և խորհուրդք նր առաջնորդեսցեն քեզ 'ի ճնպհս ճշմարտուէ և երջանկուէ:

# ՀԱՏՈՒԱԾ· Բ·

Պարկեշտութիւն· (ի Դ չափս ոտնից գրեալ:)

Ո՞ես դու ով մարդ, որ անձնահաճ լինիս վ՞ն հանճարոյ քո· կամ ընդէ՞ր պարծիս 'ի վ՛ր գիտուն քո· Առաջին քայլ առ իմաստութիւն է հաւատացուցանելն զքեզ 'ի վ՛ր տգիտուն քո, Ո՞չ կամիս դու համարե՞լ լինել յիմար յայլոց· մերժեա՛ զքեզ յանմիտ նախադատուէ հաւատալոյ զքեզ իմաստուն:
Զոր օրինակ անպաճոյճ իմն հանդերձ առաւելագոյն զարդ է գեղեցիկ կնոջ, այսպէս վայելուչ իմն պարկեշտութիւն է մեծագոյն զարդ իմաստութե:
Խօսք պարկեշտ մարդոյ պայծառացուցանէ զճշմարտութիւն· և ոչ հաւատալն անձին անբասիր առնէ զսխալանս իւր· Ո՛չ ապաստանի յիմաստութի իւր· կշռէ զխորհուրդս բարեկամի· և հանէ անտի զշահ· Խնու զականջս առ բարբառն·

որ հիւսէ նմա զգովեստս. և է հուսկ
յետին 'ի ճանաչել զարդիւնս իւր։
Իսկ արդ ստուերքն, զորս պարկեշտութի
իւր ծաւալէ 'ի վր առաքինութեց իւրոց,
առաւել ես պայծառացուցանեն զնոսա.
ոպ քօղն շարեալ տայ զկենդանագոյն
իմն տեսիլ գեղեցկութեն, զոր ծածկէ։
Նայեաց գիտեա զմարդ սնապարծ և ամ_
բարտաւան, արկանէ զանձամբ զզգեստ
ինչ մեծագին. ելանէ 'ի տեղիս առաւել
բազմամբոխս, հայի ողջոյն շուրջ զիւրև.
և ջանայ ձգել յինքն զհայեցուածս այլոց.
գնայ բարձրագլուխ, և զաչս իւր ոչ խո_
նարհեցուցանէ 'ի վր աղքատի. վարի
դոռոզութբ ընդ վայրագունից իւրոց. բայց
յետոյ նոքա, որք ունին զերէցութի 'ի
վր նր, հային յանմիտ հպարտութի
նր հայեցուածով իմն սպառնայ. Ընդ_
դոմնէ զգաստուն այլոց. և ոչ վստահա_
նայ բայց եթէ 'ի դատողութի իւր,
և զտանի զանձթի հարեն. Որբէն է
ունայնութբ պատկերակերպութց իւրոց.
ախորժէ խօսել և լսել զիւրմէ զօրն ող_
ջոյն. Աւտէ անյագաբար զգովասանս
անձին. և նոյն ինքն յայնմ վայրի լինի
ծաղրանք ստուտակապասից։

# ՀԱՏՈՒԱԾ. Գ.

## ԺՐԱՋԱՆՈՒԹԻՒՆ.

Որովհետեւ անցեալ աւուրք են բնաւին կորուսեալք, եւ այնք, որք գալոց են, թերեւս վ՞ո քո ոչ գուցեն երբէք, պարտ է քեզ փոյթ ունել ով մարդ 'ի գործ ածելոյ զներկայ ժամանակդ առանց գանգատելոյ զկորստենէ անցելոց. եւ առանց հաշիւ առնելոյ կարի իմն 'ի մ՛ի ապագայէն. Այս վայրկեան է քո. այն որ գալոց է գ՛նի, է 'ի խորս ապառնւոյն. եւ դու ոչ գիտես զայն, զոր յառաջ ածելոց է քեզ. Կոտորեա՛ անյապաղ զորոշմունս քո. մի՛ յապաղեր մինչեւ ցերեկոյ զայն զոր կարես առնել յառաւօտու. Դատարկութիւն է հայր կարօտութեան եւ անձկութեան. այլ առաջինական պարապումն բերէ զբերկրութիւն. Ձեռն ճարտարամտի հեռի առնէ զկարօտութիւն. յաջողութիւն ընկեր լինի մարդոյ գործունէի եւ ժրաջանի:

Ո՞վ է նա, որ ստացեալ է զհարստութիւն, որ արկեալ է զիւրև զպատիւ և զփառս, որոյ գովութք հնչէ քաղաքն. և որ կայ առաջի Թագաւորի 'ի խորհրդեան նր. Ա՛յն մարդն, որ արգել դատարկութեն մտանել 'ի խորան իւր. և որ ասաց հեղգութեն, թշնամի իմ ես դու:

Ա՛յս մարդ յառնէ կանուխ. և երթայ յանկողինն անագան. ունի 'ի շարժման զոգի իւր խոկմամբ. և զմարմին իւր աշխատութք. և պահէ զերկաքանչիւր յառողջութեն: Ծո՛յլն ծանրութի է և անձին իւրում, յերեկոյին ասէ. ո՞ արասցէ ինձ տեսանել զառաւօտ, և յառաւօտու ո՞ տացէ ինձ տեսանել զերեկոյ. 'Ի միջէ 'ի միւսում տաղտկանայ. երթայ իբր ընդ քարշ յաշխատանս. և ոչ գիտէ թէ զինչ կամի:

Անցանեն աւուրք նր որպ զստուեր ամպոյ. և ոչ թողու զկնի իւր ոչ զհետս, և ոչ զյիշատակ. մարմին իւր տկարացեալ է առ պակասուն կրթութեն. կամէր գործել. բայց չունի զօրութի շարժելոյ նքն. հոգի իւր մածեալ է խաւարաւ, և խորհուրդք իւր շփոթեալ են. ախորժէր գիտել, այլ ոչ կամէր տալ զանձն 'ի ջանս. փափագի ուտել 'ի պտղոյ ծա-

ծառոյն. այլ ոչ կամի առնուլ յանձն զաշխատանս բողբոջոյ զայն։

Տուն իւր է յանկարգութե. Թագաւորէ անհոգութիւն ՚ի ծառայն նր. ընթանայ ՚ի կործանումն իւր. տեսանէ զայն աչօք իւրովք. և լռէ ակամնջօք. շարժէ զգլուխն. և մաշի ՚ի ցանկութիւն առանց գալոյ յորոշումն ինչ. մինչև կործանումն իւր զպտոյտ պատառէ զնա. և մինչև ամօթն և տհաճութիւնք իջանեն ընդ նմա ՚ի ստոր ՚ի գերեզման։

## ՀԱՏՈՒԱԾ. Գ.

### Նախանձաւորութիւն.

Եթէ անձն քո ցանկացող է փառաց, եթէ ունիլն քո հաճի ՚ի գովասանութիս, ել յոչնչէ, ուստի հանեալ եղեր. և մի դներ քեզ առաջի նպատակ, բայց եթէ զվսեմական առարկայս. Իր երբեմն, զի կաղնին այն, որ այսօր ամբառնայ զգագաթն մինչև յերկինս, ոչ այլ ինչ էր, բայց եթէ կաղին մի թաքուցին ՚ի խորս երկրի։

Փոյթ

Փո՛յթ յանձին կալ առնել զքեզ առա_ջին 'ի կոչման քում. մի՛ թողացուցաներ. թէ որք գեր 'ի վերոյ լինիցին քան զքեզ 'ի գործելն զբարի. մի՛ յաչաղեր զվաս_տակս այլոց. այլ մշակեա՛ զտաղանդս քո: Զգո՛յշ լեր 'ի գործ ածելոյ զանարժան հայթհայթանս առ 'ի խոնարհեցուցա_նել զնախանձաւորն քո. ջանա՛ գերազան_ցել զնոքաւ առաքինութբք. այսու եղա_նակաւ ձգանքն. զորս արարցես առ 'ի յաղթել, եթէ ոչ հասուսցեն զքեզ 'ի ձկտել վախճանն, պերճացուսցեն զքեզ փառօք:

'Ի նախանձաւորութե՛ հոգի առն քաջա_լերի. մնանէ եռանդեամբ յարշաւանս, և կատարէ զուարձութի. ունելով զաչս յառեալ 'ի մրցանակն:

Իբրև զարմաւենի ընդդիմակաց ձեռին, որ թեքէ զայն, զօրանայ ընդդէմ խոչըն_դակաց:

Ձգտի՛ յայն, որ է առնել փառաւոր. զօրէն արծուոյ, որ թռիչս առնու, և յառէ յարեգակն զհայեցուածս իւր:

Գործողութիւնք մեծամեծք արանց յան_դիման առնեն մնաց նց 'ի տեսլեան գիշերոյ. և զբաղումն իւրեանց 'ի տուէ է հետեւող լինել նց:

Կնո_

Կերպաւորէ զանծանօթ գաղափարս . և բերկրի ՚յանձն իւր տեսանել զնոսա վերածել ՚ի վախճան, անուն իւր սլանայ վն այնորիկ մինչև ՚ի ծագս աշխարհի :

Բայց սիրտ յաչաղկոտին լեղի է և դառնութի . լեզու իւր թափէ զթոյն :

Սոյս տուեալ յանձին ինչ , գտանէ անդէն զոտագնաց , որ կրծէ զնա . և բարին այլոց տանջանք է նմա . Ատելութիւն և չարութիւն պաշարել են զնա . և ոչ գիտէ , զինչ է հանգիստ . Ըստ սրտի իւրում , որ ոչ ունի զզգայութի ինչ բարութե , հաւատայ զսիրտ մերձաւորին . Ջուն գործէ ՚ի վայր հարկանել զնա . որք երևելի են քան զինքն . և նմ գործոց նց տայ զմեկնութի իւն չարամիտ :

Կայ ՚ի դարանի . և խորհի զչար . բայց գոլով տաղտկալի մարդկան եւրև զարդ-արտաքսեալ է յատայն իւր :

# ՀԱՏՈՒԱԾ Ե.

## Խոհեմութիւն.

Ո՛ւնկն դիր բանից խոհեմութեան . ուշադիր լեր խորհրդոց նր . և փակեա զնա 'ի սրտի քում . սկզբունք նր են յամ գործս պիտանի . 'ի մի նր յեցեալ կան առաքինութիւնք . Նա է առաջնորդ մարդկային կենաց :

Կա՛պ զերասանակ լեզուի քո . և դիր սանձ շրթանց քոց . լեր նր բանից բերանոյ քոյ առ 'ի անքոյթ առնել զհանգիստ քո : Նա որ ծաղր առնէ զկաղն , զգաստ լիցի քայլել բարւոք ուղիղ . Նա որ խօսի անխորժելով զպակասութեանց այլոց , լուիցէ խօսել զիւրոցն զանոնօք սրտի իւրոյ . Շատախօս լինելն ածէ 'ի զղջումն. ապահովութիւն է 'ի լռութեան :

Մեծ բազմախօսն է հարուած ընկերութեան . Նմա են ունկան տարապայման զզամնմունք նր . այնպիսին է ուղխ իմն , որոյ դրդչիւնն խլացուցանէ զնոսա , որք մերձենան 'ի նա . Մ'ի անձնապանծ լի-

յինէր • քանզի կուտեսցես անարգանս 'ի վր քո • և մի՛ առներ զոք ենթակայ ծառայ • զի վտանգաւոր է այն • Խիստ կատակն է թոյն բարեկամութե • և նա որ ոչ կարէ ունել 'ի չափու զլեզու իւր, չարիք անցցեն 'ը նա :

Ա՛ռ քեզ զամ վայելմունս, որք կարեն պատշաճիլ պայմանի քում • բայց մի՛ տարածեր զծախս քո յայն 'ոմ, զոր Հարստութի քո թողացուցանէ քեզ • այլ զի նախատեսութի երիտասարդուե բերցէ քեզ բաշխերուէ 'ի ծերուե :

Պատաղեա՛ց 'ի գործառնութիս քո • Թո՛ղ զՀոգս տրուփութե նց, որք կոչեցեալ են 'ի կառավարել զայն • Մ՛ի դներ զՀեշտութիս կարի խմն տուգանաւ • վիշտն ստանալոյ զնոսա մի՛ զանցանիցէ զքաղցրուէ վայելմանն :

Լեր զգաստ 'ի յաջողուե , և անօրէն 'ի մէջ առատուե • Նա որ ուտէ որկորաժետուք զաւելորդն , տեսցէ յաւուր միում զինքն բռնադատեալ ցանկալ կարևորին :

Փորձն այլոց իմաստնացուսցէ զքեզ • և ուսի՛ր 'ի սխալանաց նց ուղղել զքոյս : Մ՛ի վստահանար 'ի մարդ որ յառաջ քան զփորձելն զնա • բայց մի՛ ունիցիս կաս_

կասկած զնմանէ առանց պատճառի .
( [illegible] ո՛չ է [illegible] : )

Յորժամ ստուգեսցես զլաւութե՛ան միոյ , փակեա՛ զնա 'ի սրտի քում իբրև զգանձ իմն . և ունիցիս զնա 'ի մեծ յարգի իբր զգոհար անգին :

Հրաժարեա՛ց 'ի պարգևաց յանձնաշահաւէր ձեռանէ . Այն խեղդք . ուստի չէ հնար երբէք ճողոպրել . Մի՛ 'ի գործ արկաներ այսօր զայն' որ քեզ կարևոր եղիցի առ վաղիւն . և մի՛ թողուր զդի_պուածոյ զայն . զոր կարես նախատեսանել և կանխել :

Յայսմ վայրի մի՛ սպասեր , թէ խոհեմութե՛ն քո ապահովացուսցէ քեզ բարի կես . մինչ ոչ գիտէ 'ի տուընջեան , թէ զինչ ծնանիցի 'ի գիշերի . Յիմարն ոչ է միշտ թշուառ , և ոչ իմաստունն միշտ բարեբախտ . սակայն յիմարն ոչ երբէք կալաւ զկատարեա՛լ իմն լիութե՛ի սրտի . և ոչ իմաստունն եղև երբէք բոլորովին տարաբախտ :

# ՀԱՏՈՒԱԾ. Զ.

## Արբեցութիւն.

Վտանգք, ձախորդութիւնք, կիրք և գրկանք դիպելոց են յաւէտ կամ նուազ իւրաքանչիւր ումեք, որ մտանէ յաշխարհս:

Ապա հարկաւոր է քեզ ով որդի թշուառութեան զինել զքեզ կանխաւ արիութեամբ և համբերութեամբ ընդդէմ բաժնի չարեաց, որ սահմանեալ է քեզ:

Ոպ ուղտն կրէ զտառապանս, զտօթ, զքաղց և զծարաւ յանջրդին անապատի, այսպէս արիութիւն վերամբարձ ունիցի զմարդն յամ չարիս իւր:

Որ ունի զսիրտ ազնուական ոչ ընկճի ՚ի չարուէ բախտի. վեհ անձն իւր ոչ երբէք լքանի. Ոչ սպասէ ՚ի զուարթ հայեցուածոյ Նր զերջանկութի իւր. և ոչ ՚ի խոժոռադիմութէ Նր երկնչի. Հաստատուն իբրև գծայռ յափն ծովու. կոծումն ալեաց ոչ կարէ շարժել զնա. իբր աշտարակ կառուցեալ ՚ի վր լերին տեսանէ անկանել առ ոտս իւր զնետս բախտին. Ընդ մերձենալ վտանգին քա֊

Իմաստութիւն վերամբարձ ունի զնա . և համեստութիւն անձին ապա տայ նմա յաղթանակել . Որպէս ընդդէմ չարեաց կենցաղոյս , որ երթայ ՚ի պատերազմ մարտիկ ոք . որ և դառնայ անտի հանդերձ յաղթութ. Ոժէ ձ՚նչեցի՚ի դժբախտուեց , համբերութիւն իւր թեթեւացուցանէ զծանրութիւն նր. և համեստութիւն իւր ազատէ զնա անտի : Բայց անարգութիւն փոքրոգւոյն բարձի թողի առնէ զնա նշաւակութե . պարտին յաղթատուէ անկանի ՚ի մայր . և տանելով անարգաբար թշնամեաց հրաւիրէ զկատակսնս . Տեսա՛ք ինչ դուզնաքեայ չարի դողացուցանէ զնա , և որ թեթև ինչ փչումն օդոյ տատանեցուցանէ զեղէգն . Ի՛ռ ժամ՛ վտանգին չփոթէ՛ խռովի . յաւուր դժբախտութեն ընկձի . և յուսահատութիւն պաշարէ զանձն նր :

## ՀԱՏՈՒԱԾ. Է.

Բաւականութիւն. ( ք ղ՚ ահոյն. )

Մի մոռանար ով մարդ . զի՛ տեղի քո ՚ի մի երկրի սահմանեալ է քեզ յիմա_

տութեն բարձրելոյն. որ ձանաչէ զսիրտ
քո. որ տեսանէ զունայնութիւն ցանկութեց
քոց. և որ յաձախակի վճ խնայելոյն ոչ
կամի անսալ խնդրուածոց քոց, Սակայն
յորժամ բաղձանք քո եղիցին բանա_
ւորք, և ընկերացեալք յառաքինական
գործողութեց, բարութիւն իւր թողացու_
ցանէ զքեզ յուսալ :

Յանհանգստութիւն, զորս զգաս 'ի
զժբախտութիւ աշխարհիս 'ի քէն, զմոռա
ած զաղբերան, ուստի բղխեն. խոր_
հեաց զմոլեգնութիւ քո, զհպարտութիւ
քո. և զըղձութիւ ապակարգ երևա_
կերպութեան քո.

Ապա մի՛ տրտնջեր 'ընդդէմ բաշխողին
բարեաց և չարեաց. այլ ուղղեա զսիրտ
քո. մի՛ ասեր յանձին քում, եթէ լեալ
էր ինձ ձաշակել զքաղցրութիւ հան_
գստեան, եթէ լինէի հարուստ, եթէ
ժամանէի ամբառնալ զիս առ մեծ իշխ
անութիւն, լինէի երջանիկ. Գիտաս_
ջիր, զի իւրաքանչիւր յայսց իրաց առ_
բերէ նմա, որ ստացեալ է զսոյնս. զփուշ
իւր : Աղքատն ոչ զգայ զյուղմունս
մտաց, զոր կրէ փարթամն. և ոչ զվա_
րանս մարդոյ կարգելոյ յարժանաւորութե.
և ոչ ձանաչէ զտաղտկութի հանգստեան.

աստուած զչարն ընդդէմ վիճակի իւրոյ։ Ապա դու մի յաչաղեր ումեք զառերեւոյթ երջանկութիւն իւր․ որովհետեւ չգիտես զգաղտնի սրտմտութիւնս նորա, Յուսակամանայն սակաւուք՝ է հնարք իմն մեծագոյն խոհականութեան․ Նա՝ որ ամեցուցանէ զգոյս իւր, յաւելու զհոգս իւր․ Յուսախանութիւն սրտի է գանձ իմն թաքուցեալ, որ դժուարաւ գտանի։ Եթէ ոչ թողուս զքեզ զառածանել ՚ի հրապուրանաց բախտին, մինչեւ զոհել նմա զարդարութի, զբարեխառնութի, զսէր, եւ զպարկեշտութի, ոչ իսկ աղքատութիւն կարէ առնել զքեզ թշուառական․ Ապա ուսիր, զի բաժակ անապակ եւ անխառն իմն երջանկութե ոչ է պատրաստել վա մարդոյ մահկանացուի․ Ընթացք նշանակեալ յայ մարդոյն է առաքինութիւն․ երջանկութիւն է եզրն․ առ որ ոչ լինի ժամանել, բայց եթէ ՚ի կատարել զընթացսն․ եւ յայնժամ միայն առեալ լինի պսակն։

÷Ա.-

# ՀԱՏՈՒԱԾ Բ.

## Բարեխառնութիւն.

Նա, որում մանաւանդ երկնիցն
( ա՛հ ) զիմաստութ՛ի և զառողջութ՛ի,
առաւել մերձենայ առ երջանկութ՛ի քան
զայլ մարդ կենդանի։
Այսպէս դու յայտնեսիկ օրհնութիւս.
Կամիս պահպանել զայնս մինչև 'ի ծե_
րութ՛ի, խոյս տուր 'ի հրապուրանաց
զգայութե՛, և փախիր 'ի փորձութեց ն՛ր։
Յորժամ պատրաստէ կերակուրս ցան_
կալիս, յորժամ հոսէ գինին շանչելով
յրմպանակ ն՛ր, յորժամ ցուցանէ քեզ
քաղցր իմն ժպտումն, և հրաւիրէ զքեզ
գիրկս արկանել ուրախութե՛, այն է ժամն
վտանգի. է վայրկեանն զգուշ լինելոյ ան_
ձինդ. քանզի եթէ յաջողի պատրել
զքեզ, չէք այլ ևս փախուստ. Հեշտու_
թ՛ին, զոր խոստանայ, փոխի 'ի մոլեգ_
նութ՛ի. և բերկրութ՛իք իւր ածեն 'ի
հիւանդութ՛իս և 'ի մահ։
Հայեա շուրջ զսեղանով իւրով. պշնու_
յանէ աչօքդ 'ի խրախճանաւորս իւր.

 Նկա_

նկատէ զայսոսիկ, որք խայծէլ եղեն 'ի գգուանաց իւրոց, և որք զունկն մատուցին հրապուրանաց իւրոց. Հայեա́ց 'ի նա, ով թէ ոչ թալկացեալք են. նուաղեալք և մաշեալք։

Իւրաքանչիւր վայրկեան փափկութե́ լինի նմ օր մի տրամութե́, սրտնեղութե́, և ցաւոյ. փափուկ հանդերձանք խորտկաց ապականեն են և նուաղեցուցեն զճաշակելիս նմ յայն ատտեճան, մինչ զի ոչ է թողել նմ, մասն ինչ յայնմանէ՝ ես և լմ առաւել ցանկալի կերակրոց. Երկրպագուք կռոց եղեալ են զոհք նմ, իրաւացի գործ և բնական սահմանեալ յոյ 'ի կարգի իրաց առ 'ի պատիժ այնոցիկ. որք զեղծանէին 'ի պարգևս նր։

Նայց ո՞ է նա, որ հանդիսանայ յայսմ զուշտի նազելի տեսլեամբ և բոլորովին կայտառ. 'ի գոյն մարմնոյ նր վառին վարդք. զոյլ առաւօտուն հանգչի 'ի վր շրթանց նր. ուրախութին ընդխառնեալ անմեղութե́ և պարկեշտութե́ երևի յաչս նր. երգէ ցնծուլ. հոգի խաղաղութի թագաւորէ 'ի սրտի իւրում. Նա կոչի առողջութի. է դուստր կրթութե́. և ունի 'ի մայր զբարեխառնութին. որոյ այլ ուստերք օթագային 'ի վր լերանց. որք տա_

տարածին ՚ի հիւսիսային կողմանս սառ-
նա-հոյզեաց ։

Ան զօրեղք և թեթեւք · ունին զշնորհս
և զառաքինութի քեռ իւրեանց ·
Այժմ անձնացուցանէ զշխլս ՚նց · զօրութի
բունել է յոսկերս ՚նց · և աշխատութին
տոյ ՚նց զբերկրութի · Կրթութին զար-
թուցանէ զյօժարութի ՚նց, և բարեխառ-
նութին պահէ զոյժ ՚նց · Մխորժեն
պատերազմիլ ՚ը կրից · և փառս հա-
մարին անձանց յաղթել վատթար ու-
նակութեց · Ջեշտութիք ՚նց են չափաւո-
րեալք , և մ՚ս այսորիկ տեւականք · քուն
՚նց սուղ · բայց անդորր և կազդուրիչ ·
Ունին զարիւն մաքուր , զմիտս յստակ ·
զորոց զբնակարան անդխտանոյ բժիշկն ·
Ջանդերձ այսու ոմիւ որդիք մարդկան
ոչ են եղեալք առ ՚ի վայելել զկատարեալ
իմն անդորրութի · ՚ի ներքս ՚ի տանն նոցա
ոչ գտանի այն ։

Մինչդեռ թշնամի ոմն զօղի ՚ի ներքս
՚ի մատնել զնս , տեսի զնս ՚ի նորանոր
վտանգս եդեալ արտաքոյ · Նոցա առող-
ջութին , ՚նց զօրութին և նոցա գործօ-
նէութին զարթոյց զցանկութիս ՚ի ծոյ
ղեղծ վաւաշտութեան ։

Նստեալ սա յաթոռ իւր խնդրէ յան-

կուցանել զնա առ ինքն . պանծացու_
ցանէ զգեղեցկութիւն իւր . և ակնարկէ նոյ
մերձենալ . Հայեցուած իւր դաշն է .
պաճուճանք նր հրաւիրէ ՚ի հեշտութի ,
խօսի յաչաց իւրոց ցանկութին . վերա_
նայէ ՚ի ծոց իւր փորձութին . շնորհք
են ՚ի վ՛ր լեզուի նր .

Ո՜հ ՚ի բաց փախիր ՚ի գրգռչաց նր .
խցեա զականջս առ պատրողական զրոյցս
նր եթէ դիպեցիս յաչս նր լցելո քաղցր
խանդակաթութք , եթէ առ հրապուրիչ
ձայն բարբառոյ նր զկայ առցես , եթէ
հասցէ նա ՚ի նուաճել զքեզ ՚ը իշխա_
նութ իւրով , շղթայեսցար միշտ . Ողիցին
հեռաւորք իւր ամօթն , հեզանդութիք .
կարօտութիւն , անհանգստութիւնք և
զղջումն . Թօշնել ՚ի ծուլուէ . տկարա_
ցել ՚ի զեղխուէ . խանգարել յանկար_
գուեց . լքցէ զօրութի զանգամս քո .
առողջութին զխառնուած քո . համա_
րեսցես աւուրս սակաւս , և այն լի ՚նա_
խատանօք . տառապանութիք քո , եղիցին
բազմապատիկք . և ոչ գտցես զոք . որ
շարժիցի ՚ի կարեկցուի քեզ ։

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

## ԿԻՐՔ.

## ՀԱՏՈՒԱԾ Ա.

### Յոյս և երկիւղ.

Խոստմունք յուսոյ են քաղցրագոյնք . և առաւել փութացուցանեն զանձկալութիւնն , քանթէ փեձեկ վարդին, յորժամ սկսանի փթթիլ . բայց սպառնալիք երկիւղին վհատեցուցանեն զսիրտն . Մինչ մի երբեք ստուգապատմութիւնք յուսոյ՝ կամ արհաւիրք երկիւղի նախանձեցեն զքեզ 'ի գործելոյ զուղիղն :

Յուսու օրինակաւ եղիցիս պատրաստական առ 'ի ընդառաջ ելանել զուգամասութիւ 'ամ գիպուածոց. Զարհուրանք ևս և մահու մի՛, որանց բարեաց ոչ են

զարհուրանք․ ոչ ունի երկնչել, որ ոչ առնէ զչար ինչ ։

Յամ գործառնութիս քո բանաւոր իմն վստահութի պնդեսցէ զմ՛տս քո․ եթէ յուսահատ լինիցիս զյաջողուէն, մի հանցես 'ի գլուխ այնպ դիւրակի ։

Մի՛ զարհուրեսցի հոգի քո մտօք երկիւղիւ․ պատրանք երեւակայութե մի՛ դաղացուսցեն զմիտ քո 'ի ներքս 'ի քեզ ։

Երկիւղն առնէ անկանիլ 'ի դժբախտութիս․ բայց որ յուսայ, հաստատուն կայ ։

Օ՛ր օրինակ Ջայլամն 'ի հետամուտ լինելն որսորդաց թագուցանէ զգլուխն թողլով զայլ բոլոր անդամն 'ի վտանգի․ այսպէս վատասիրտն մտանէ լինի յահէ իւրմէ ։

Մ․ն, զոր դու հաւատաս անկարելի, եղիցի այնպիսի վ․ թերահաւատուե քո․ բայց յարատեւութե գերակայ լինիցիս ամ խոչընդակաց ։

Սուտ յոյսն շողոմէ զմիտ յիմարին․ բայց իմաստունն ոչ թողու զառածանիլ ։

Նանն կանոնաւորեսցէ զամ յօժարութիս քո․ յոյսք քո եղիցին իմաստնապէս չափաւորեալք, այնպ խորհուրդք քո ու-
նի-

նեցեն զբարի ելս . և տատանմնական եր֊
կիւղն սխալելոյ ոչ վտանգնեսցէ զոգի քո :

## ՀԱՏՈՒԱԾ . Բ.

### Ուրախութիւն և տրտմութիւն .

Բարւոք զգոյշ լինիցիս ընդդէմ յափշտակմանց ուրախութեան . և մի թողուր զքեզ ընկղմիլ 'ի ցաւոյ . Աշխարհս ոչ մատակարարէ բարիս այնպէս քաղցունս, և ոչ ունի չարիս այնչափ դժնեայս . մինչև 'ի բաց շարժել զոգիդ 'ի բնական վիճակէ իւրմէ :

Հայեաց 'ի զուարճ օթեւան ուրախութեան . այն յօրինեալ է արտաքուստ նկարուք : Անդէն դեր աղաղակոց բազմութեան խմբի մտոյ արբեցելոյ բերկրութեամբ և գինեաւ :

Տխրուհին կայ առ դրան . բարբառ իւր որ հնչէ . լսելի լինի 'ի շարունակ երգս և յանչափաւոր ծիծաղս . Կոչէ զանցաւորս . յորդորէ զնա մտանել և ճաշակել զբերկրութիւս կենաց . աստէն և եթ , ասէ , կարեն գտանիլ նոքին :

Բայց

Բայց դու մի՛ անցաներ ըստ սեամ դրան նր. և մի՛ ընկերակցիր ընդ նմա, որք յաճախեն ՚ի տուն նր. Նուաճնին նոքա որդիք ուրախութե. ծիծաղին. և երեւի, թէ լողայցեն ՚ի բերկրանս. բայց բովանդակ գործողութիւնք իւրեանց ոչ այլ ինչ են, բայց եթէ ցնորք և մոլեգնութի: Ախտաւորութիւն է կայն, որ մխաւորէ զնա. և քայլք նց գահավէժս ընթանան առ չարն. Կան ՚ի մէջ վտանգաց. և անդունդք եղծման բանին ՚ի ներքոյ նց առ ՚ի կլանել զնա:

Արդ՝ դարձո՛ զհայեցուածս քո ՚ի միւս կողմն. և նշմարեա՛ յայսմ հովիտի ծածկեցելոյ ՚ի հովանեաց ծառոց և թաքուցելոյ ՚ի տեսուէ մարդկան՝ զօթարան տրտմութե. Միտ իւր ծանրացեալ է հեծութիւք. ոչ ուշ դնէ այլում իմիք, բայց եթէ թշուառութեց ազգի մարդկան. Նշմարէ մտադրութբ զամենական պատահմունս կենաց, և ողբայ. տկարութի և խեղաթիւրութի մարդկան են նիւթ անընդհատ խօսից իւրոց. Բովանդակ բնութիւն երեւի նմա շրջապատեալ ՚ի չարեաց. ոչ տեսանէ զառարկայս, եթէ ոչ աչօք ծածկեցելովք քօղով սեաւ հիւթոյ իւրոյ. և ոչ այլ ինչ բան լինի ՚ի

'ի բերանոյ իւրմէ , բայց եթէ բարբառք զանգատականք :

Ա՛ն մերձենար 'ի մեհարան նր · շունչ իւր տարափոխիկ է · ցամաքեցուցանէ զծաղիկս , և այրէ զպտուղս · որք են զարդ և զուարձութիւնք պարտիզին կենաց :

Ոտն քո մի խալեսցէ զքեզ , 'ի խուսելն 'ի բնակուէ ուրախութե և 'ի մտաւոր տեղեաց օթեվանէն թախծուէ կայ խնամով զմիջին ձուհ · որ առաջնորդեսցէ քեզ ուղիղ առ անդորրութիւն · Ընդ որում բնակին խաղաղութիւն , աներկեւանութիւն և բերկրութիւն · եթէ զուգասցես զայն , բերցես յանձին զզուարթութիւն առանց լինելոյ թախծեալ · և հայեսցիս հաւասար աչօք 'ի յաջողուածս և 'ի ձախողուածս :

Յայնժամ անդորր օթեւանէ նկատեսցես իբր 'ի բարձրուէ իմեքէ զայնոսիկ , որք բնաւին անձնատուր լինին յանկարգ բերկրութիւնս · և զայնոսիկ , որք ծախեն զաւուրս իւրեանց յողբս 'ի մէջ դժբախտութեանց կենացս · Հայեսցիս կարեկցութեամբ 'ի յիմարութիւն և յողորմելութիւն նոյ · և զարտաղութիւնք նոյ ուսուսցեն քեզ պահպանել զերջանկութիւն քո :

# ՀԱՏՈՒԱԾ. Գ.

## Ցասումն . կամ բարկութիւն .

Որպէս փոթորիկն խորտակէ զծառս, և տգեղացուցանէ զերեսս բնութեան, կմ որպ երկիր սասանումն՝ խռովէ քաղաքս ողջոյն կործանէ, այսպ կատաղութիւն մարդոյ ՚ի ցասման սփռէ զչարիս յամ կողմն. վտանգն ընկերակցի . և եղծումն զհետ երթայ նմա մերձ ՚ընդ մերձ . Բայց մտախոհ լեր , և մի՛ մոռանար զտկարութիւն քո . զի ներեսցես այլոց զպակասութիւնս: Մի՛ տար զանձն քո ՚ի ցասմնոտութիւն . այս է սրել զսուր առ ՚ի խոցել զլանջս քո . կամ յարձակել ՚ի վր բարեկամի քո . Եթէ տարցես համբերութեամբ թեթև ինչ նախատանաց , համարեսցի այն քեզ ՚ի խոհեմութիւն . և եթէ ջնջեսցես զայն յուշոյ քումմէ , սիրտ քո ոչ յանդիմանեսցէ զքեզ վ՛ա այնորիկ:

Ո՛չ տեսանես , զի մարդն ՚ի բարկութեան կորուսանէ զբանականութիւն իւր. օրինակ օտարին եղիցի քեզ վարդապետ . մինչդեռ տեւէ կիրքն , մի՛ առներ ինչ .

ինչ․ ընդէր կամիս դնել զքեզ 'ի ծովու,
յորժամ այնպ տարապայման յուզեալ է
'ի մրրկէ․ Եթէ դժուարին է տիրել
բարկու՛է, իմաստութի՛ իմն է կանխել
քան զայն․ ապա խոյս տուր յո՛մ պատ-
ճառաց այլայլելոյ զքեզ․ կամ եթէ ոչ
կարես զայն․ զգոյշ լեր 'ը դէմ նոյ․ Մր
ոչ ունի զհանճար գրգռել 'ի սրտմտու-
թի՛ 'ի լեզուէ լրբաց․ բայց մարդ խո-
հական ծիծաղի զնովաւ․ և անգոսնէ
զնա ։

Մ՝ի տար ապնջականութի՛ վրէժխնդ-
րուէ 'ի ծոցի քում․ լինիցի այն տան-
ջանք սրտի քում․ և ո՛չ ճաշակեսցէ
զլաւագոյն յօժարութի՛ս ։

Լեր միշտ առաւել պատրաստ 'ի ներել
քան 'ի հատուցանել թշնամանս 'ը թշնա-
մանաց․ նա, որ հետադօտ լինի առ 'ի
գտանել պարապ առնլոյ զվրէժս․ լարէ
որոգայթս անձին իւրում․ և ձգէ զդժ-
բախտութի՛ս 'ի գլուխ իւր ։

Ո՝ր օրինակ ջուր, որ արկանի 'ի վ՛ր
հրոյ, շիջուցանէ զջերմութի՛ն, այսպէս
հաճոյական պատասխանին հանդարտե-
ցուսցէ զմարդն բարկացեալ․ և եղիցի այն-
պէս, զի սիրեսցէ զքեզ, որ փոքր մի
յառաջ ատեայր․ Քննեա՛ թէ ո՛րքան սա-
կաւք-

կաւք լցեն երբեն, որոց մի արժան էցէ բարկանալ մարդոյ. և զարմասցիս, թէ բաց յանմտաց լցեն ես այլք, որք կարեցեն տալ զանձինս 'ի ցասումն:

Բարկութին սկսանի միշտ կմ՛ 'ի յիմարութէ կմ՛ 'ի տկարութէ. բայց յուշ լցի քեզ. և լեր քաջաստոյգ. թէ ցանցաղկի, ատարօխ բարկութին առանց զղջման. 'Ի վ՛ր հետոյ մոլեգնուէ բերէ ամօթն. զկնի ցասման կայ տրտմանք:

## ՀԱՏՈՒԱԾ Գ.

### Կարեկցութիւն.

Որպէս ազդումն գարնան զարդարէ զերկիր ծաղկօք, և ոպ բարերար ջերմունք ամառան հասուցանեն զհունձս, այսպէս կարեկցութիւնն բերէ որդւոց թշուառութե զմխիթարութի և զերկրութի:

Նա, որ վշտանայ 'ի վ՛ր չարեաց այլոց, արժանի լինի, զի և այլք արգահատեսցեն յիւրմն. բայց մարդ՝ որ ոչ ունի զկարեկցութի, չէ արժանի:

Սիրտ մարդոյ անողորմի ոչ թողու շար-

ժել

ժիլ 'ի նեղուէ օտարին . ով բառաչել գաւին ոչ կասեցուցանէ զբազուկ փողատոզին զնա ։

Արտասուք մարդոյ գործակալանի են քաղցրագոյնք քան զցօղ գարնայնոյ . Սպա՛մի՛ խնուր զականջ քո առ բարբառ կարօտելոյն , և մի՛ խստացուցաներ զսիրտ քո առ տարաբախտուի անձեղուէ . Յորժամ որբն դիմէ առ քեզ , յորժամ այրին ընկձի 'ը բեռամբ Թշուառուեց , և ցաւագին արտասուօք աղերսէ զնպաստաւորուԹի քո , գԹա՛ 'ի վ՛ր վշտացն՛ր . և տարածեա՛ զձեռն քո առ նոսա , ոյք ոչ ունին , որ 'ի Թիկունս հասանիցէ նոցա ։

Ընդ տեսանելն զոք , որ ոչ ունելով զհանդերձ ծածկելոյ . դողայ 'ի ցրտոյ , և ոչ ունի , ուր դիցէ զգլուխ իւր . սիրտ քո բացցի , աղէք քո խառնեսցին , որա՛ , զի ողորմելին այն 'ը Թևօք սիրոյ քո կացցէ առ 'ի պատսպարել 'ի մահուանէ . ով զի կեցցէ անձն քո . մինչ հիւանդ ոք հեծէ 'ի մահիճս չարչարանաց , մինչ աղքատն ընկղմանեալ 'ի վ՛ր աղբեաց Թուրոց նուաղի ձ՛նչել 'ի Թշուառուէ , մինչ ծերն տկարացել 'ի չորեաց հասակին , դարձուցանէ առ քեզ

զաչս

զաշտ խարխաշուելս ու 'ի խնդրել 'ի քէն զուաձեան նպաստ, զի՞րդ կարես առանց ուշ դնելոյ պէտոյից նց, առանց խանդաղատելոյ 'ի վ՛ր աղէտից նց կեալ 'ի մէջ փափկունց, որոնել ջանիւ զդիւրութիւս. և տալ զանձնդ յանշափ ցոփութիւս:

## ՀԱՏՈՒԱԾ Ե.

### Ցանկութի և սէր.

Օգո՛շ լեր բարեոք ո՜վ երիտասարդ. զգո՛շ լեր 'ի հրապուրանաց լկտի կնոջ. և մի թողուր զքեզ գրաւել յողոքանաց շափազանց հեշտութեց. որք լինիցին քեզ թանկագինք յոյժ: Անշափաւոր ցանկութիք ոչ այլ ինչ ծառայեսցեն, բայց եթէ 'ի կործանումն սեպհական վախճանաց քոց. և հետևելով կոյր բերման բնութեդ, փութասցուցես զկործանումն քո:

Ապա մի թողացուցաներ զսիրտ քո 'ի քաղցրութիւս կախարդիչս անարգ հեշտութեն. եթէ պատրողական տարազուք խերովք հասանէ 'ի շղթայել զանձն քո, արագ սպառելով առողջութեդ, տես—

ցես ՚ի սուղ ժամանակի ցամաքեալ զաղբիւր
հեշտուե՛ց քոց :

՚Ի գարնան աւուրց քոց զգասցես ՚ի քեզ
խոնարհել զօրութ՛եցդ , և ծերութ՛ին
հասցէ յանկարծակի ՚ի վ՛ր քո ՚ի ծաղկի
հասակիդ :

Կին մի գեղեցիկ , ընդ որոյ գեղեցկութ՛ն
պարկեշտութ՛ի և առաքինութ՛ի ընթոր-
դեալ իցեն , փայլէ առաւել քան զաս-
տեղս հաստատութ՛ե . և չէ հնար ընդդէմ
կալ բռնութ՛ե հրապուրանաց ն՛ր . Պաղ-
պաջ ծոցոյ իւրոյ գերագանցէ զպլխա-
կուք շուշանաց . և ժպտումն իւր առաւել
բերկրալի է քան զբուրաստան իմն մար-
դկց :

Անմեղութ՛ի վերանստի յաչս իւր , ո՛պ
յաչս տատրակի . միամտութ՛ի և յըս-
տակութ՛ի բնակի ՚ի սրտի ն՛ր . Համ-
բոյրք բերանոյ ն՛ր են քաղցրագոյնք
քան զմեղր . շրթունք իւր համեմատին
հոտով խնկոցն արաբիոյ :

Մ՝ի լինիր անզգայ առ խանդակաթութ՛ի
սիրոյ . մաքրութ՛ի բոցոյ ն՛ր ազնուա-
ցուսցէ զսիրտ քո . և պատրաստեսցէ
զնա առ ՚ի ընդունել զքաղցրագոյն տպա-
ւորութիւնան :

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ։

## ԿԸ։

Ո՛ւնկնդիր ո՛վ դուստր սիրոյ ընթերցուածոց խոհեմութե․ և պատուէրանք ճշմարտութեան մտցեն մինչև 'ի խորս սրտի քո․ այսու օրինակաւ զարդարանօք ոգւոյդ՝ տացես նազելի իմն փափկութիւն գեղեցկութե քո․ և յորժամ ծաղիկն թարշամեսցի , դու պահեսցես զշնորհս նր։

'Ի գարնան հասակի քո , յարշալոյս աւուրց քոց , յորժամ մարդիկ ակնարկեն 'ի քեզ , և յորժամ բնութիւն զանխաբար մեկնէ քեզ զհայեցուած նց , ո՛հ լեր շրջահայեաց ընդդէմ կործանման խօսից նց , բարւոք պաշտպանեա՛ զսիրտ քո․ և մի տար տեղի շողոմական հրապուրից նոցա։ Յուշ լիցի քեզ , զի հատեալ եղեր առ 'ի լինել ընկեր առն․ և ոչ գերի կրից նր․ ոչ միայն առ 'ի հաճել զցանկութիս նր, այլ և առ 'ի բերել սփոփանս վշտաց նր․ առ 'ի փոխարինել զիջմանց նր ,

նր, և առ 'ի քաղցրացուցանել զվիճակ
նր զեղմամբք խանդակաթ սիրոյն ։

Մի՞ է կնին, որ շահի զսիրտ առն. որ
տիրէ նմա և նուաճէ զնա ընդ սիրով .
Ն՝ հաւանեկ որ ձեմէ յուշիկ քաղցր եղա-
նակաւ անմեղ անձամբ, պարկեշտ դիմօք ։
Ձեռն իւր խնդրէ զզբաղումն . ոտն իւր
ոչ սիրէ ընթանալ այսր անդր ։

Զգեցեալ է զքաղաքականութի՛ . սնեալ
է ողջախոհութե՛ , խոնարհութի՛ւն և պար-
կեշտութիւնն կերպացուցանեն զգլխով
իւրով իբր զպսակ փառաց ։

Ձայն խօսից իւրոց խոցէ շնորհալի՛
զունկն . քաղցրութի մեղու հոսեն 'ի
շրթանց նր . Վայելչութի և անու-
շակութի թագաւորեն 'ի բոլոր զրոյցս
իւր ։

Հպատակութի՛ն և հնազանդութի՛ն են
ընթերցուածք , յորոց մ՛ի կանոնաւորէ
զկեանս իւր. խաղաղութի՛ն և երջանկու-
թի՛ն են փոխարէնք իւր ։

Խոհականութի՛ն երթայ նմա առաջի .
և առաքինութի՛քն կան նմա առ եբի ։
Պարզութի և յստակութի են յաչս
նր . ընտրողութի հրամայէ բանից և
գործոց նր . Զոփն ակնածէ 'ի նմանէ .
և ոչ համարձակի խօսել առաջի նորա ։

Յորժամ զրպարտութիւն յարձակի 'ի գիշատել կատաղաբար զհամբաւ ընկերին, նա ունի զկողմն 'նր. կամ եթէ ոչ գոյ հնար ջատագովելոյ զնա, լռիկ կայ. Քանզի բարութի բնակի 'ի սրտի իւրում, և ինքն ոչ կասկածի յայլս չար ինչ:

Երջանիկ այրն այն. որ ունիցի զնա կին. և երջանիկ որդին. որ կարդասցէ զնա մայր. Արթուն կայ նա 'ի կառավարութի տանն. և անդ է խաղաղութի. հրամայէ բանաւորաբար. և է հնազանդութի. Յառնէ ընդ առաւօտն. խորհի զառանին գործառնութեան. և բաշխէ իւրաքանչիւր զպարապումն, որ նմա անկ է. Գնէ զբոլոր բերկրութի իւր 'ի փոյթ մտածութե գերդաստանին. այսմ և եթ միտ դնէ. 'ի բնակութե իւրում ամ՛ ուրեք տեսանի ծայրագոյն իմն յարդարումն և հանճարեղ տնօրէնութի:

Խոհեմութիւն, որով կանոնաւորէ զկրս տան իւրոյ, դառնայ 'ի պատիւ առն իւրոյ. և նա հաճի 'ի ծածուկ ընդ գովութիւս, զորս լսէ զնմանէ:

Նու զսիրտ որդւոց իւրոց իմաստուց և ըստ բարուց օրինակի իւրոյ կերպաւորէ զվարս 'նր. Բան բերանոյ իւրոյ

է

է նոյ օրէնք . շարժումն աչաց իւրոյ կանոնաւորէ զհնազանդութի նոյ . ինքն խօսի , և նք որք ծառայեն նմա , սըլանան առ կարգաւորութիւն նր . ակնարկէ նոցա , և նքա կատարեն . սէրն և քաղցր և հեզահամբոյր եղանակ զնր տան նոյ թեւս :

Յաջողութիւն ոչ հպարտացուցանէ զնա . և համբերութիւն մատակարարէ նմա հնարս առ՝ի ոչ ընկճիլ ՝ի ձախորդութիւս . Սիր իւր գտանէ ՝ի խորհուրդս նր սփոփանս տատամնութեց իւրոց . քաջալերութիւ ՝ի դժբախտութիւս իւր մն արգահատութեն . որով մասնակից լինի վշտաց նր . գնէ զվստահութի իւր ՝ի ծոց նոյ , և է մխիթարեալ . Երջանիկ այրն . որ էառ զնա ՝ի կին . երջանիկ որ ունի զնա ՝ի մայր :

# ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ.

## Ազգականք կամ Արենակիցք.

### ՀԱՏՈՒԱԾ Ա.

#### Այր.

Առնլով քեզ կին՝ ունիցիս առաջի աչաց զհրամանս ոյ, և մի՛ ՚ի բաց թողուցուս զմիջոց իմն լինելոյ հաւատարիմ անդամ ընկերութեան։

Բայց մի՛ որոշեր զքեզ անխորհրդաբար և շտապաւ. յընտրութեան կնոջ, զոր դու առնիցես, կախի երջանկութիւն կենաց քոց։ Եթէ կինն, որում ցանկաս, ծախէ կարի շատ ժամանակ ՚ի պճնել զինքն. եթէ նա զմայլեալ իցէ ընդ գեղեցկութիւն իւր. եթէ ունկն դնէ ախորժանօք գովասանական բարբառոյ. եթէ ծիծաղի տարապայման, և խօսի կարի բարձրաձայն. եթէ ակամայ հանդուրժէ կալ ՚ի տան. եթէ յառէ համարձակ զհայեցուածս ՚ի մարդիկ. թէ և գեղեցկութիւն իւր իցէ այնչափ ճառագայթարձակ, որչափ արեգակն յառաւել լուսաւոր պայծառութեան իւրում, դարձո՛ զհայեցուածս քո ՚ի

՚ի հրապուրանաց նր , և զբայս քո ՚ի
շաւղաց նր . և մի՛ թողացուցաներ զսիրտ
քո զառածանել ՚ի պատկերակերպութե՛ :
Գտեր դու զմի ՚ի նոցանէ , որ հաճոյ
իցէ քեզ , և որոյ շնորհք իցեն ընկե_
րացեալ ՚ի յըստակութե՛ խորհրդոց , և ՚ի
քաղցրութե՛ բարուց , և որ ունիցի զոգի
բարի , ա՛ռ զնա քեզ ՚ի կին . նա ար_
ժանի է լինելոյ քեզ սիրելի և ընկեր :
Հայեա՛ց ՚ի նա իբր ՚ի պարգև իմն երկ_
նից . այնպէս վարեսցիս ընդ նմա , զի
պարտաւորեսցի սիրել զքեզ :
Նա է տիրուհի տան քո . կա՛լ զնա ՚ի
մեծարանս , որպ զի ընտանիք քո ակնա_
ծիցեն կարգաւորութե՛ց նորա :
Մ՛ի ընդդիմանար առանց պատճառի առ
այն , որում ցանկայ նա . նա է մաս_
նակից վշտաց քոց , իցէ եւ բաժանորդ
բերկրութե՛ց քոց . Յանդիմանեա՛ զնա քաղց_
րութբ . մի՛ պահանջեր խստիւ հնազան_
դել քեզ . Ի նա՛ զծոց նր աւանդարան
գաղտնեաց քոց . կարես վստահանալ յան_
կեղծութի խորհրդոց նորա . և գտցես
զքեզ հաճոյ զնմանէ :
Եղիցես նմա հաւատարիմ . վ՜զի է նա
մայր որդւոց քոց :
Յորժ լիցին քեզ ( առ ՚ի լինել զիջանող

առնս, ) տկարութիւն սեռի իւրոյ և սեպհական անկատարութիւնք քո։

## ՀԱՏՈՒԱԾ Բ

### Հայր.

Դու, որ ես Հայր, մտախոհ լեր 'ի վ՚ր ծանրութե գրաւականին. որ քեզ հաւատացաւ. քո է պարտականութիւն մատակարարել 'ի սնունդ նց, որոց ետուր կեանս։ Արդարև գքեն կախի լինելն զաւակիս գորովոյ քո վ՚ն քո ենթակայ իմն օրհնութե կամ անիծից, և լինելն քաղաքացի պիտանի կամ վնասակար։ Դաստիարակեա զնա 'ի սկզբան անդ գնացից իւրոց. ընտելացո՛ կանխաւ զմիտս նր ճշմարտութե. և զսիրտ նր առաքինութե։

Ունիցիս զաչս 'ի վ՚ր յօժարութեց իւրոց. և հետազօտեա հանապազ զմիտմունս իւր. Յերեա զնա 'ի մանկութե իւրում. մի Թողլ տար աճել 'ի նմա վատթար իմն սովորութե ընդ ամացն։

Նոյնպէս ամբարձցի 'ի բարձունս իւր

զմայր

զմայր իմն 'ի վ՛ր լերանց . և զգագաթն
իւր երևեցուցէ 'ի վ՛ր ծառոց անտառին ։
Որդի անզգամ՝ նախատինք է հօր իւրոյ .
որդի իմաստուն փառք է նր . Ո՞ր է գե-
տինն . մի խնայեր նմա զմշակութի .
ըստ չափու սերմանն ժողովեսցես ։
Ուսո՛ որդւոյ քո լինել հնազանդ , և
օրհնեսցէ զքեզ . ուսո՛ նմա լինել պար-
կեշտ , և ոչ հարկեսցի շառագնել ։
Ուսո՛ նմա լինել երախտագէտ , և եղիցի
'ի շնորհս . ուսո՛ նմա լինել գթասէր ,
և ձգեսցէ յինքն զսէր ։
Ուսո՛ նմա լինել ողջախոհ , ( այսինքն .
բարեխառն ) և վայելեսցէ 'ի բարւոք
առողջութե . ուսո՛ նմա լինել խոհեմ , և
կեցցէ երջանիկ ։
Ուսո՛ նմա լինել արդար , և եղիցի պատ-
ուեալ յաշխարհի . ուսո՛ նմա լինել
անկեղծ , և սիրտ իւր ոչ արասցէ նմա
զատգտանս ինչ ։
Արա՛ , զի ուսցի լինել ժրաջան , և հաստ-
տութիք իւր աճեսցեն . զի ուսցի լինել
մարդասէր , և ունիցի սիրտ ազնուա-
կան ։
Հրահանգեա՛ զնա 'ի գիտութիս , և
եղիցի պիտանի աշխարհի . կրթեա՛ զնա 'ի
կրօնի , և մահ իւր եղիցի նախանձելի ։

Հ Ր.—

# ՀԱՏՈՒԱԾ Գ.

## Որդի.

Երթիցեն մարդիկ յանքան ստեղծուածոց ընդունել զընթերցուածս իմաստութե . երթ ո՞չ որդեակ իմ յանապատ . նկատեա՛ զարագիլն , և ինքն խօսեսցի 'ի սիրտ քո , թէ որքան մտադիւր 'ի թիկունս հասանէ ծերութե նր , որ եռանդամ կեանս . Առանձնական լինել ծնողաց իւրոց . սնուցանէ զնոսա . տանի զնա 'ի մ՛ջ թեւոց . Լինէի՛ր երբեք ապերախտ առ Հայր քո . նմա պարտիս զկեանս . առ մայր քո . նա սնոյց զքեզ . Ունկն դիր բանից Հօր քո . զոր ինչ ասէ քեզ՝ է 'ի բարիս քո . մտօ՛ զունկն յորդորանաց նր . նա առնէ զայն քեզ . վ՛ս զի սիրէ զքեզ :

Նա հսկեաց 'ի մ՛ջ աւուրց քոց . տառապեցաւ առ 'ի առնել զքեզ երջանիկս . ապա պատուեա՛ զալիս իւր . և մի պակասեցես յախնածութե , որ առնս , յառաջել ծերութե Հասակին :

Տա՛ր ծնողաց քոց , յորժամ անցեալ իցեն զաւուրբք . օժանդակեա՛ նց , և հա՛ 'ի թի_

Թիկունս տկարութե՛ նց · Որքան գործով դարմանեցին զքեզ 'ի մանկութե քում · որքան եղեն նոքա առ քեզ նեցողք յե֊րիտասարդութե քում ։

Գեղեցիկ իմն է տեսանել զորդիս հա֊տուցանել ծնողաց զայն որ պարտ է նոցա · Այս տեսարան է առաւել հա֊ճոյական քան զհոտ կնդրկի, որ այրի 'ի վ'ր սեղանոյ · առաւել հեշտալի քան զբուրումն ընտիր ընտիր խնկոց ։

Ապա պատուեա զհաւակս ծննդեան քո · իջուսցես խաղաղութ՟ զալիս նց 'ի ստոր 'ի գերեզման · և որդիք քո վարդապե֊տեալք յօրինակէ քումմէ, հատուսցեն քեզ նմին իրի հաւասար իմն փոխարէն ։

## ՀԱՏՈՒԱԾ · Դ·

### Եղբարք ·

Դուք որդիք էք միոյ հօր · նա հոգա֊ցաւ զպէտս ձեր հաւասարապ · և նոյն մայր ետ ձեզ կաթն · Կապանք գորովոյ ունիցին զձեզ միաւորեալ · որզի խաղաղութ և երջանկութի արասցեն օթեվանս 'ի տան հօր ձերոյ ։ Եթէ գտանիցէք հեռի 'ի մի֊

միմեանց յիշատակ արենակցութեան ձերոյ պարտաւորեսցէ զձեզ սիրել զմիմեանս . և մի նախադասիցէք զօտար ոք արեան ձերոյ : Օգնեա եղբօրն 'ի ձախորդութիս . և մի բարձի թողուր անտէր զքոյր 'ի վիշտս :

Այսու օրինակաւ կեցէք ամենեքեան միաբան զպտուղս աշխատանաց Հօր ձերոյ և ձեր եւս որդիք ուսցեն զորդիսն :

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

Յառաջատուութիւն , կամ պատաՀական տարբերութիւնք մարդկան .

### ՀԱՏՈՒԱԾ. Ա.

Իմաստունք և տգէտք .

Իմաստութիւն է պարգև իմն աստուածեանութենն 'ոյ . Նա յայտ երկնաւոր զանձ որոշէ խորշանչեր ումեք զայն բաժին, զոր գտանի պատշաճական : Նա ճոխացուցց զքեզ իմաստութիւ . Նա լուսաւորեաց զմիտս քո պէսպէս ճանաչմամբք. Հաղորդեա զայն տգիտաց 'ի քո Հրահան_

հանգու՛ն նոյ . իմաստնոց մն սեպհական զարգացման քո ։

Ճշմարիտ իմաստութի՛ւն ոչ է յանձնապաստան . Իմաստունն տարակուսի ստէպ և փոխէ զկարծիս . յիմարն յարեալ է ՚ի կարծիս իւր . և ոչ երկբայի բնաւ . տեղեկացեալ է ամի բաց ՚ի ագիտութէ իւրմէ ։

Հպարտութի խօսողի գովեցելոյ յամ ճանաչմանէ է զզուելի նմն . բայց իմաստունն հանդուրժէ նմա . և կարեկից լինի մն այնորիկ ։

Մ՛ի հաւատար ուշաց քոց . և մի պարծիր բնաւ ՚ի վ՛ր խորին իմաստութե քո . պարծանք մարդոյ , որչափ և լուսաւորեալ իցէ , ոչ այլ ինչ է , բայց եթէ կուրութի և յիմարութի . Իմաստունն ճանաչէ զանկատարութիս իւր . և յայնմանէ առնու առիթ խոնարհելոյ . ընդունայն է ջանալ հաճել զանձն ։

Յիմարն , յորոյ աչս ամբարտաւան կարծիքն , զոր ունի ինքն զընդունակութե իւրմէ , երևեցուցանէ զառարկայս առաւել մեծս . պաշտէ զծնունդս իւր . համբաւէ իբր գլուխս գործոյ . և հաւատալով գովութեց զարմացողաց նմանեաց իւրոց՝ անձնապանծ լինի . Պարծի գիտել զայն ,

զայն, որ չէ ինչ պիտանացու առ գիտութի. և ոչ գիտէ զայն, զոր ագիտանալն է ամօթ։

Գտանէ զեղանակ զարտուղելոյ նաև 'ի ճանապարհի իմաստութե. նմինլրի ապա ոչ ժամանէ 'ի նպատակն. և ոչ այլ ինչ պտուղ ընդունի յաշխատութե իւրմէ, եթէ ոչ անարգանս։

Իմաստութիւնն զարդարէ զոգի իւր ճանաչմամբք. նախանձաւոր լինի յառաջադիմութե արհեստից. և առնելով զնոսա պիտանացուս հասարակաց, տանայ անձին անուն փառաւոր։

Մ՛իշտ նկատէ զփոյթ առաջինութե իւր առաւել ծանրակշիռ. և զգիտութիւն, զոր ուսուցանէ առ 'ի լինել երջանիկ իւր առաւել արժանի մտադրութե իւրում։

## ՀԱՏՈՒԱԾ Բ.

### Հարուստք և աղքատք.

Մ՛արդն, որում ած բաշխեալ է փարթամութիւս, և զգօնութիւս առ 'ի բարւոք 'ի կիր առնուլ զայնս, ընկալեալ է զսեպհական իմն երախտիս։

Յն_

խնդայ մի լինելոյն փարթամ . մի զի հարստութիք իւր մատակարարեն նմա միջոցս առնելոյ զբարի . Պաշտպանէ զաղքատն հարստահարեալ . ոչ հանդուրժէ ձնշելոյ տկարին 'ի հզօրէ ։ Հետազօտէ , թէ ոյք կարեկցութեան իցեն արժանի . տեղեկանայ զպիտոյից նց . կարկառէ նց սփոփանս առանց սնապարծութեան և հանդերձ ընտրողութ ։ Ջատագովէ զվաստակն , և փոխարինէ . քաջալերէ զճարտարմութիւն , և գործակից լինի առատաձեռնութ առ բարի եւս պիտանի գործառնութեց ։

Այնու է զմեծս առ մեծամեծ գործս . խորհի առ նորանոր հիմնարկութիւս . պարապեցուցանէ զգործաւորն . յառաջացուցանէ զարհեստս . և զուն գործէ փարթամացուցանել զհայրենիս իւր ։ Հայի 'ի յաւելուածս սեղանոյ իւրոյ իբրև յերաւունս աղքատաց . և ոչ ներէ զրկել յայնցանէ . Ճոխութիւն ընչիցն ոչ այլայլեաց զբարերար հանգամանս սրտի իւրոյ . նմին իբր յարգի ունի զլինելն փարթամ . և 'ի մէջ ճոխութեան վայելէ 'ի մաքուր խղճ բերկրութ ։

Նայց թշուառական է նա . որ բազմացուցանէ զհարստութիւս իւր . և որ ոչ

ճա_

Ճանաչէ զայլ բերկրութի, բայց եթէ ունելոյն զայնս. որ ճնշէ զաղքատն. և ոչ համարի ինչ զքրտունս երեսացնց:
Աչին ամբոխեն զնա աղէտք ընկերի իւրոյ. տեսանէ անարտօսր աչօք զարտասուս որբոյն. և խնու զունկն առ հառաչանս այրւոյն:
Սեր փարթամութեց խստացոյց զսիրտ նր. մինչան առաւել զատն ոչ է բաւական առնել 'ի նմա զապաւորութի ինչ:
Բայց անէծք հալածեն զնա. այնպիսին է 'ի հանապազորդ զարհուրանս. ագահութի ըղձից իւրոց խոշտանգէ զնա:
և այսպէս առնուն զվրէժ անիրաւութեն, զոր արարեալ է նա տառապելոյն:
Ո՜ինչ են թշուառութիք աղքատուէ առ կրծմամբ սրտի մարդոյս.
Մխիթարեսցի բա՝ աղքատն. նազի ուրախ լիցի, զի ունի բիւր պատճառս ուրախութե. Ուստէ զհաց իւր խաղաղու. և ոչ ունի զսեղանով իւրով շուրջ զողոքորթս, որք կլանիցեն զինչս նր. ազատ է 'ի զբաղանաց պահելոյ զմեծ բազմութի ստացուածոց. ոչ լինի պարտասեալ ձանձրացուցիչ ժամանք:
Ուրքն 'ի փախուկ կերակրոց մեծատանց՝ ոչ է ենթակայ հիւանդուեցնց.

հացն , զոր նա ուտէ , ո՛չ է քաղցր քմաց իւրոց ։ Ջուրն , զոր ըմպէ , ո՛չ շիջուցանէ հեշտութեամբ զծարաւ իւր ։ զգայ նա զմեծագոյն բերկրութիւն յըմպելն ՚ի ջրոյ յայսմանէ , քան զոր զգայ հարուստն յըմպելն զգերցանկալի գինիս ։

Աշխատութիւն պահէ նա զառողջութիւն իւր և պատրաստէ ինքեան զքուն այնպիսի , զորոյ զքաղցրութիւն որ կայ ընկողմանեալ ՚ի փափուկ փետուրս ոչ ժամանէ ճանաչել ։ Խոնարհ ՚ի ցանկութիւն իւր ։ զորս ամփոփէ յանձկագոյն սահմանս իւր ։ և անդորրութիւն, յոր վայելէ, անցանէ զանցանէ զբերկրութիւն ։ զոր բերէն փարթամութիւնք և մեծութիւնք ։

Ապա մի պարծեսցի հարուստն վն ճոխութեց իւրոց ։ և մի վն թշուառութե իւրոյ աղքատն վհատեսցի ։ քանզի եթէ համաձայնեսցին խորհրդոյ յառաջատեսութեն երկոքեան գտցին երջանիկ ։

## ՀԱՏՈՒԱԾ. Գ.

### Տէրք և ծառայք ։

Մի՛ գանգատիր ո՛վ մարդ ։ վն զի հարկեալ ես ՚ի ծառայել ։ այս պայման ,

զոր յառաջատեսութիւն սահմանեաց քեզ · ունիս զշահս իւր ։ Նա հեռացուցանէ զքեզ 'ի հոգոյ և 'ի տատամսութեանց ապրելոյ ։

Փառք ծառային է հաւատարմութիւն · հպատակութիւն և հնազանդութիւն են վսեմական առաքինութիւնք իւր ։

Ապա տո՛ւր համբերութիւն աղաչարարութեց ան քո, և յորժամ յանդիմանէ զքեզ, մի՛ տար պատասխանի · Հեզաբարոյութի քո և լռութի ոչ եղիցին 'ի մոռացօնս արկեալք ։

Սրտիմտօք խնդրեա զշահս նր · լե՛ր փոյթ 'ի կատարել զակնարկութիս նր, առ զքեզ արժանաւոր վստահութեն · զոր եդեալ է 'ի քեզ ։

Մինինա իրաւունս 'ի մի ժամանակի քո և 'ի մի աշխատութե քո հատուցանէ քեզ · ոզղի 'ի գործ ածցէ զքեզ 'ի ծառայութի իւրում · եթէ ոչ առնես զայն, խաբես զնա ։

Եւ դու ո՞վ ես, լե՛ր արդար առ ծառայն քո, եթէ կամիս զնա հաւատարիմ · Լե՛ր բանաւոր 'ի հրամանսն, զոր տաս նմա, եթէ կամիս զնա պատրաստական առ հնազանդութի · Մարդ է և նա · խստութի կարես այս՞ երկեցուցանել, այլ ոչ զի սի-

սիրեսցէ զքեզ · Նմա զի խրատ քո լիցէ ընկերակցին 'ի քաղցրութե́ , և իշխանու́իդ-յեցեալ 'ի բանականութե́ , այսու օրինա-կաւ յորդորանք քո տպաւորեսցին 'ի սրտի. և գլուխն պարտուց իւրոց զուարճութ́ի համարեսցի անձին ։

Ծառայեսցէ քեզ հաւատարմութ́ք յաղագս երախտագիտութե́ն · ըղձասցի առ հրամանս քո սկզբամբ ախորժանացն. և դու մի թողուցուս մանաւորել հաւատարմութե́նդ և ժրաջանութե́ն զպարտուպատշաճ տրիտուրն ։

## ՀԱՏՈՒԱԾ Դ.

### Թագաւորք և Հպատակք ։

Ո՛հ դու երախտաւորեալ յերկնից , զոր որդիք մարդկան հաւատարք քո ամ-բարձին միաբան առ գերագոյն իշխա-նութ́ի . և զետեղեցին 'ի վը գլխոյ իւր-եանց իբր առաջնորդ ; փոքր համարեա՛ զգերակայ արժանաւորութ́ի քո քան զվախ-ճանն և զմեծութ́ի աւանդին ; որ քեզ հաւատացաւ ։ Դու զգեցեալ ես ծի-րանի , և նստեալ 'ի վը աթոռոյ փա-

ւաց · տանիս 'ի վ՛ր ծանկատու զթագ մեծավայելչութե · դաւաղան իշխանութե կայ 'ի ձեռին քում :

Բայց յուշ լիցի քեզ · զի գերագոյն իշխանութիւն նշանակեալ այսուքիւք հանգանակօք ոչ է տուեալ քեզ վ՛ն քո , և ոչ վ՛ն ծառայեցուցանելոյ քեզ զայն առ 'ի հաճել զցանկութիս քո · Դու ոչ առ այլ ինչ ես Թագաւոր , բայց եթէ առ 'ի հոգալ զբարին Թագաւորութե քո · Յաջողութի նր վերածի 'ի փառս քո , և սիրտ հպատակաց քոց է նեցուկ իշխանութե քո · է խարիսխ ինքնակալութե քո : Հոգի արքայի մեծի բարձրացեալ լինի 'ի գերակայութե անձնոյն · խորհի իրս մեծամեծս, և ո՛չ զբաղի, բայց եթէ յայն , որ է նմա արժանի · Գումարէ զիմաստունս Թագաւորութե իւրոյ · խորհուրդ հարցանէ նց · և ունկն դնէ կարծեաց նց · զոր իւրաքանչիւր ումեք Թողացուցանէ տալ ազատօրէն · Աչօք ընտրողութե որոնէ 'ի մէջ հպատակաց իւրոց անձինս ընդունակս · ճանաչէ զտաղանդս նց , և 'ի գործ արկանէ ըստ արժանեաց իւրեանց :

Իշխանք իւր են արդարք · Սպասաւորք իւր խոհականք · և ոչ որ է 'ի շնորհս իւր խաբէ զնա · Հայի քաղցր աչօք յարհեստս .

հեստս · և ծաղկեն · Գիտութիւք ընդ պաշտպանութք որ ունէին զերջանիկ յառաջադիմութիս · Հաճոյ է նմա գտանել յընկերուէ գրաւորաց , և ողելի անձանց · վառէ ՚ի սիրտ նց զնախանձ · և առնէ աշխատութիւք նց փառաւոր զորքայութի իւր ։

Խրախոյս և փոխարէնս առնէ վաճառականէն · որ ընդարձակէ զառաւելութի իւր · Աշակէն , որ արդաւանդացուցանէ զանդս իւր · Արհեստաւորին , որ ՚ի գործ ածէ ճարտարմութ՛ · Գրաւորին · որ որոշի բարի ծննդեամբք մնաց իւրոց ։

Հինէ զնոր հաստուածս · պատրաստէ նաւս · առնէ նաւարկելի զգետս · շինէ զնաւահանգիստս · Ժողովուրդ իւր փարթամանայ · և զօրութիք թագաւորուէ իւրոյ երթալով երթան և աճեն ։

Կանոնաւորութիք իւր են լի արդարուք · հպատակք իւր վայելեն ՚ի խաղաղութ պտուղ աշխատանաց իւրեանց · և երջանկութի նոցա գոյանայ ՚ի հնազանդութի օրինաց ։

Հինէ զդատաստանս իւր ՚ի մի գթութե · բայց անվթար է ՚ի պատժել զյանցանս առանց աչառելոյ ումեք · Ականջ իւր բաց է առ բողոք հպատակաց իւրոց ·

Կասեցուցանէ զբազուկն, որ ձեռնարկէ ճնշել զնա, և ճողոպրէ զնա 'ի նոցանէ. որք վարեն զնա խստութբ։

Դամին երբ ժողովուրդ իւր յարգէ զնա իբր պաշտպան հրեշտակ իւր, և սիրէ զնա իբր զհայր իւր. Մերն, զոր հպատակք իւր ունին առ նա, ծնուցանէ 'ի սիրտ նոցա զփոխարէն նմին գորովոյ առ նա. երջանկութի նց է առարկայ խոկմանց իւրոց. Ոչէք որ գանգատեցի զնորմանէ, և ոչ որ զարան գործեցէ նմա. Հպատակք իւր շուրջ կան զնովաւ իբր պարիսպ պղնձի. հաւատարիմք և պատրաստք 'ի ջատագովել զզատ արքայի իւրեանց. առաջի նց տա՛ զօրք թշնամեաց փախչին իբր զգնտակ մղեալ 'ի հողմոյ։

Ուր բնակէ այս ժողովուրդ, բնակեն անդ նոյնից խաղաղութիւն և երջանկութիւն, աթոռ այսր արքայի է միշտ շուրջ փառօք և զօրութբ։

# ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ։

## Պարտականութիւնք ընկերութեան.

## ՀԱՏՈՒԱԾ Ա.

### Մարդասիրութիւն.

Յորժամ ո՛վ որդի մարդոյ խորհես զպիտոյս քո, յորժամ ակն արկանես առ անգամ մի յանկատարութիւս քո, ճանաչես զբարութիւն Նր՛, որ պերճացոյց զքեզ բանականութ՟. որ ճոխացոյց կարողութ՟ խօսելոյ. և որ սահմանեաց զքեզ կեալ յընկերութեան առ 'ի ընդունել և փոխատրել զփոխադարձ օգնութիւնս և զծառայութիւնս։

Կերակուր, հանդերձ, բնակութիւն, աներկեւանութիւն, քաղցրութիւնք և հեշտութիւնք կենաց ամենեքեան են օգուտք. զոր դու պարտիս օգնականութեան այլոց. և առանց կապոյ ընկերութեան դու ոչ կարէիր վայելել 'ի նոսա։

Ապա պարտական ես լինել սիրող ազգի մարդկան. և պարտ է քեզ փոյթ ունել յանկուցանելոյ 'ի քեզ զսէր մարդկան։ Որպէս յատուկ է վարդի բուրել զհոտս ա-

անոյշս․ այսպէս մարդ որ գիտէ լինել մարդ, գործէ բնութբ իւրով առաքինօրէն:

Նա անդորր ՚ի ներքս յինքեան, և վայելէ ՚ի յաջողութե և յերջանկութե մերձաւորի իւրոյ․ Ոչ մատուցանէ ունկն չարախօսութե․ մոլութիք և վատութիք մարդկան վշտագնեն զնա․ Ոչ ցանկայ այլում իմիք․ բայց եթէ բարերարել․ և որոնէ զառիթն նր․ բերէ սփոփանս անձին զերծուցանելով ՚ի հարստահարութե զեղբայր իւր:

Բարեկամութի իւր տարածի առ ամ մարդիկ, առարկայ ուխտից իւրոց է հասարակաց նց երջանկութի․ և ազնուականութի սրտի նր յորդորէ զնա առնել զամ ձիգն առ ՚ի հոգալ զայն վնոցա․

## ՀԱՏՈՒԱԾ․ Բ․

### Արդարութիւն:

Արդարութի ընկերութե հիմնեալ է ՚ի վր արդարութե․ երջանկութի մասնաւորաց ՚ի վր խաղաղական վայելման ստացուածոց իւրեանց․ Արդա պարփակեալ

գցան-

զցանկութիւս սրտի քո ՚ի մէջ կապարաց չափաւորութք . և լինիցին կանոնաւորեալք յարդարուէ . Մ՛ի հայիր աչօք ագահութե յինչս հաւասարաց քոց . համարեա՛ նուիրեալս ՚ոյ որինչ պատկանի նոցա :

Ոչինչ կերք անկանոն , ոչինչ անկրաւութի ընկալեալ յափշտակեսցէ զքեզ ամբառնալ զձեռս ընդդէմ եղբօր քո հանդերձ վտանգաւ կենաց նր :

Մ՛ի աղօտացուցաներ զհամբաւ նր . մի՛ աներ ընդդէմ նր սուտ վկայութիւս . Մ՛ի փորձեր ապականել զծառայ նր . և զգոյշ լեր ՚ի հրապուրելոյ զկին նր առնել չար . Արասցես ՚ի սիրտ նր վէրս այնպիսի . զոր ոչ երբէք մարթասցիս բժշկել . արասցես նմա անիրաւութի իմն . զոր ոչ երբէք կարասցես վճարել :

՚Ի կցորդութե կենաց լեր անկեղծ և արդար . արա մարդկան զայն , զոր կամեիր , թէ նոքա արասցեն քեզ . Պահեա՛ յամ խոս զհաւատարմութի . մի մոռաներ , որ վստահանայ ՚ի քեզ . Լեր հաւաստի , թէ առաջի ՚ոյ փոքր յանցանք է գողութին քան զմատնութին . Մ՛ի ճնշեր զաղքատն . և մի նենգեր գործաւորին զվարձ իւր . Յորժամ վաճա_

ռեսցես

ռելոց ես երբ ինչ խորհրդածեմ ընդ խեղձ՛ մտաց քոց, և շատացի՛ր չափաւոր ինձ շահու. մի՛ շահեցից 'ի տղխտուէ գնողին. Հատո՛ զպարտս քո. որովհետև Նա, որ ետ քեզ փոխ. հայեցաւ 'ի պատիւ քո. է անարգ ինձ, միանգամայն և անկրաւ ոչ հատուցանելն փոխատուին բուռն զայն, որ պարտի Նմա:

Քննեա՛ ո՛վ դու, որ կեաս յընկերութե, զսիրտ քո. կոչեա՛ զքեզ յօգնութ՛ի զյիշողութ՛ի քո, և եթէ գտանես զքեզ պակասեալ յիմիք յայսց գլխոց. արա՛, զի ցաւն և զղջումն եկեսցեն քեզ 'ի սատարութ՛ի. շառագնութ՛ին ծածկեսցէ զքեզ. և վաղվաղակի և ըստ բոլորին, եթէ կարող ես, վճարեա՛, և ջնջեա՛ զյանցանսն քո:

## ՀԱՏՈՒԱԾ Գ.

### Սէր.

Բախտաւոր Նա, որոյ 'ի ծոցէ մնանէն սերմանք բարեկամութե. յորմէ հաւաքեսցէ պտուղ զգութ և զսէր. Իբր աղբիւր բեղմնաւոր, որոյ ջուրք ոռո-

գա-

դանեն զանդս, եւս եւ զհեռաւորս. այս-պէս բարեսիրտ սորա յայտնի ՚ի գործս. որոյ առողջարար հոսմունք ՚ի վ՛ր մարդ-կային ազգի ծաւալին:

Առընթեր կայ աղքատաց ՚ի թշուառու-թե՛ նց. ոչ դատապարտէ զմերձաւորն. ոչ հաւատոյ յաչաղանաց, եւ ոչ չա-րամտութե՛, եւ ոչ կրկնէ զզրպարտանս նոցա:

Շնորհէ զանիրաւութիս, եւ ջնջէ զայն յուշոյ յիշատակաց. չարութի եւ յա-չաղանք ոչ ունին տեղի ՚ի սրտի նր. ոչ փոխարինէ զանիրաւութի. ոչ ա-տեայ զոք. եւ ոչ իսկ զթշնամիս իւր. փո-խանակ անիրաւութեցն, զոր առնեն նմա, քաղցրութի ազդ առնէ նոցա:

Նեղութիք եւ վիշտք մարդկան շարժեն զգութ նր. ջանայ թեթեւացուցանել զծանրութի դժբախտութեց նց. եւ հա-ճոյութի բարեյաջողութեն հատուցանէ զաշխատանս նր. Մեղմացուցանէ զսրտմ-տութին եւ կոծոպէ զկագ զայրացողին. եւ կանխէ քան զմահահոտ հետեւութիս խե-թի եւ ատելութե:

Թագաւորեն շուրջ զնովաւ միաբանու-թի եւ խաղաղութի. անուն իւր է միշտ բարգաւաճեալ օրհնութ եւ գովութի:

— Ա. —

# ԳԼՈՒԽ Դ.

## Երախտագիտութիւն:

Ո՛ր օրինակ ՚ի տեղանց ծառոյն դառնայ հիւթն յարմատն կոյս, ուստի վերելեալն էր, կամ որպէս գետն թափէ զջուրս իւր ՚ի ծովն, ուստի ելեալ էին, այսպ՛ մարդ երախտագէտ բերկրի յանձն իւր ՚ի հատուցանելն զընկալեալ բարերարութիւն:

Աստուածանի ազնուականագոյն զպարտականութիւն, զոր ունի առ բարերարն իւր. համարի զնա և սիրէ. և եթէ ոչ կարէ ցուցանել զերախտագիտութիւն գործով, գէթ պահէ զյիշատակ նր:

Ձեռն առն ազնուականի է իբրև ցօղ երկնից. որ անկանի ՚ի վ՛յ երկրի. և առնէ ընձիւղել և աճել զբանջարս, զծաղկունս և զպտուղս. բայց սիրտ ապերախտին նմանի աւազոտ հողոյ. որ ըմպէ զանձրև առանց յառաջածելոյ երբէք ինչ:

Մ՛ի յաչաղէր բարերարին քում. մ՛ի

ոչ-

աշխատ լինիր թմաչուցանել զերախտիսնր. քանզի թէպէտ առաւել քաղցր է առնել շնորհս քան ընդունելն զայն , թէպէտ ազնուականութի՛ն զարթուցանէ զզար_մացումն , սակայն խոնարհ վերաձանա_չումն ընդհարկանի 'ի սիրան . հաճոյ է նյ և մարդկան :

Ս՛երժեա զպարգևս անբարտաւանին . և արա զի մի լիցես պարտական յիմիք առ ագահն . քանզի նա 'ի գործ ածէ զբա_րերարութի իւր առ 'ի յամօթ առնել զքեզ . և ագահութի սորա ոչ մնասցէ երբէք շատացեալ փոխարինմամբ իւիք:

## ՀԱՏՈՒԱԾ . Ե

### Անկեղծութիւն .

Ո՛վ դու որ սիրես զճշմարտութի . և որ զարմանաս ընդ գեղեցիկ ձիրս նր . ա՛ղէ մի թողուցուս երբէք զայն , եթէ ունիցիս միշտ զայն սիրելի , պսակեսցես զքեզ փառօք . Ա՛յր անկեղծ ունի միշտ զսիրտն 'ի վ՛ր լեզուին . 'ի խօսս իւր ոչ դտանի ո՛չ կեղծաւորութի , և ոչ նեն_գութի :

Սա_

Ստութիւն շառագնէ զնա, և շփոթէ.
բայց յասել զճշմարտութիւն ոչ զանգիտէ
բնաւ. վերամբարձ ունի այրաբար զար-
ժանաւորութիւն անուան իւրոյ. ոչ դիտէ
նուաստանալ առ 'ի զգենուլ զդէմս կեղ-
ծաւորի. է միշտ միակերպ ինքեան և ոչ
երբէք շփոթի. է քաջասիրտ յասելն
զճշմարտութիւն. և երկնչի միայն 'ի ըս-
տելոյ:

Անարժան համարի ինքեան զանարգու-
թիւն կեղծաւորութեան. Բանք բերանոյ իւրոյ
յայտնեն զխորհուրդս իւր:

Ոչինչ հակառակելով այսմ բանայ ըզ-
շրթունս իւր զգուշութբ և խոհեմութբ.
խոկայ զայն, որ է իրաւացի. և կշռէ
զամ խօսս. Դնէ զկարծիս իւր առանց
մանուածոյ. և կշտամբէ զով ոք և իցէ
ազատութբ. ըստ անթերի որչափ խօս-
տանայ:

Բայց կեղծաւորն ունի զսիրտ սուտ.
մինչդեռ ոչ խորհի. բայց եթէ առ
'ի խաբել, ծածկէ զասացուածս իւր
ճշմարտութեան դիմակաւ. Ծիծաղի 'ի
տրտմութեան. և լայ յուրախութեան. և ոչ
կարէ տալ ոք բանից նր մեկնութիւն ինչ:
Որպէս խլուրդ գործէ 'ի խաւարի. և
հաւատայ զինքն յապահովի. բայց յան-

կար-

կարծակի ըմբռնեալ զերթ զխլուրդ 'ի լուսոյ, ծանուցանի և մատնի:

Անցուցանէ զաւուրս իւր 'ի բռնական արգելանի միում • լեզու իւր և սիրտ իւր առեն փոփոխակի • Տառամնի ստանալ զանուն առն պատուականի • և զովէ ինքնին զյաջողակութիւն, զոր դնէ 'ի գործն մի յանգ հանելոյ:

Ահ յիմար • փոյթն, զոր դու առնես մի թաքուցանելոյ որ ինչ ես, է յոյժ մեծագոյն քան զայն, զոր պիտոյ էր քեզ 'ի գործ ածել մի լինելոյ իրապէս այն, որ դու կամիս երեւել • Արդէք խոհականութեան ծաղր արասցեն զարուեստակութի քո յորժամ կողոպտեալ 'ի քօղոյն, որ ծածկէր զքեզ, տեսցես զքեզ 'ի խայտառակութէ:

## ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ:

### Կրօն •

Ո՛չ գոյ, եթէ ոչ մի 'ած՝ սկզբնապատճառ՝ հաստիչ՝ կանոնաւորիչ աշխարհի • ամենակարօղ՝ յաւիտենական՝ անբովանդակելի:

Արեգակն ո՛չ է ՚ած. Թէպ և է ազնուա_
գոյն պատկեր ՚ածութե : Այս մոլորակ
լուսաւորէ զաշխարհ լուսով իւրով. զօրա_
ցուցանէ ջերմութե՛ իւրով զբերս երկրի.
Օ արմայնր ընդ նա, երբև ընդ արա_
րած և գործի բարձրելոյն. բայց զգո՛յշ
լեր յերկիրպագանելոյ նմա :

Երկրպագութի՛ն, գովութի՛ն և շնոր_
հակալութի՛ն պատշաճի՛ն նմա միայնոյ.
որում՝ միայն ներքոյ անկեալ են բոլոր
իրք. և որ է միայն բարերարութի և
միայն իմաստութի. Նա է, որ ձեռամբ
իւրով արար զերկինս. և մատամբ իւրով
եցոյց աստեղաց, թէ զո՛ր ընթացս պարտ
էր նոցա ունել :

Նա, որ հաստատեաց զսահմանս ով_
կիանոսի. յորմէ և անդր ոչ դիցէ զոտն
երբէք. Նա, որ լնեցուցանէ զատուել
սպառնական մրրիկս. Որ սասանեցուցա_
նէ զերկիր. և զողան ազգք. որ արձակէ
զշանթս, և շարք զարհուրին յոյնմանէ.
Որ միով բանիւ բերանոյ իւրոյ հաս_
տեաց զաշխարհս, և հաւասար դիւրու՛
դարձուցանէ զնա յառաջին չքութի՛ն.
Մտածեա՛ ՚ի մեծվայելչութե՛ ամենակա_
լին. և մի՛ շարժեր զբարկութի նր,
եթէ ո՛չ կամիս նեղքոյ անկանել շա_

րաչար արտադործուեց վրէժխնդրուենդ.
Ա՛ծ ցոլացուցանէ ՚ի վ՛ր ա՛մ գործոց
իւրոց զխնամս. Ուղղէ զա՛մ ինչ և կա-
ռավարէ զա՛մ իրս անսահման իմաս-
տութ՛ն ։

՚Նա հաստատեաց զօրէնս մ՛ն բարւոք
կառավարութ՛ն աշխարհի. սքանչելաբար
պէսպիսացոյց զայն ըստ ընդունակութ՛ն
իւրաքանչիւր էակի. յորոց իւրաքանչիւրն
բնականաբար յարմարի առ կամս նորա ։
՚Նա է ա՛ծ հզօր. ա՛ծ գիտուե՛ց և իմաս-
տութ՛ի իւր ոչ ունի զչափ. Գաղտնիք
ապագային կան նորա առաջի. Խոր-
հուրդք սրտի քո ոչ են ծածկեալ ՚ի
նմանէ. Ճանաչէ զորոշմունս քո յառաջ
քան զգոյանալ նց. Հայելով ՚ի նախա-
գիտութ՛ին ա՛յ ոչ ինչ հանդիպի դիպ-
ուածով. և չէք ինչ պատահական նկատ-
մամբ յառաջատեսութ՛ե իւրոյ ։

Եղանակն, որով Ճանաչէ նա զա՛մ իրս ,
գերազանցէ զիմացմամբ մերով. Յա՛մ
Ճ՛պհս իւր սքանչելի է. խորհուրդք իւր
են անքննելի. Ա՛պա հատո՛ զհարկ իմաս-
տութ՛ե ա՛ն տիեզերաց. ընկեա զքեզ
առ ոտս ն՛ր այնու յարգութ՛ք, խոնարհութ՛ք
և հնազանդութ՛ք, որք պատշաճին նմա ։
Բարերար է ն՛ր. հաստեաց զաշխարհ

սկզբամբ միով բարութեան · որ յայտնի յամենայն գործս իւր · Նա է աղբիւր և կեդրոն ամենայն կատարելութեան :

Գործք ձեռին նորա հրատարակեն զպարգեւս իւր · օգտութիւնք նորա պատմեն զգովութիւն իւր · Նա զգեցուցանէ զնոսա գեղեցկութեամբ · սնուցանէ զնոսա և պահպանէ յազգէ յազգ · Եթէ ամբարձցուք զհայեցուածս յերկինս , յայտնէ մեզ զփառս նորա · եթէ խոնարհեցուսցուք զայն յերկիր · լցեալ է բարերարութեամբ նորա · բլուրք և հովիտք երգեն և ցնծան · դաշտք , լեառք և անտառք գոչեն զգովութիւնս նորա :

Բայց դու ով մարդ տրտմեալ եղեր 'ի նմանէ յայլոց արարածոց , ամբառնալով զքեզ 'ի վերայ նոցա · Ճոխացոյց զքեզ բանականութեամբ առ 'ի դնել զքեզ 'ի կայս պահելոյ զաւագութիւն քո · պերճացոյց զքեզ կարողութեամբ խօսելոյ առ 'ի կատարելագործել զքեզ յընկերութեան նմանեաց քոց · ետ քեզ միտս ընդունակ խորհելոյ, առ 'ի ամբառնալ զքեզ 'ի հայեցումն կատարելութեանց իւրոց , և առ 'ի հրաւիրել զքեզ յերկրպագութիւն իւր :

Յօրէնսն , զորս նախագրեալ է 'ի կանոն կենաց քոց , այնչափ բարութեամբ յարմարեալ զպարտն առ բնութիւն , մինչզի հնա-

զան-

զանգելն պատուէրանաց Տ՛ր առնէ զքեզ
երջանիկ. Գովեմ երգովք գոհութե՛ց զբա-
րութ՛ի Տ՛ր. և խորհեաց ՛ի քեզ ինքեան
զսքանչելիս սիրոյ Տ՛ր. առատասցի սիրտ
քո երախտագիտութ՛ն որ առ նա. լեզու
քո հրապարակեսցէ զգովեստ Տ՛ր. գոր-
ծողութ՛իք կենաց քոյ տացեն ճանաչել.
թէ որքան սիրով բերէս առ օրէնս Տ՛ր ։
Ուղիղ է ՛նր և բանաւոր. դատեսցի
զաշխարհ յարդարութե և ՛ի ճշմարտութե.
՛Ի մ՛ր բարութե և գթութե հաստատեալ
է զօրէնս իւր. ուրեմն ո՞չ ունիցի պատ-
ժել զյանցաւորս. մի՛ խորհիր ո՛վ
մարդ յանդուգն, թէ բազում ՛նն պար-
տասեալ իցէ, մ՛ն զի յապաղէ զպատիժ քո.
և մի՛ խաբէր զքեզ յուսով անտես առ-
՛նելոյ ՛նյ զյանցանս քո. Ա՛կն նորա ընդ-
մտանէ ՛ի գաղտնիս սրտից. ո՛չ առնու
ակն երեսաց ։
Արձակեալ ոգին ՛ի մահկանացու զգես-
տուց իւրոց. մեծամեծք և փոքունք հա-
րուստք և աղքատք, իմաստունք և տգէտք
ամենեքեան մնալ հասարակաց դատա-
ւորի իւրեանց ընկալցին զիրաւացի և
զյաւիտենական հատուցումն գործոց իւ-
րեանց ։
Յայնժամ չարագործք ըմբռնեսցին ՛ի

սարսափմանէ նր և 'ի զարհուրմանց . բայց սիրտ արդարոց ցնծասցէ 'ի դատաստանս տն :

Արկեր յայ զնմ աւուրս կենաց քոց . և գնա ընդ ձայնս նր . Խոհեմութիւն խորհրդատու լիցի քեզ . բարեխառնութիւն սանձահարեսցէ զքեզ . առաջնորդեսցէ քեզ արդարութիւն . Սէրն ջերմացուսցէ զսիրտ քո . երախտագիտութիւն առ ած սնուսցէ զածպաշտութի քո :

Արթութիւն առաքինութեցս այսոցիկ արասցէ զերջանկութի քո յառաջիկայ պայմանի քում . և ածցէ զքեզ առ մեծագոյնն յաւիտենական երանութե յօթեւանին փառաց . Այս է ճշմարիտ տնօրէնութի մարդկային կենաց :

## ՎԱԽՃԱՆ ԱՌԱՋՆՈՅ ՄԱՍԻՆ:

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

Մարդն նկատեալ ընդհանրապէս:

## ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

Կերպարան և կազմուած մարդկային.

Տկար և տգէտ՝ որպէս եսդ ով մարդ, խոնարհ՝ որպէս պարտ էր լինել ով որդի հողոյ. կամի՞ս ժամանել առ ՚ի ծայրն իմաստու-թեն. կամի՞ս տեսանել զամենակարո-ղութին պարզեալ առաջի քո. հայեա՛ց ՚ի քեզ ինքն:

Հիանալի և զարմանալի է կազմուած քո. օրհնեա՛ զհաստիչն քո երկիւղիւ, և ցնծա՛ առաջի նր պատկառանօք:

Ընդէ՞ր յամ արարածոց դու միա-

կանգնեալ ես, եթէ ո՛չ զի կարողա_
ցիս տեսանել զգործս իւր. և ընդէ՞ր
կարօղ ես տեսանել, բայց եթէ առ 'ի
զարմանալ ընդ այնս. և առ իմէ՞ զար-
մանաս, բայց եթէ առ 'ի երկրպա_
գանել նմ և քո արարչին:
Ընդէ՞ր իմացումն եդեալ է 'ի քեզ միայն.
և ուստի՞ ածանցի այն 'ի քեզ:
Ոչ է մարմնոյ խորհել. ոչ է ոսկերաց
տրամաբանել. Առիւծն ոչ գիտէ, թէ
որդունք կերիցեն զնա. և ոչ եզն նա_
խատեսանէ սնուցեալ լինել վասն սպան_
դանոցի:
Իր ինչ բազմօք զանազան յայնմանէ,
զոր տեսանես, լծակցեալ է ընդ էութե
քում. որ և շնչաւորէ զմարմին քո,
վերնագոյն քան զամ առարկայս ըզ-
գայութեց քոց. Հաւանիկ՝ որ ինչ է այն:
Մարմինն վերամնոյ ամբողջ յետ ելից
նր, վ̄նկ ոչ էր մասն նր. է աննիւ_
թական. ուրեմն է յաւիտենական. է
ազատ 'ի գործել. ուրեմն պարտական է
տալոյ պատասխանի վ̄ն գործողութեց իւրոց:
Ճանաչէ՞ էշն զպէտս սննդեան, որով
ատամունք իւր քաղեն զխոտ. կամ կա՛յ
կոկորդիլոսն ուղիղ. Թէպէտ և ողն իւր
'ցէ ուղիղ, ոչ գրոյն:

Ո՛Ճ

Ա՛ծ ստեղծ, եթէ զքեզ և եթէ զայլս զայսոսիկ. յետ այսր ամի հաստեցար դու. վերնագոյնութե և հրամանատարու ի տուեալ քեզ 'ի վր ամենեցուն. և շնոր-համբ իւրով հաղորդեաց քեզ զոկեղն ճանաչման:

Ապա ծանիր զքեզ, զի ես փառք արար-ուենի. միջին իմն, որ միաւորէ զնծու-ծին ընդ նիւթոյ. ահաւասիկ դու ժառանգես զմասն ինչ նոյ. յուշ լիցի քեզ արժանաւորութե քո. և մի նուաս-տացուցաներ զքեզ մեղօք:

Ո՛վ եդ զարհուրս 'ի տուտ օձին, ո՛ զգեցոյց զպարանոց երիվարի որոտմամբ. նոյնինքն, որ ուսոյց կոխել զմին և նուաճել զմիւսն 'ի ծառայութե քո:

## ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

### Պէտք զգայութեանց.

Մ՛ի պարծիր 'ի վր մարմնոյդ. իբր զի յառաջ կերպաւորեցաւ. և մի 'ի վր խելաց քոց, այնու զի է աթոռ ոգւոյ. Ն՛շ որ տանն աւալ ահնածելի է քան զորմունս նր:

Հողն պարտի արօրիլ նախ քան զսեր-
մանիլն ցորենոյ. Բրուտն պարտի շինել
զՀնոց իւր յառաջ քան զկարող լինելն
առնել զխեցիս իւր:

Ո՛ր օրինակ բարբառն ոյ Հրամայէ
Ջուրց ովկիանոսի, յայսմ կողմանէ և
ոչ յայլմէ դիմեսցեն ալիք քո. ցայս վայր
և ոչ անդր ամբարձցես զամեհութիւն քո.
այսպէս ո՛վ մարդ պարտի Հոգի քո շնչա-
ւորել և ուղղել զմարմին քո. այսոյ սան-
ձել զարտուղութիւնս նր:

Ոգի քո է միապետ մեքենայի քո. մի
հանդուրժեր սորկաց իւրոց ապստամ-
բել ընդդէմ նր:

Մ՚արմինն է իբր գունտ երկրաւոր. ոս-
կերքն իբր սիւնք հաստատեն զնա 'ի
խարսխի իւրում:

Որպէս ովկիանոս բղխեցուցանէ զաղ-
բիւրս, որոյ Ջուրք դառնան անդրէն 'ի
ծոց իւր մծ գետոց. այսպէս կենսական
արիւն քո պարբերի 'ի սրտէ առ ար-
տաքինն. և զկնի վերադառնայ 'ի տեղի
իւր:

Երկաքանչիւրն պահէ զընթացս իւր
միշտ. Ահա պատճառն. այսպէս կար-
գաւորեաց ինքն ած:

Ոչ ապաքէն ընդունք են խողովակ հո-

հոտոց . և բերանն առ ՚ի ճաշակել զփափկութիւ . Բայց գիտեմ, զի ծխանե_լիք ընդ երկար հոտոտելւք տաղտկալի լինին . և փափկութիւնք եղծանեն զյօժա_րութիւն, զոր զգուեալ էին :

Ոչ ապաքէն աչք են պահապանք , որք առնեն զպահպանութի մ՞ քո . բայց քա_նիցս անգամ անբաւականք եղեն ՚ի տրո_հել զճշմարտութին ՚ի մոլորութէ :

Կա՛մ զունչ քո ՚ի կապարս չափաւորութե. ուսո՛ հոգւոյդ կալ մտադիր առ բարին իւր . այսպէս ապասաւորք իւր ցուցցեն քեզ միշտ զճշմարտութին :

Ձեռն քո ո՞չ է զքանչելիք իմն . իսկ ինչ համեմատ ՚ի մէջ արարածոց . Ո՞_րինչ արդեօք տուեալ եղև քեզ . բայց եթէ առ ՚ի օգնել եղբօր քում :

Ընդէ՞ր յամ կենդանեաց դու միայն ես ընդունակ շառագնելոյ . երեսք քո կարեն յայտնել զամօթ քո . Ապա փախիր յամ ամօթալի իրաց :

Երկիւղն և զարհուրանք զրկեն զդէմս ՚ի խարտեաշ պայծառութե իւրմէ . բայց լեր արդար . և ծանիցես զքեզ վերագոյն եր_կիւղի և զարհուրանաց :

Ընդէ՞ր առ քեզ միայն խօսին երևոյթք ՚ի տեսիլս գիշերոյ . Ակնածեա՛ ՚ի նոցա_նէ .

նէ. և ծանէր. զի տեսէք հասարա_
կարար գան յերկնից ։
Դու միայն ով մարդ պերճացեալ ես
խօսիւք. զորմանցէր ընդ քեզ գ՛ն փառա_
ցի արարածուեդ. և հասա՛, որում ես
քեզ գոյն զբանաւոր իմն և զարժանաւոր
գովութի, շնչելով յորդեաւ զիմաստու_
թի, և կրթելով զզաւակ քո յածպաշ_
տութի ։

# ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ.

## Ոէն մարդոյ, ծագումն և զգածմունք իւր.

աւուէք մարմնաւոր մասին քո, ով
մարդ. են առողջութի, ոյժ, և արդար
չափակցութի անդամոց. Մեծագոյնն 'ի
ոյանէ է առողջութի. Որպէս է ա_
ռողջութի առ մարմինն, այնպէս է պա_
տուականութի առ ոգին ։
Թէ ունիս դու զոգի մի, է ստուգագոյն
քան զամ՛ ճանաչմունս, յայտնագոյն քան
զամ՛ ճշմարտութի. Լեր խոնարհ. լեր
երախտագէտ. և մի խնդրեր ճանա_
չել.

չել. կատարելապէս զայն, որ է անմեկ-նելի :

Խորհել, իմանալ, տրամաբանել, կա-մել, մի՛ կոչեր զայսոսիկ ոգւի. Այսոքիկ են գործողութիւնք իւր, այլ ոչ էութիւն իւր:

Մի՛ ամբարտաւանար զնա կարի իմն, զի մի՛ ար-համարհեսցիս. Մի՛ ասեր ով զնոսա, որք անկանին մօ կարի իմն 'ի վեր ըմբռնե-լոյ. և մի՛ նուաստանար առ զգայուն անբանից. Ոչ ես դու նման Ձիոյ կամ Ջորւոյ յորս ոչ գոյ իմացումն:

Քննեա զնա 'ի ձեռն կարողութեանց իւրոց. Ծանի՛ր զնա ճանապարհաւ առաքինութեանց:

Սոքա առաւել յոգնաթիւք են քան զհերս գլխոյ քո. աստեղք երկնից ոչ են թըւար-կելի ընդ նոսա:

Մի՛ պատկերեր 'ի քեզ ով զԱրաբացիս, թէ մի շունչ լցէ բաժանեալ յամ մար-դիկ. և մի՛ հաւատար ով զորդիսն Եգիպ-տոսի, թէ իւրաքանչիւր մարդ ունիցի զբազում շունչս. Ծանի՛ր, զի ով սիրտ քո, այսպէս և շունչ քո է մի միայն:

Արեն կարծրացուցանէ զկաւն, և նոյն արեն կակղացուցանէ զմոմ. զո՛ր օրինակ նոյն արեն գործէ զայսոսիկ երկուսեան, այսպէս մի միայն ոգին կամի զներհա-կան իրս.

Որ-

Որպէս լուսինն պահէ զբնութիւն իւր, Թէև մութն ձգիցի առաջի երեսաց նր իբրև զվարագոյր իմն, այսպէս ոգին կայ միշտ կատարեալ, նաև ՚ի ծոց յիմարի։

Նա է անմահ՝. նա է անփոփոխական. նա է նոյն յամենեսին. մարմնաւոր ոյժն արասցէ տեսանելի զսիրելի որակութիւն իւր. և ուսումն օծանէ զնա իւղով իմաստութեան։

Թէպէտ ոգին կեցցէ յետ քո, մի խոր-հիր, թէ յառաջ քան զքեզ ծնեալ իցէ նա. հաստեցաւ ՚ի միասին ընդ մարմնոյ քո, և առեղծաւ ընդ խելաց քոց։

Արդարութիւն ոչ թողացուցանէ ընձեռել քեզ զայն զարդարեալ ամ առաքինութիւնք. և ոչ ողորմութիւն՝ աւանդել տխեղծեալ ախտիւք. Այս պարտի լինել գործ քո. և դու պարտական ես զայնցանէ տալոյ պատասխանի։

Մի համարիր, թէ մահն կարիցէ պա-տսպարել զքեզ ՚ի քննութենէ. մի հաւա-տար, թէ ապականութիւն կարասցէ թա-քուցանել զքեզ ՚ի հետախուզութենէ։

Նա՝ որ առեղծն զքեզ ՚ի միոջէ նիւթոյ, զոր դու ոչ ճանաչես, ոչ կարէ ևս վերըս-տին նորոգ՝ գոյացուցանել զքեզ ՚ի վե-ճակէ իմիքէ, որ չիցէ քեզ ծանօթ։

Ագա-

Աքաղաղն գոչէ զժամ կէս գիշերոյ . և ամբառնայ զբարբառ իւր առ 'ի աւետել զարշալոյսն . Շունն տրոհէ զհետ տեառն իւրոյ . և այծն վիրաւորեալ՝ ընթանայ առ խոտն, որ բժշկէ զնա . Հանդերձ այսու ամենիւ յորժամ մեռանին սոքա, ոգի նց վերադառնայ 'ի հող . բայց միայն մնայ կենդանի ։

Մի՛ նախանձիր ընդ զգայութիս նց . իբր զի են առաւել նրբինք քան զքոյդ ։ Ուսի՛ր, զի լաւութիւն ոչ կայ 'ի ստացման իրաց բարեաց, այլ 'ի գիտելն 'ի գործ ածել զայնս ։

Եթէ ունէիր զլսելիս եղջերուին, կամ զտեսանելիս արծուոյ, եթէ հաւասարէիր շան 'ի հոտոտելիս, կամ կապկի 'ի ճաշակելիս, կամ կրիայի 'ի ըզգայնութեան, առանց իմացողութեան՝ զի՞նչ շահ ունէիր յայնմանէ . Ոչ կորեան ամենեքին սոքա իբրև զնմանիս իւրեանց ։

Ի՞ ոք 'ի սոցանէ, որ ունիցի զկարողութի խօսելոյ . Կարե՞ն երբէք ասել քեզ, թէ վս այսր պատճառի արարի այսպէս ։

Շրթունք իմաստնոյ են իբրև դդրունս գանձարանի . իսկոյն ընդ բանայն, առաջի առնեն տեսուէն քում գանձք ։

Որպէս ծառք ոսկւոյ անկեալք 'ի դաշտի ար-

արծաթոյ , այսպէս երեւին բանք իմաս_
տունք ասացեալք 'ի դէպ ժամանակի :
Կարե՞ս դու կարէ իմն համարել զոգի
քո . կամ թէ մարթ է առնել կարէ իմն 'ի
ջոկեալ իւր . Նա է պատկեր այնորիկ ,
որ սաեղծն զնա :
Յո՛ւշ լիցի քեզ արժանաւորութին իւր յա_
րաժամ . և մի՛ մոռանար զմեծութին տա_
ղանդոյն աւանդելոյ քեզ 'ի պահպա_
նութին :
Որպէս կարող ես առնել զբարի . կա_
րող ես և առնել զչար . մի՛ այսորիկ
ուղղեա՛ զընթացս Նորա յառաքինութին :
Մի՛ զմտաւ ածեր , թէ կարես կորուսա_
նել զայն 'ի մէջ ամբոխի . և մի՛ հա_
մարիր , թէ կարես թաքուցանել զայն 'ի
ներքին սենեկի քում . Ներգործակա_
նութին և բերկրութին իւր ոչ կամի համ_
դուրժել արգելման :
Շարժումն իւր է մշտնջենաւոր . Ձեռ_
նարկուիք իւր են ընդհանրականք .
զդիւրաշարժութին իւր ոչ կարէ ձնշել .
Ձգի մինչեւ 'ի ծագս երկրի . և անդր
քան զսահմանս աստեղացն իւր նշմա_
րեսցէ :
Հետախոյզ լինելն է բերկրութին իւր . ոմպ
ղք . որ ընթանայ ընդ ցամաքուտ աւազս
'ի

՚ի խնդիր ջրոյ · այսպէս է ոգին , որ տապի ՚ի գիտել :

Հակեա՛ ՚ի վ՛ր ն՛ր , վ՟ զի յանդուգն է · զսպեա՛ զնա , վ՟ զի անկանոն է · ուղ-ղեա՛ զնա , վ՟ զի բուռն է , առաւել հեղհեղուկ է քան զջուր , առաւել դիւ-րաբեկ քան զմոմ , նուազ ընդդիմա-կաց քան զօդ · Ո՞ երբէք կարասցէ կա-պել զնա :

Ոգի ուրուք , որ է զուրկ յընտրողութե , է որպէս սուսեր ՚ի ձեռս յիմարի · վախ-ճան հետազօտութեց իւրոց է ճշմար-տութին · հայթհայթանք իւր առ ՚ի ճա-նաչել զայն՝ են փաստն և փորձն · Ո՛չ մի թէ ո՞չ են այսոքիկ տկարք · անս-տոյգք և խաբեբայք · ապա զի՞նչ մարթ իցէ սպասել ՚ի նոցանէ :

Ընդհանրութի իրիք կարծեաց ոչ է հա-ւաստիք ճշմարտութե իւրոյ · քանզի ա-ռաւելագոյն մասն մարդկան տգէտք են : Ճանաչումն անձին քո , ճանաչումն ն՛ր , որ հաստեացն զքեզ , իմացումն կարո-ղութե քո , ո՞չ են այնոքիկ յայտնի յաչս քո · Ապա այլ զի՞նչ պէտս ունի մարդն գիտելոյ :

# ՀԱՏՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

## Շրջան և կիրառութ՟ի մարդկային կենաց :

Որ օրինակ արշալոյսն արտուտին, խաւարն չղջկան , մեղրն մեղուին , և գէշն անգեղ , այսպէս սիրելի է կեանքն սրտի մարդոյ :

Թէպէտ և պայծառ՝ ոչ խտտղեցուցանէ. Թէպէտ և խաւարին՝ ոչ տհաճեցու-ցանէ. Թէպէտ և քաղցր՝ ոչ տաղտկա-ցուցանէ . Թէպէտ և նեխեալ , ոչ զզուեցուցանէ , և ո՞ իսկ է , որ ճանաչէ զճշմարիտ արժողութ՟ի ն՟յ :

Ուսիր համարել զկեանս , որ՟պ պարտն է . և ապա հասցես գրեթէ ՛ի գագաթն իմաստութե :

Մ՛ի խորհեսցիս դու իբրև զյիմար , որ՟պ Թէ ոչ է ինչ առաւել պատուական . և մի հաւատար կարծեցեալ իմաստու-Թեանցդ , Թէ պարտ իցէ արհամարհել զայն . Սիրեա զնա ո՛չ վ՟ն ինքեան , այլ վ՟ն բարւոյ այլոց :

Ն Սոկին

Ոսկին ոչ կարէ գնել զնա․ և ոչ հանք ադամանդաց կարող են դարձուցանել զվայրկեանն կորուսեալ․ Նմին իրի ծախեա զհետագայսն յառաքինութ:

Մ՛ի ասիցես, լաւ էր եթէ չէի ծնեալ, կամ յետ ծնանելոյն մեռեալ տղայ, և մի խնդրեր ցարարիչն, թէ զինչ չար լինէր, եթէ ես ոչ գոյի, Բարին է յիշխանութ քում, պակասելն 'ի բարի առնելոյ է չար առնել․ և եթէ խնդիր քո է իրաւացի, նոյն ինքն դատապարտէ զքեզ:

Մ՛ի թէ խնդրո՞յր ձուկն, եթէ գիտէր լինել 'ի նմա թաքուցեալ կարթն: Մ՛տանէ՞ր առիւծն 'ի թակարդն, եթէ գիտէր, թէ վն նր էր պատրաստեալ․ Նոյնպէս և ո՛չ մարդն կամէր կեալ, եթէ ոգին կորնչելոց էր ընդ հողոյ․ և ոչ իսկ ամենողորմն ած հաստեալ էր զնա․ Ապա՛ գիտասջի՛ր, զի կեցցես նաև զկնի մահուան մարմնոյ քո:

Զոր օրինակ թռչունն փակի 'ի վանդակի առանց իրազէկ լինելոյ, և սակայն ոչ ծուլանայ զմխիթարել իւր վն ըմբռնման իւրոյ․ այսպէս և դու ոչ պարտիս թեւակոխել ընդունայն ազատել զքեզ 'ի վիճակէն, յորում ես․ այլ ծանի՛ր,

զի սահմանեալ է քեզ այն․ և լի՛ր շատացեալ այնու ։

Թէպէտ ճանապարհք իւր են առապարք․ այլ ոչ են բնաւ ցաւագինք․ յարմարեա զքեզ նմի , և ուր գոյ դոյզն ինչ երեւոյթ չարի , կասկածեաց զնմանէ մեծագոյն վտանգս ։

Յորժամ անկողին քո է յարդեայ , ննջես ապահովութբ․ այլ յորժամ ընկողմնիս ՚ի վ՛ր վարդից , զգո՛յշ լե՛ր ՚ի փշոց ։

Մա՛հ իմն բարի լաւագոյն է քան զվատթար ինչ կեանս․ վա՛յ ջանա՛ կեալ որչափ պարտիս․ և ոչ որչափ կարես․

Յորժամ կեանք քո է առաւել օգտակար այլոց , քան թէ մահ քո , պարտականու՛թի քո է պահպանել զայն ։

Մի՛ գանգատիր ընդ յիմարէ վ՛ս կարճու՛ն ժամանակի․ յո՛ւշ լիցի քեզ , զի եթէ սակաւք են աւուրք քո , սակաւք եղիցին և վիշտք ։

Բա՛րձ ՚ի կենաց քոց զմասունսն առանց շահու․ և զի՛նչ վերամնայ յայնմանէ․ բա՛րձ զժամանակ տղայութե՛ քո , և զերկրորդ տղայու՛թ ծերութեա՛ն , զքունն , զժամս զատարկու՛ն , զաւուրս հիւանդու՛ն , տե՛ս ո՛րչափ սակաւ ժամանակս ունիս զութըճեալ ճշմարտի՛․

Նա

Նա, որ ետ քեզ զկեանս իւր շնորհուկ
իւմն, կարծեաց զայն առ ՚ի առնել բարե_
գոյն. Բայց ինչ փոխարէն արդեօք կարէր
ծառայել կեանք ինչ երկայնագոյն. Կա_
մէիր թերեւս փորձել առ աւելի վատուէս.
իսկ հայելով առ բարին, նա, որ կո_
պարաւորեաց զկեանս քո, ո՞չ եղիցի
շատացեալ պտղովքն, զորս մարթասցի այն
յառաջ ածել։

Բայց ի՞նչ փոխարէն ո՞վ որդի վճարեաց կա_
մէիր կեալ երկայնագոյնս՝ առ ՚ի շնչել.
առ ՚ի ուտել. առ ՚ի տեսանել զաշ_
խարհ. Զայս ամ յաճախակի արարեր.
առեալ կրկնումն ինչ տաղտկացուցանէ.
եւ է միանգամայն աւելորդ։

Թերեւս կամիս աճեցուցանել զիմաստութի
քո եւ զառաքինութի քո. Նշմարեա ինձ,
զի՞նչ մնայ քեզ գիտել. կամ ո՞ կարացէ
զքեզ ուսուցանել. Զարաշար ՚ի գործ
ածեր զայն սակաւն, որ տուեալ եղե
քեզ. ապա մի՛ գանգատիր, թէ ոչ շնոր_
հեցաւ քեզ աւելի։

Մի՛ տրտնջեր վասն ոչ գիտելոյդ ըստ բա_
ւականին. որովհետեւ ուսումն քո ընդ
քեզ լինելոց է ՚ի գերեզման. լեր ար_
դար աստէն. եւ եղիցիս իմաստուն ՚ի
հանդերձեալ կեանսն։

Մի՛ ասիցես ցագռաւն․ ընդէ՞ր թըր-
ւեցեր դու եօթն անգամ՝ զտիս տն քո․
կամ՝ ցեղջերուն․ ընդէ՞ր տեսանեն աչ.ք
քո զզաւակ քո մինչեւ ցհարիւր ազգս․
Կարեն սոքա համեմատիլ քեզ ՚ի զեղծ-
ման կենաց․ Ե՞ն սոքա ցոփք․ Ե՞ն անա-
գորոյնք, ե՞ն ապերախտք․ Ուսի՛ր ՚ի
նոցանէ, զի անմեղութի՛ և պարզութի
վարուց են մեկին հանգամանք առ ՚ի
ժամանել առ բարի իմն ծերութի:
Գիտե՞ս դու լաւագոյն քան զնա ծախել
զկեանս․ ապա ուրեմն կարճագոյն ինչ
պարտի բաւել քեզ:
Մարդն, որ բաղձայ տիրել բոլանդակ
աշխարհի․ գիտելումն, թէ ոչ կարէ
վայելել ՚ի բանաւորուեն իւրում՝, եթէ
ոչ վայրկեան մի, առ ի՞նչ ոչ անձկայր,
եթէ լինէր անմահ:
Ունես բաւական կեանս ո՛վ մարդ, այլ
ոչ համարես զայն․ ոչ պակասի քեզ
յայնմանէ․ այլ դու շռայլ ես կենացդ․
Ծախես զայն առանց ինչ հոգալոյ զայն-
մանէ, ով եթէ ունէիր աւելի քան ըդ-
աչէտս․ և սակոյն գանգատես, թէ չեմ
կարող նորոգ՝ ժողովել զայն:
Ոչ է առատութի՛ն, որ փարթամացու-
ցանէ, այլ անօրէնութի՛ն․ Իմաստունն
կեայ

կենաց յառաջին շրջանէ իւրմէ . յիմարն
ունի միշտ սխալել :

Մի՛ տարժանիր առ 'ի տեսանել զհարս-
տութիւն խորհրդով կամելոյ յետոյ փոյթ-
ճել յայնս . Նա, որ տունկանէ զներ-
կոյ վայրկեանն, կորուսանէ զապագայն . զոր
ունէ. Որպէս նետն անցանէ ընդ սխրա
պատերազմողաննին առանց նշմարելի լի-
նելոյ զգալութենէ նր . այսպէս կեանքն
բարձեալ լինի յառաջ քան զգիտելն
տեսեալ ունել զայն :

Նչա զինչ է կեանքն, որում փափագէ
մարդն, Ո՛նդէր ցանկայ նա շնչել . ոչ
ապաքէն է տեսարան լինի խաղերուն ,
շոր լինի ըմբռնատունց , շղթայատող
լինի չարեաց միայներոց յամ՝ մտաց :
'Ի սկզբանն է տգիտութիւն . 'ի մէջն
քաղանին ցաւ . և 'ի վախճանի վշտագ-
նութիւն :

Որպէս ալիք մի անկանի 'ի վ՛ր միւսոյն
և ապա երկրորդն շաղին 'ի հետագայն .
այսպէս միշտ 'ի կեանս մարդոյ յաջորդէ
չարն զմիւս չարի . մեծագոյնն և ներկայն
կլանէ զփոքրագոյնն և զանցեալն . Եր-
կիւղք մեր են չարիք իրականք . անձ-
կութիւնք մեր շաղմեն զմեզ յուսով ան-
հաւանական իրաց : Յիմարք առ 'ի եր-

կնչել որպէս զմահկանացուս, և բաղձալ որպէս զանմա՛հս:

Մեր մասն կենաց է այն, զոր ըղձանամք երկայնաձգել. գուցէ երիտասարդութիւն. և կարելի՞ է, զի սիրեսցուք այնչափ ըզբռնութիւն, զցոփութիւն և զյանդգնութիւն. կամ թերևս ծերութիւն՞. ուրեմն մոլեալ եմք 'ի սէր հիւանդութեան:

Ասի, թէ ալևորութիւն է ախնածեալ. և թէ ծերութիւն բերէ զպատիւ, Առաքինութիւն կարէ առնել ախնածելի նաև զծաղիկ պատանութե. և առանց այսր ծերութիւն է առաւել կնճռեալ 'ի յոգին քան 'ի ճակատն:

Թերևս ախնածեա՞լ է ծերութիւն, վս զի ատեայ զցոփակեցութիւն. զի՞նչ արդարութի է այս. որովհետև ոչ է հասակն, որ ատեայ զհեշտութիւս. այլ հեշտութիւքն են, որք բարձի թողի առնեն զհասակն:

Մեր առաքինի, ցորչափ երիտասարդես, եթէ կամիս լինել ախնածեալ 'ի ծերութե:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

Մարդն նկատեալ ըստ տկարութեանց իւրոց, և ըստ նոցին արգասեաց.

## ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

### Ունայնութիւն.

Անկայունութիւն հզօր է 'ի սիրտ մարդոյ. անբարեխառնութիւն ազդէ 'ի նմա. յուսահատութիւն ունի զմեծ մասն նր. և երկիւղն երևի տիրապետել նմա ողջոյն. այլ սակայն ունայնութիւն գերազանցէ զամենեքումբք:

Մ՚ձկ մի լար 'ի վ՛ր թշուառութեանց մարդկային վիճակի, այլ ծիծաղեսցի մանաւանդ 'ի վ՛ր յիմարութեանց իւրոց. Կեանք մարդոյ անձնատուր եղելոյ ունայնութեան, է ցնորք երազոյ:

Պչնեցաղն առաւել անուանէ քան զամ նշանաւորս 'ի մարդկանէ՝ զի՞նչ այլ ինչ է, եթէ ոչ խաղալիկ ունայնութեան. Հրապարակն է անկայուն և ապերախտ 'ի

կործիս իւր. ո՞ր մարդ իմաստուն կա_
միցի դնել զանձն 'ի վտանգի վ՟ յի_
մարաց :

Մարդն. որ ատունգանէ զներկայ շահս
անձին իւրոյ, խորհելով, թէ որպէս
պարարեսցի գործել, յորժամ եղիցի 'ի
մեծագոյն իմիք վիճակի, նմանի հողմով,
մինչ այլք ուտեն զհաց նր :

Արա՛ որպէս պարտ է քեզ 'ի ներկայ
վիճակի քում. և յայլ մեծագոյնս երբեք
ոչ եղիցին ամաչեցեալք :

Մինչ ինչ կուրացուցանէ զաչս. կամ
զի՞նչ թափուցանէ յինքենէ զսիրտ մար_
դոյն, որչափ ունայնութիւն. Յորժամ դու
ոչ տեսանես զանձն քո, յայնժամ այլք
տեսանեն զքեզ առաւել դիւրակի :

Որպէս կակաչ ծաղիկն փառաւոր է. այլ
առանց հոտոյ, գեղեցիկ առանց պիտա_
նութե, այսպ է մարդն, որ հասանէ առ
մեծութիս. և ոչ ունի զարժանաւորութի :

Սիրտ փառամոլին խռովեալ է, մինչ
դեռ երևի շատացեալ վիճակք իւր աւելի
'ն քան զհանձուխս իւր :

Հոգածուի իւր ոչ հանգչի ընդ ոսկե_
րաց իւրոց. Նոյն իսկ գերեզմանն տայ
զգոյցս նմանափառուէ նր. դիտմունք իւր
ձգին աւելի քան զդոյութի իւր. Խնդրէ

գո_

գովասանել եւս յորժամ մեկնեալ է , բայց որոց խոստանայցէ նմա, խաբէ զնա :

Օրօրինակ մարդն , որ պարաւանդէ զկէն իւր ձեռաւ այլոյ , ով զի մի վըրդովեսցէ զոգի իւր , այսպէս է եւ նա , որ ուշադիր լինի , զի գովութիւն համանիցեն յականջս իւր ՚ի ներքոյ հողոյն . կամ զուարճացուսցեն զսիրտ նր ՚ի գերեզմանի :

Օ՛ բարիս գործես ցորչափ կենդանի ես առանց հոյելոյ յայն , որ առ ի զայնցանէ ; շատացի՛ր արժանաւորելով գովութեանց . եւ յետնորդք քո եղիցին մխիթարեալք ՚ի լսելն զայն :

Որպէս ծխծեռն , որ ոչ տեսանէ զգոյնս իւր , եւ ով յառմնին , որ ոչ զգայ ըզհոտն , զոր բուրէ շուրջ . այսպէս է մարդն , որ երեւի նազելի . եւ հրաւիրէ զայլս ՚ի զարմացումն իւր :

Ի՞ւ ինչ օգուտ , ասէ , հանդերձ իմ է յանկեայ . առ ի՞նչ վախճան սեղան իմ ծածկեալ փափկութեք . եթէ այսոքիւ ես չեն նշմարեալ . եթէ աշխարհս ո՛չ գիտէ զայն . Տո՛ւր զգեստ քո մերկոյ , եւ զկերակուր քո քաղցելոյ . այսու օրինակաւ գովեսցիս . եւ լուիցես , թէ զու արժանի ես գովութեան :

Ի՛ն-

Ընդէ՞ր է քեզ շողոքորթել մնոտի բանիւք . գիտես դու , զի այն որ փոխարի քեզ ոչ է արժանի նկատման . Հանդերձ այսու՝ այլ ոմն ասէ քեզ . և սակայն դու շնորհակալ լինիցիս . խօսեաց անկեղծութ . և դու լուիցես օգտիւ :

Վատամոյն ախորժէ խօսել զանձնէ իւրմէ . այլ ոչ տեսանէ , թէ այլք ահաճուք ունկն դնեն նմա :

Եթէ արարեալ է իւր ինչ , որ արժանի է գովութե . եթէ ունի իւր ինչ արժանի զարմացման , ուրախութիւն իւր է քարոզել զայն . ամբարհաւաճութիւն իւր է լսել , թէ խօսին զայնմանէ . Բաղձանք այնպիսի մարդոյ խորէ զանձն իւր . մարդկիկ ոչ ասեն , թէ ահա նա արարեալ է զայս . և թէ տեսէք , զի ունի նա զայսպիսի ինչ . այլ կրկնեն զհպարտութիւն նր :

Հոգին մարդոյ ոչ կարէ մտադրել 'ի միում նուագի յոգունց իրաց . Նա , որ ախտացեալ է մօ երեւութի , կորուսանէ զիրականութիւն . Այնպիսին զհետ երթայ ցնորից , որք ցնդին յօդս . և առոան հարկանէ 'ի վր երկրի զայն , որ կարէր առնել նմա պատիւ :

ՀԲ.–

# ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

## Անկայունութիւն .

Անհաստատ ես 'ի բնութէ քումմէ ով մարդ. վաղ յոմ ժմիկի կող զայն 'ի պահպանութե . Ելեր յարգանդէ մօր քո անորոշ և տարտամ . 'ի հօրէ քումմէ ժառանգեցեր զանկայունութիւն . ապա զիա՞րդ կարասցես լինել կայուն :

Նոքա , որք ետուն քեզ զմարմինս , հաղորդեցին քեզ զայն տկարութիւն . բայց նա , որ ետ քեզ զոգի , զլինելոց զնա հաստատուն . 'ի գործ ած զայն , և եղիցիս իմաստուն . լե՛ր իմաստուն և եղիցիս երջանիկ :

Յորժամ առնէ ոք զբարի , զգո՛յշ լիցի 'ի գովելոյ զանձն , վասն զի հազիւ երբէք է 'ի սեպհական կամաց . Թերևս լիցէ գիպուած արտաքին իրիք միջման , ծնեալ յանրատուգութէ , տեսեալ 'ի պատահմանէ , որ կախեալ լիցէ յայլմէ իմեքէ . Արդ ո՞յց մարդոյ , եթէ գիպուածոյն պարտ է յայնժամ գովութիւն :

Զգոյշ լեր ՚ի տարտամութէ ՚ի դիտման գործողութեանց քոց. զգոյշ լեր յանկայու_ նութէ ՚ի կատարմանն. այսպէս յաղթա_ նակեսցես ՚ի վր երկուց մեծամեծ պա_ կասութեց բնութե :

Զի՞նչ կշտամբեսցէ բանականութիւն առելի քան զգործելն առանց հետևելոյ ինքեան. զի՞նչ կարողէ նուաճել լաւես զխռովութի առ այս, քան թէ կայունութի իմն հոգւոյ :

Յորդորդն զգայ փոփոխել, այլ ոչ գիտէ զմներն. տեսանէ, զի պակասի ինքն, այլ ոչ գիտէ զգխարդն. Լեր անփոփոխ յայնմ, որ է արդար. և մար_ դիկ վստահասցին ՚ի քեզ :

Հաստատեա յանձին քում զսկզբունս գործողութե. և փոյթ կալջիր գործել միշտ ըստ նոցին :

Ծանիր նախ, եթէ սկզբունք քո իցեն արդար. և յայնժամ կաց անշարժ ՚ի գործադրութե :

Որպէս կիրք քո ոչ տիրեսցեն քեզ. այսպէս կայունութին ապահովեսցէ քեզ զբարին, զոր ունիս. և մերժեսցէ զար_ կածս ՚ի սեմոց քոց. Արանեղութին և յու_ սահատութին եղիցին միշտ ՚ի բացեայ ՚ի դրանէ քումմէ :

Մի՛ կասկածեսցես չար յումեք, մինչև

ոչ

ոչ նշմարեսցես զայն. և յորժամ տեսեր, մի մոռասցիս երբէք :

Որ ոք լինի թշնամի ոչ կարէ դիւրակի լինել բարեկամ. վա զի մարդն ցանցա_ ղորար ուղղէ զխալանս իւր :

Ո խորդ լինիցին արդար գործողութեք ու_ րուամ, որ ոչ ունի զսկզբունս վա կա_ նոնաւորելոյ. Որպէս կարէ լինել ար_ դար, որ ոչ յառաջ գայցէ 'ի բանա_ կանութէ :

Ընձն յողդողդի ոչ վայելէ 'ի խաղա_ ղութե, և ոչ եւս կարող են վայելել յայն նորա, որք լծակցեալ են ընդ նմա :

Կեանք իւր է անհաստատ. շարժմունք իւր են անկանոնք. ոգի իւր յեղափոխի որպէս զժամանակն :

Այսօր գովէ զքեզ. վաղիւն լինիցիս դարձեալ 'ի նմանէ. և ընդէ՞ր ար_ դեօք. նախինքն եւս ոչ գիտէ, ընդէ՞ր գովէ, կամ ընդէ՞ր ատեայ :

Այսօր նա բանաւոր է. վաղիւն է խո_ նարհ տառել քան զծառայ մի. և ըն_ դէ՞ր նա, որ է մեծամիտ առանց կարո_ ղութե, եղիցի անարգ առանց լինելոյ ծնչեայ :

Այսօր է շռայլ. վաղիւն կշտամբէ բզ_ բերան իւր նա, որ ուտէ. Այսպիսի է նա, որ ոչ ճանաչէ զչափաւորութի :

Ա

Մ՞երբէք կարէ ասել, թէ գետնախուծն իցէ սեաւ. երբ 'ի միում վայրկենի ցուցանէ զկանաչութի խոտոյ:

Ով կարէ ասել զանկայունէ, թէ նա է ուրախ, մինչ խակեխակ զկնի՝ նոյնն հառաչեսցէ:

Ո՞ ինչ է կեանք այսպիսի ուրումն մարդոյ. բայց եթէ ցնորք երազոյ. յառաւօտու երեւի երջանիկ, 'ի կէս աւուր է 'ի տանջանս. յայսմ ժամու է նա 'ած ամն, յայլում համարի զինքն որդն ինչ. 'ի միում վայրկենի ծիծաղի, եւ 'ի միւսում լայ. այժմ կամի, յետ միոյ բոպէի ոչ եւս կամի. եւ յայլում իմիք բոպէի ոչ գիտէ, կամիցի՞, եթէ ոչ կամիցի:

Ուստի ոչ ցաւն եւ ոչ բերկրութին հաստատուն կան 'ի նմա. եւ ոչ վիճակ ն՟ր է առաւել մեծ կամ փոքր. եւ ոչ ունի նա պատճառ վ՟ն ուրախութե, կամ վ՟ն տրտմութեան. նմին իրի եւ ոչ մի ինչ յայսց կրից շարունակեսցէ:

Երջանկութի յողդողդին է որպէս պալատ իմն հիմնեալ 'ի վ՟ր աւազոյ. շնչումն հողմոյ դղրդէ զհիմունս ն՟ր. ապա զի՞նչ զարմանք են, եթէ անկանի:

Բայց ո՞ր բարձրաբերձ պատկեր հաստատուն քայլիւ ուղղէ դէպ մեզ զանընդհատ

հատ գնացս էր . որոց ոտք են յերկրի ,
և գլուխն 'ի վեր անցանէ քան զամպս :
'Ի մի յօնից իւրոց նստի մեծվայելչութի .
հաստատութի՛ է 'ի մի վարման իւրոյ .
և 'ի սրտի իւրում՝ Թագաւորէ անդոր_
րութի՛ :

Թ·եպէտ և երևէին խոչք 'ի ձիգհի , նա
ոչ արժանի համարի և ոչ իսկ նայել
'ի նա . Թէև երկինք և երկիր հակառա_
կեսցի անցից նր , նա հանդերձ այնու
ամէն յառաջադէմ լինի 'ի գնացս իւր :
Լ_երինք տեղի տան քայլի նր . Ջուրք
ովկիանոսի ցամաքին ընդ ոտիւք իւրովք :
Ընդունայն յարձակի վագրն 'ի մէջ
գնացից նր . նա ոչ զանգիտէ 'ի կա_
տաղի երևութից ընձառիւծու , որ խի_
զախէ 'ի մի նր :

Ը.յնպիսին անցանէ ընդ մէջ գնդաց զի_
նելոց . ձեռամբ իւրով վանէ զարհաւիրս
մահու :

Ա՛րբիկք մանչէն շուրջ գնովաւ , այլ ոչ
են բաւական շարժել զնա . 'ի զուր
որոտումն ճայթէ 'ի մի գլխոյ նր . Փայ_
լակն ոչինչ ազդէ նմա . բայց եթէ
առ 'ի ցուցանել զփառս տեսլեան իւրոյ :
Կոչի սերտմտութի՛ , այսինքն . հաստա_
տուն և որոշեալ միտք . Գ·այ 'ի ծագաց
երկ_

երկրէ · տեսանէ 'ի բազմաւոր զերջան_
կութին առաջի 'նր · այլ իւր նշմարեն
զտաճար 'նորա անդր քան զկապարս բաժե_
ուին :

Ո՛վ որ տաճար գիմէ նա , քաջասրտութ
ձնանէ անդր , և անդէն մնայ միշտ :

Հաստատեա զսիրտ քո ո՛վ մարդ յար_
գարուէ · և յայնժամ ծանիցես , թէ
լինելն անփոփոխելի է մեծագոյնն 'ի
մարդկային յարգաց :

## ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ·

### Անզօրութիւն ·

Անապարծ է անկայուն , որպէս եւ
ո՛վ որդի անկատարութ · այսպէս պարտ
էիր լինել տկար , վո զի այսօրէկ պա_
կասուէք միաւորեալ են միշտ 'ի միասին ·
բայց զգուշ լեր յառաջնոցն · և այսպէս
ոչ եղիցես 'նեղքոյ անկեալ չարեացն · որք
զան յայլմէ :

Յորում մասին ես դու առաւել տկար ·
ես և յայնմ , յորում համարիս զքեզ
առաւել զօրաւոր · յայնմ , զորմէ ա_

առնել պարծիս, 'ի ստացուածս իրաց. զոր ունիս. 'ի կիրառումն բարւոյն, որ կայ շուրջ զքև:

Նաև ցանկութիւնք քո են անկարգք. և ոչ ճանաչես, թէ իմ իմիք ցանկաս. Երբ հասանես այնմ, որում առնել բղձանայիր, տակաւին ոչ ես շատացեալ:

Ընդէ՞ր կորուսանէ հեշտութիւն, զոր ունիս, զճաշակ իւր. և ընդէ՞ր երևի քեզ առաւել քաղցր այն, որ է հեռաւոր. այս է. զի խոնջեալ ես 'ի բարւոյ այսր իրի. և ոչ ճանաչես զչարն այնր, զոր չես փորձեալ. Գիտեա՛, զի 'ի բաւականութեան գտանի երջանկութիւն:

Կարէի՞ր դու ընտրել վ՚քո, եթէ կամէր արարիչն քո առաջի մատուցանել քեզ զայն 'ամ՛, որում սիրտ քո կարէ փափագել. Կամէի՞ր յայնժամ զերջանկութիւն ընդ քեզ. կամ գտանէ՞ր ուրախութիւն յայնժամ 'ի ներքս դրանց քոց:

Ուա՜ղ ինձ, զի տկարութիւն քո արգելու զայն. անզօրութիւն քո յայտ առնէ զընդդէմն. Միայնութիւն ընդ քեզ է 'ի տեղի հեշտութեան. և սակայն այն, որ հանապազ հեշտացուցանէ, պարտի լինել ես յարակայ:

Յորժամ զուրկ ես դու յայնմանէ զանգատիս զկորստենէ նր. թէպէտ և արհամար_

    մար_

մարհես յորժամ ես 'ի ստացման նր :
Այն որ զհետ գայ ոչ ես ունի վ՟ քո
զհեշտութի էւր. և յետոյ պարսաւես
զանձն քո վ՟ նախադասելոյն զայն. Ա-
հաւանիկ այս է կեան, յորում դու ոչ
սխալիս:

Բաջայայտ երևի տկարութի քո յերան.
ըրոց ցանկացար. Բայց ես առաւել յըն-
տանոյն զնա և 'ի կեր առնուլն:

Բարեքն զադարեն 'ի լինելոյ բարի 'ի
ստացման մերում. Այնք, զոր բնութին
ներկայացուցանէ մեզ էբր քաղցրունի,
լինին վ՟ մեր աղբեւրք գառնունե. 'ի
հեշտունեց մերոց ծնանին վիշտք. 'ի
բերկրունեց մերոց բղխեն սրտցաւու-
թիք:

Վեր չափաւոր 'ի վայելման բարույն.
և մնասցես 'ի ստացման. եղիցի բերկ-
րունի քո հիմնեալ 'ի բանականունե. և
այսպէս տհամութին հեռի կացցէ 'ի
քէն:

Բերկրութիք սիրոյ սկսանին հառաչ-
մամբ, և վերջանան ըրմամբ. Աուր-
կայն ցանկացեալ այնքան՝ տաղտկացու-
ցանէ վ՟ յագեցմանն. և փաղփաղակէ
ընդ լինելն 'ի ստացման՝ փատակեալ
ես 'ի ներկայութե նր:

Մխա-

Մ՛նացս զհամարումն ընդ զարմացման
քում․ լծակցեա՛ ընդ սիրոյ զբարեկա-
մութի․ այսպէս ՚ի վախճանի զգայցես
զբերկրութի, որ գերազանցեսցէ զապշուք․
և անդորրութի քո եղիցի առաւել անծա-
ղին քան զզմայլմունս։

Ա՛ծ ոչ ետ քեզ զբարի ինչ առանց
խառնման իւրոյ չարի․ բայց նախինքն ետ
քեզ զհայթհայթանս, անջատելոյ զմինն
՚ի միւսոյն։

Զօրօրինակ ուրախութին ոչ է առանց
բաժնի իւրոյ վշտի․ այսպէս արտա-
սուքն ոչ է առանց բաժնի իւրոյ բերկ-
րանէ․ Ուրախութին և ցաւն, թէպէտ
և աննմանք, միաւորեալ են․ ընտրութ
մեր միայն կարէ փոխարկել զնա ան-
խառն։

Նոյն իսկ սեւամաղձն յաճախակի բերէ
զբերկրութի․ և վերջին ուրախութիւ-
խառնեալ է արտասուօք։

Որչափ բարեգոյն իցէ իրն, ՚ի ձեռին
յիմարի կարէ լինել եղծումն իւր․ բայց
իմաստունն գիտէ շրջել զչարն պարա-
կային յօգուտ իւր։

Տկարութին մի մարդ է ցանկալի խառ-
նել ՚ի բնութեն քում, մինչզի դու ոչ
ունիս զօրութ լինելոյ ոչ ողջոյն բարի

և ոչ ողջոյն չար․ Մխիթարեա՛ց, զի ոչ կարես չափանցանցել 'ի չարն․ և լե՛ր շատացեալ, զի բարի ինչ է յիշխանութե քում :

Առաքինութիւնք բաշխեալ են յուրոյն կայաւորութս․ մի՛ խնդրեր զանկարելին․ և մի՛ վշտանար եթէ ոչ կարես ստանալ զամ :

Կամէիր ունել միանգամայն զազատականութի Հարստի և զբաւականութեի աղքատի․ կամ անգոսնէիր զկին ծոցոյ քո․ մա զի երեւ ոչ ունել զժուժկալութի այրոյ :

Եթէ Հայր քո լինիցի թշնամի Հայրենեաց, և ապա անկցի յիշխանութի քո, զիա՞րդ կարես 'ի միում Հաղի կատարել զարդարութի պատժելով զնա, և զորդիական պարտականութի քո, ապրեցուցանելով զկեանս նր :

Եթէ տեսանես զեղբայր քո 'ի տագնապս յամի երեք մաՀու, ո՞չ լինէր սէր աղ ժախճան կենաց նր․ Բայց մաՀ իւր ո՞չ առնէր զքեզ լինել սպանող նր :

Ճշմարտութին է մի միայն․ երկմտութիք քո ծնանին 'ի քէն․ Նա, որ արար զառաքինութիս, որպէս և են, եդ իսկ 'ի քեզ ինքն զՃանաչումն իմն գերակայութե նց․

նց ․ Գործեա՛ որպէս քարոզէ քեզ հոգիդ, և վախճանն եղիցի արդար ։

## ՀԱՏՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ ․

### Անբաւականութի իմաստութե ։

Եթէ է իր ինչ սիրելի, եթէ գոյ իր ինչ ցանկալի, եթէ գոյ իր ինչ 'ի մարդն, որ լիցէ արժանի գովուե ո՞չ ապաքէն այն է գիտութին ․ և սակայն ո՞ երբէք հասանէ այնմ ։

Քաղաքականն պարծի ունել զայն ․ օրէնսդիրն մեծամոի այնու ․ այլ թերևս սորուկն տեսանէ զստութի ձկտութեց նոցա ․

Չարն ոչ է էական պայմանի մարդոյ ․ և ոչ իսկ հարկաւոր է, թէ լիցէ ներեալ մոլութին․ և սակայն ո՞րքան չարիք թոյլ տուեալ են յանտես առնելոյ օրինաց ․ և ո՞րքան եղեռնութիք գործեալք վճռովք խորհրդարանաց ։

Այց լէր իմաստուն ո՛վ օրէնսդիր ․ և ուսիր ո՛վ դու, որ ես 'ի հրամանատարուե ազգաց ․ յանցանք ինչ հրա-

մոլեալ 'ի քէն, չարագոյն է քան թէ տուժ: յանցաւորք փրծանիցին յարդարութէ :

Յորժամ ժողովուրդ քո բազմանայ, յորժամ որդիք քո աճեն շուրջ զսեղանով քով, դու տաւքես զնա որտաքս ա 'ի տպանանել զանձինս. և անկանել սրով նյ, որք ոչ երբէք խուեալ են:

Մեղկեա և տարփոյ բաղձանաց քոց զարտաք գոյանալ կենօք Հազարաւորաց. ո՞չ ապաքէն Հանդերձ այսու ամբե տես դու, ես կամիմ ունել զայն. Աստուածապէս ո՛չ յիշես դու յայնժամ, թէ ես, որ տանջեն զքեզ, տանջեալ է նաև զսոսա. և թէ արիւն նոյ է այնչափ մեծագին որչափ քոյն:

Ասես, թէ արդարութիւն ոչ կարէ կատարել առանց պատժառելոյ զանիրաւութիւն. սուտ գապէս յաուկ խօսք քո դատապարտեն զքեզ:

Դու որ սուտ յուսովք Համոզես զմեղապարտ մի, որպ զի խոստովանեսցի զյանցանս իւր, ո՞չ ես դու յանցաւոր առ նա. և մի թէ յանցաւորուի քո եղեցի փոքրագոյն, վա զի նա ոչ է կարող պատժել զքեզ:

Յորժամ դատապարտես զնա 'ի տանջանս,

ջանս, զորմէ լոյծ միայն կասկած չարի. ոչ զմտաւ ածես, թէ գուցէ տանջես զանմեղ մի. և համեմատեցի արդեօք զերկուցածն զխաման քում. եղիցի հոգի քո հանգուցեալ 'ի խոստովանութեան ն՛ր. ցաւն կարէ տոկալ զնա ասել զատա այնչափ զերբակի, որչափ զճշմարտու_թիւն. և անձկութիւն կարէ բանադատել զանմեղութիւն ամբաստանել զանձն իւր ։

Մա. 'ի ոչ սպանանել զնա առանց իրա_ւանց, առնես շարագոյն քան զսպանա_նելն. առ 'ի խնայել, եթէ է յանցաւոր, եղծանես զնա, թէ և իցէ անմեղ ։

Մ՛ի անզգայութես մն ճշմարտութե. ով անբաւականութե իմաստութե մարդոյ. զի_տեմ զի յորժամ դատաւոր քո արտա_ցէ քեզ տալ համար դայսմանէ, կա_մէիր մանաւանդ, թէ թողեալ էիր փրծանել տասն հազար յանցաւորս, քան թէ լինել ամբաստանեալ 'ի միոջէ և եթ անմեղէ ։

Գոլով անբաւական առ պահպանութի արդարութե, զխորդ հասանիցես առ ճա_նաչումն ճշմարտութե. զխորդ 'ի վեր երանիցես առ ոտս աթոռոյ ն՛ր ։

Որ որինակ շղթեկն կուրացեալ է 'ի շառաւիղացն արեւու, այսպէս պայծառ

տեսիլ ճշմարտութե շլացուցանէ զքեզ ՚ի մերձենալն քո առ նա:

Եթէ կամիս ՚ի վեր ելանել առ աթոռ նր, նախ խոնարհեցո զքեզ առ ոտս նր. եթէ կամիս ժամանել առ ճանաչումն նր, տեղեկացիր նախ սեպհական տգիտութե քում:

Յաւել մեծագին է այն քան զմարգարիտս. նմին երբ խնդրես զնա հանապազորդութբ. զմրուխտն, շափիւղայն, և յակինթն են որպէս աւազ առ ոտս նր. Դու այսօրինակ հետամուտ լեր այնմ եռանդեամբ:

Ճանապարհն, որ ածէ առ նա, է աշխատութիւն. մտադրութիւն է նաւուղիղ, որ առաջնորդէ ՚ի նաւահանգիստս նր. Բայց մի վաստակեսցիս ՚ի ճանապարհին. քանզի մինչ ժամանեսցես՝ աշխատութիւն եղիցի քեզ հեշտութիւն:

Մի՛ ասեր յանձին քում. ահա ճշմարտութին տայ ծնանել զատելութի. և ես կամիմ խորշիլ յայնմանէ. կեղծաւորութին պաճառէ զբարեկամս. և ես կամիմ հետևել այնմ. Ոչ. ապաքէն ճշմարտութբ եղեալ են թշնամիք, և լաւագոյնք ՚ի բարեկամաց ստացեալք սուտակապաշտութեամբ:

Ինա_

Նախանձաւոր մարդն ցանկայ ճշմարտութե. և սակայն յորժամ է 'ի ներկայութե, ոչ կամի խմանալ զայն. և եթէ լինիցի նմա ապացուցեալ, գժգմնի յայնմանէ :

Պակասութիւն ոչ է 'ի ճշմարտութե. քանզի սիրելի է այն. այլ տկարութի մարդոյ ոչ կարէ հանդուրժել ճառագայթի նր :

Կամիս տեսանել առաւել յայտնապէս զանբաւականութիւն քո, նկատեա ըզքեզ 'ի պաշտօնամիրութիւնս քո. Ա՛ռ ինչ վախճան սահմանեալ է կրօնն, բայց եթէ տա 'ի ցուցանել քեզ զտկարութիւնս քո, տա 'ի յիշեցուցանել քեզ զյողդողդութիւնս քո, տա 'ի յայտնել քեզ, թէ յերկնից միայն կարես յուսալ զբարին :

Ո՞չ ապաքէն յիշեցուցանէ քեզ այն, թէ 'ի հողոյ ես. Ո՞չ ցուցանէ քեզ, թէ 'ի մոխրոյ ես. և ահա զղջումն ծնանի 'ի տկարութե :

Յորժամ առնես զերդումն ինչ. յորժամ խոստանաս ոչ խաբել, ահաւանիկ դու շառագնիս, և շառագնին եւ նա, որ ընդունին զայն. Ուսիր լինել արդար, և զղջումն եղիցի քեզ անծանօթ.

ուսիր

ուսիր լինել պատուական , ( այսինքն բողէհլի )․ և երդմունք եղիցին անպի_ տանք :

Առաւել սուտ մոլեգնութիւք են բարե_ գործք․ վս՟ այսորիկ մի տար անձին քում , թէ ես ոչ կամիմ լինել կէս յիմար :

Նա , որ լսէ համբերութբ գովասանս իւր , խրատեսցէ զայլս անվեհերարար :

Նա , որ հա գհերքումն ինչ իրաւամբք , կրեսցէ շողոմորութբ զմերժումն իմն :

Եթէ իցէ ինչ կասկած զ.րէն , տուր պա_ տասխանի համարձակութբ ․ մեղապարտն միայն պարտի զարհուրել 'ի կասկա_ ծանաց :

Մարդ գթասիրտ շարժեալ է յողոր_ մանաց , իսկ ամբարտաւանն տաւել յամառեալ յաղաչանաց ․ Զգացումն անբաւականութե քո հրամայէ քեզ լսել․ բայց առ 'ի լինել արդար պար_ տես լսել առանց կրից :

# ՀԱՏՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

## Թշուառութ՟ի.

Անզօր է և անբաւական՝ որպէս ես ո՜վ մարդ առ բարին. բեկանուտ և ան֊ կայուն՝ որպէս ես ՚ի հեշտութիւնս քո. տակայն է ինչ մի, յորում անսայթա֊ քելի ես. և այս կոչի ողորմելու՟ի կամ թշուառութ՟ի :

Այս է նշան էութե՟ քո. սեպհականութ՟ի բնութե՟ քո, ՚ի սիրտ քո միայն դադարի, առանց քո է ոչ ինչ. և ահա այն յա֊ ռաջ գայ ՚ի սեպհական կրից քոց :

Նա, որ ետ քեզ զայսոսիկ, ետ քեզ նաև զբանականութի՟ առ ՚ի նուաճել զնս՟. ՚ի գործ ած զայն. և այսպէս առոտն կոխեսցես զնս՟ :

Մ՚ուտ քո յաշխարհ ոչ է նկատեալ իբր ամօթալի. այլ եղծումն քո հա֊ մարեալ է պատուաւոր, Մ՚արդիկ զար֊ դարեն զգործիս մահու ոսկւովք և ա֊ կամբք. և տանին զնս՟ իբր արտաքին զար֊ դարանք :

Նա, որ ծնանի զմարդ մի, ջանայ թա֊

քու֊

քուցանել զանձն . բայց նա, որ սպա_նանէ զհպարտութս ՝ի մարդկանէ, շքով պատուեալ լինի :

Ո՞վ ծանէր, զի այս է մոլորութի՛ իմն :

Մոլորութիւն ոչ կարէ սկսանել զբնութիւն ճշմարտութե . և ոչ կարծեք մարդոյ կա_րող է եղծանել զարդարութիւն . Փառքն և ամօթն սատանօր ոչ են բարուք յար_մարեալ :

Մի միայն է ճգհն, ընդ որ մարդ մի կարէ յառաջ ածել . հպարտութք են այնք, որովք կարէ եղծանել :

Տալն զկեանս միում ումեք ո՛չ է, ոչ գովութի և ոչ պատիւ . Բայց յաղթա_նակք և կայսերութիւնք են տրիտուք մարդասպանութե :

Զանգերձ այսու նա, որ ունի զբա_գումորդիս, ունի բա՛ զբազում օրհնու_թիս . Բայց նա, որ եբարձ զկեանս այլոյ ուրուք, ո՛չ վայելեսցէ յիւր սեպհա_կանն :

Այրագն, որ անիծանէ զծնունդ որդ_ւոյ իւրոյ, և օրհնէ զմահ հօր իւրոյ, պարտի համարել հրէշ իմն :

Մարդն կրէ զչարիս բաւականապէս . բայց յաւել մեծացուցանէ զնա տրտն_ջելովն :

Մի_

Մեծագոյնն 'ի մարդկային չարեաց է սրտցաւութիւն. կարէ եւս շատ յայսմանէ առհմանել է քեզ կանխաւ. ապա մի՛ աճեցուցաներ զայն վատթարութ՛ք քով։

Ցաւն բնական է քեզ. եւ կայ միշտ շուրջ զքեւ. բերկրութիւն օտարական է, եւ այց առնէ քեզ ցանցաղակի. 'ի գործ ած բարւոք զբանականութիւն քո. այսպէս տրտմութիւն հեռի եղիցի 'ի քէն, լեր խոհեմ. եւ այցելուք ուրախու՛ն կացցեն ընդ քեզ բազում ժամանակ։

Իւրաքանչիւր մասն կազմուածոյ քո է ընդունակ ցաւոյ. այլ սակաւ եւ անձուկ են շաւիղք, որք առաջնորդեն առ բերկրութի։

Հեշտութիւնք ոչ կարեն ընկալեալ լինել, բայց եթէ մի առ մի. բայց վիշտք յարձակին 'ի վեր հազարաւորք 'ի նմին ժամանակի։

Որպէս բոց յարդի շիջանի իբր հազիւ լուցեալ. այսպէս փախչի ճաճանչ ուրախու՛ե. եւ դու ոչ գիտես, թէ զինչ յայնմանէ յառաջ գայ։

Սրտցաւութիւն է յաճախ. բերկրութիւն է ծանծաղ. վիշտն գայ ինքնին. զհեշտութիւն պարտ է գնել. ցաւն է զուտ. բայց ուրախութիւն ոչ երբեք զուրկ է 'ի տագնապէ իմիքէ։

Օր

Ո՛վ որ օրինակ նուազ զգայուն եմք կա-
տարելութեան առողջութեան քան թէ փոքրիկ
ինչ հիւանդութեան. այսպէս մեծ ինչ ու-
րախութեան նուազ զգայի մեզ քան թէ
փոքր մի տաղնապ:

Երեւեմք հարեալ ՚ի սէր անձկութեան.
բազում անգամ՝ փախչեմք ՚ի հեշտութենէ.
և յորժամ՝ ստանամք զայն՝ ոչ լինի մեզ
աւելի քան զայն, որ արժէ:

Մտախոհութեան պարտի լինել զբաղումն
մարդոյ. ճանաչումն վիճակի իւրոյ է
առաջին պարտականութիւն իւր. բայց ո՞
յիշեսցէ զանձն յուրախութեան. ապա
ուրեմն ողորմութիւն նշանակեալ է մեզ մխ-
տագնութի:

Մարդն նախատեսանէ զչարն, որ գալոց
է. յիշատակէ զանցեալն. ոչ զայլ ինչ
խորհի, բայց եթէ զտառապանս. և
այնու պատճառէ զայնքան վիշտ, որ-
քան նոյն իսկ տառապանքն. Մի՛ խորհիր
զվիշտ քո, բայց եթէ յորժամ՝ եկեսցէ
՚ի վր քո. և այսպէս խորշեսցես յայն-
մանէ, որ արասցէ քեզ աւելի չար.
Նա որ լայ յառաջ քան զանկելն զպատ-
ճառ լալոյ, լայ աւելի քան զպիտոյսն.
և ընդէ՞ր. վա զի սիրէ զլալն:
Նշդեհուն ոչ լայ, մինչև տեղն ոչ իցէ
աւմ_

ամբարձեալ ընդդէմ նր. և ոչ հաւէն արտասուք չնչրւոյն, մինչև առաջեա_նեին ոչ է մնա առ՝ ի բմբռնել զնա. մի կանխեցուցանէ զմահն երեւակայութե նորին. և երկիւղն է թշուառութի իմն մեծագոյն քան զնոյն իսկ դիպուածն։

Լեր միշտ պատրաստ առ՝ ի տալ դհա_մար գործոց քոց. և մահ լաւագոյն այն է, որ է նման նախախոր_հեալ։

## ՀԱՏՈՒԱԾ ՎԵՑԵՐՈՐԴ.

### Դատումն.

Մեծագոյն պարգև տուեալ մարդոյ է դատումն և կամքն. երջանիկ է նա, որ գիտէ բարեպէս ՝ի գործ ածել զայնս։ Օ որ օրինակ հեղեղատն, որ ընթանայ ՝ի լերանց, քանդէ զայն ամ, որ տեղի տայ բռնուե նր, այսպէս կարծիքն աշ_խարհի աղօտացուցանէ զբանականութի նր, որ համակերպ լինի այնմ առանց անկոյ, թէ զինչ է հիմնաւորութի բո։ Հայեաց, զի մի այն, զոր դու ընդունիս

երբ ճշմարտութի , իցէ միայն ստուեր . այն , որ երեւի յաղթահարող . յանձա_խակի է միայն հաւանական եւ բարե_տեսիլ . Մեր հաստատուն . լեր կայուն . ի ձեռ. հաստ դու ինքնին . այսպէս եղիցիս պարտական պատասխանի տալոյ միայն վ՟ սխալանաց քոց :

Մի՛ ասեր , թէ գործն եղիցի փորձ արժանաւորութե գործողութեան . յուշ լիցի քեզ, զի մարդն ոչ է վերագոյն ազդե_ցուեց պատահմանցն :

Մի՛ դատապարտեր զդատումն այլոյ ու_րուք , վ՟ զի է տարբեր 'ի քումմէն . միթէ ոչ կարէք երկոքեան լինել 'ի մոլորութեան :

Յորժամ վարկանես զմարդ մի վ՟ պա_տուանուանց իւրոց , եւ արհամարհես զտարն , վ՟ զի զուրկ է յայնցանէ , ո՞չ ապաքէն դատես զուղղն 'ի պակսցէ նորա :

Մի՛ խորհեր վրէժ առնել 'ի թշնամ_ւոյ քումմէ , յորժամ սպանանես զնա . դու բարձեր զնա յիշխանութէ քումմէ , դու եդուր նմա զհանգիստ , եւ կորուսեր զամ հանգամանս վնասելոյ նմա :

Եթէ մայր քո , կամ կին քո է անժուժ_կալ , ընդէ՞ր պարտիս ցաւել յորժամ

'է նա_

նախատիս այնու․ նա, որ անարգէ զքեզ
վն այսր, դատապարտէ զանձն իւր․ վն
զի Թերեւս պարտակա́ն ես դու պատաս_
խանի տալոյ վն այլոց ախտից ։

Մի՛ լինիր տժգոհ ՚ի վ՛ր այնր, զոր
ստացար․ և մի՛ դներ կարի շատ գին ՚ի
վ՛ր իւրոցն ստացելոց յայլոց․ ստացումն
վն իմաստնոյ ուրումն է յաւելուած իմն
գնոյ ։

Մի՛ նուաղ մեծարեր զկին քո․ վն զի
է յիշխանութե քում, ապա խոտեա́ զա_
ռակն զայն, որ ասէ․ կամիս սակա
սիրել զկինն, հարսնացի́ զնա քեզ․ Այն,
որ եդ զնա յիշխանութե քում, եդև
վստահութի ՚նր յառաքինութե քում․ և
միթէ պարտիս սիրել զնա նուաղ, գոլով
նմա առաւել պարտական ։

ԵԹէ դու եղեր անկեղծ ՚ի քոյդ առա_
ջին յայտարարութե սիրոյ, և այժմ ըն_
տունգանես, վն զի է քո, այսու կորուստ
՚նր եղիցի դառն հոգւոյ քում ։

Նա, որ նախադասէ զայլ ոք կին՝ միայն
վն զի ստացեալ է զնա, եթէ ոչ է
առաւել իմաստուն քան զքեզ, գոնէ է
առաւել երջանիկ ։

Մի՛ վարկանիր զկորուստն, զոր կրեալ
է բարեկամ քո, յարտասուացն, զոր

հեղու . մեծամեծ չարեք վերագոյն են այսպիսի յայտարարութեց :

Մի՛ յարգոյ համարիր զգործողութի՛ւն ինչ . զոր զի արարեալ է հաշակաւ և շքով . ազնուական հոգին այն է , որ առնէ զմեծամեծ գործողութիւնս, և ոչ է ալայլեալ 'ի առնելն զայնոսիկ :

Համբաւն շռուցանէ զականջս լսողին . այլ անդորրութի՛ւն մխիթարէ զսիրտ նորա , որ ստացեալ ունի զայն :

Մի՛ վերագրեր զբարի գործողութիւս այլոյրուք վատթար պատճառաց . դու ոչ կարես ճանաչել զսիրտ ն՛ր . այլ աշխարհս տեսանէր յայսմանէ , թէ քոյն է լի յաչաղանօք :

'Ի կեղծաւորութե՛ է այնչափ յիմարութի՛ , որչափ է ախտն . քանզի լինելն պատուական ոչ է դժուարագոյն քան զերևելն :

Լե՛ր առաւել պատրաստ 'ի վերաճանաչել զբարերարութի ինչ՝ քան թէ 'ի վրէժխնդրել անիրաւութե՛ իրիք . այսպէս արարեալ լինիցին քեզ աւելի բարերարութի՛ք , քան թէ անիրաւութի՛ք :

Լե՛ր առաւել պատրաստ առ 'ի սիրել . քան առ 'ի ատել . այսպէս եղիցիս առաւել սիրեցեալ քան ատեցեալ :

Լե՛ր

Լեր արագ ՚ի գովել, և յամր ՚ի դատել. այսպէս գովեսցին առաքինութիւնք քո. և աչք թշնամուն եղիցին երկզապնտեալք առ անկատարութիս քո:

Յորժամ առնես զբարի, արա զայն, վ՟ զի է բարի. ոչ վ՟ լինելոյ գովեալ ՚ի մարդկանէ. Յորժամ խորշիս ՚ի չարէ, խորշեա՛ց յայնմանէ, վ՟ զի է չար. ոչ վ՟ զի մարդիկ խօսիցեն քեզ ընդդէմ. Լեր պատուական վ՟ սիրոյ պատուականութեն. և եղիցիս միշտ միակերպ. Նա, որ գործէ առանց սկզբան, տարտամ է: Յանկա՛ մանաւանդ յանդիմանել յիմաստնոյ, քան գովել յամբէ. որ ոչ ունի զիմացողութի. վ՟ զի յորժամ դք ազդառնէ քեզ վ՟ իրիք սխալանաց, ենթադրէ, թէ դու կարող ես ուղղել զքեզ. և այլ դք յորժամ գովէ զքեզ, խորհի թէ դու յիմար ես իբրև զնա:

Մ՚ի ընդունիր զպաշտօն իմն, վ՟ որոյ ոչ ես ըմբռնն. ապա թէ ոչ, նա՝ որ առաւել տեղեակ է այնմ, արհամարհեսցէ զքեզ:

Մ՚ի ուսուցաներ այլում ումեք զայն, զոր դու իսկ անգիտանաս. վ՟ զի յորժամ իրազեկ լինիցի նա, կշտամբեսցէ զքեզ:

Մի՛ սպասեր բարեկամութե՛ն ՚ի նմանէ, որ նախատեացն զքեզ. նա, որ ընկալաւ զանիրաւութի՛ւն, կարէ պարաւանդել զնա. բայց նա որ առնէ զայն, ոչ ևս կարէ լինել բարի ընդ նմա:

Մի՛ պարաւանդեր կարի իմն զոք, որ փափագի լինել քեզ բարեկամ. զգուշութիւն երախտեաց, զոր նա ոչ կարասցէ հատուցանել, պարտի հեռացուցանել զնա ՚ի քէն. փոքրիկ իմն շնորհ կարէ ստարացուցանել զբարեկամութիւն. և մեծ ինչ շնորհ կարէ գրգռել զոք ՚ի լինել թշնամի:

Զանգերձ այսու ապերախտութի՛ւն ո՛չ է բնական մարդոյ. և ոչ ցասումն իւր է անհաշտելի. Ատեայ զյիշատակին երեք պարտուց, զոր ոչ կարէ վճարել. և ամաչէ յառաջիկայութե՛ն նր, որում՝ արար զչար.

Մի՛ լինիր տժգոհ իւր բարւոյն, որ պատահի ստարի ումեք. և մի՛ խնդար ընդ չարն, որ պատահի թշնամւոյ քում. գիտե՛ս, զի և այլք արասցեն զնոյն ընդ քեզ:

Կամի՞ս վայելել ՚ի բարեկամութե՛ն ամենայն մարդկան, արա՛, զի բարեկամութի՛ւն քո իցէ հանրական. եթէ այսուիկ ոչ ստա_

տանաս զայն , չէք այլ հանգամանք տանայոյ. և ծանիր , զի թէ և ոչ ունիս զայն , գոնէ ունիս զհաճունին արժանաւորեալ լինելոյ այնմ :

## ՀԱՏՈՒԱԾ ԵՕԹՆԵՐՈՐԴ ·

### Մեծամտութիւն ·

Ամպարտութիւն և խոնարհութիւն երկէն անմիաբանականք · այլ մարդն միաբանեցուցանէ զհակառակս · ՚ի նմին ժամանակի է առաւել ողորմելին և առաւել ամբարտաւանն քան զոմ արարած :

Մեծամտութիւն է թոյն մտաց · ծնող մոլորութե · և հանդերձ այսու ՚ի մեզ միաբանի ընդ տրամաբանութե :

Ո՞ է նա , որ ոչ դատիցի կարի իմն բարձր զանձնէ իւրմէ · կամ ոչ խորհեցի կարի ցածունս զայլոց :

Եթէ նոյն ինքն արարիչն մեր ոչ զերծանի ՚ի մեծամտութէ մերմէ , զիա՞րդ ընալինիցիմք մեք ապահով ՚ի միմեանց :

Օ՜ինչ է սկիզբն նորակրօնութե · և ուստի՞ յառաջ գայ սուտ վարդապետութիւն ·

'ի մեծամտելոյ մերմէ տրամաբանել 'ի մի այնր, որ է արտաքոյ ծրի Հասողուն մերոյ, և ըմբռնել զայն, որ է անըմբռնելի ։

Կոպարաւոր և տկար են տեսութիւնք մեր. և սակայն մեք ոչ ծառայեցուցանեմք միշտ զփոքրիկ զօրութիւնս նր, որպէս պարտիմք. 'Ի խոկալն զմեծութիւն արարչին, խոկմունք մեր ոչ վերանան, ոնց պարտին. և ոչ ևս տամք թեւս իմանալի տեսակաց մերոց յորժամ մտանեմք յերկրպագութիւն ածութեան ։

Մարդն, որ զանգիտէ խօսել նաև ցածաձայն ընդդէմ ինքնիշխանին իւրոյ, ոչ սարսի դատել զանօրէնութիւնս Այ իւրոյ. և մոռանալով զմեծվայելչութիւն նր, ձկտի քննել զդատաստանս նր ։

Նա, որ ոչ իշխէ արտասանել զանուն արքային իւրոյ առանց պատուոյ, ոչ շառագնի կոչել զանուն Հաստչին իւրոյ 'ի վկայութիւն երբեք սուտ ։

Նա, որ ունկնդիր լինի լռութե վճռոց դատաւորաց առանց կրկնելոյ, իշխէ դատախազել ընդ ամենակալին. Նկրտի Համոզել զնա երդմնեցուցմամբք, ողոքել զնա խոստմամբք, դնել ընդ նմա պայմանս. և յանդգնի Թշնամանել և տրտն-

ջել

ջել ընդդէմ նր, եթէ խնդիր իւր ոչ է յոխյի եղեալ ։

Ընդէ՞ր ո՞վ մարդ կաս դու անպատիժ յամբարշտութե քում․ ընդէ՞ր այս ոչ է որ հատուցման քո ։

Մ՚ի լինէր նման նչ, որք պատերազմին ընդ որոտման․ մի գլանար արարչին քում զաղօթս քո․ վ՛ն զի պատուհասէ ՚նա գ․րեզ․ Մ՚ոլեգնուն քո յայսմ շրջեսցի ընդդէմ քո․ ամբարշտութի քո ոչ վնասեսցէ, բայց եթէ անձին քում ։

Ս՚աուն էր հաւատայ մարդն լինել ՚ի շնորհս արարչին իւրոյ․ և սակայն ըստունգանէ հատուցանել նմա զպատահարկութիւս և գերկրպագութիւս, որք վ՛ն այսր վայել են նմա, Օ՛ մարդ համաձայնի այսպիսի իմն կեանք ընդ այսպիսի իմն ամբարտաւան կարծեաց ։

Մ՚արդն, որ ոչ այլինչ է, բայց եթէ շամանդաղ ինչ, կամ հիւլէ յընդարձակ տարածութե, հաւատայ, թէ բոլանդակ երկիր և երկինք իցեն հաստեալ վ՛ն իւր․ խորհի, թէ բոլանդակ կարգ բնութե իցէ փոյթ վ՛ն բարի լինելոյ նր։

Որպէս յիմարն, որ հայի ՚ի պատկերսն, որք փայլեն ՚ի ջուրս, խորհի, թէ շրջակայ առարկայք շարժիցին առ տալ ըզ-

բերկրու՛ն , այսպէս մարդն , որ տեսանէ զբնութի՛ն առնել զսահմանեալ ընթացս իւր , պատկերացուցանէ յինքեան , թէ բոլոր այսորիկ շարժմունք էին արար-եալք միայն վ͂ զբօսանաց Նորա.

Յորժամ զգայ զշողս արեւու , որք ջեր-մացուցանեն զնա , ենթադրէ , թէ Նա արարեալ եղեւ միայն վ͂ ծառայելոյ Նմա. Իբրեւ տեսանէ զլուսինն 'ի գիշերային շաւիղս իւր , հաւատայ , թէ իցէ ստեղ-ծեալ առ 'ի տալ Նմա զուարճութի՛ն :

Յիմար Նոյն իսկ հպարտութ͂ քով . լե՛ր խոնարհ . եւ ծանի՛ր , զի դու չես պատ-ճառ , որոյ վ͂ աշխարհս շարունակէ զընթացս իւր . վ͂ քո ոչ են արարեալ յաջորդութիւնք ամառան եւ ձմեռան :

Ո՛չ ծնանէր յայսոսիկ փոփոխու͂ ինչ , եթէ ոչ գոյր ոք 'ի տեսակէ քումմէ , եւ դու ես մի միայն 'ի մէջ միլիոնից , որք վայելեն յայսոսիկ օրհնութի՛ս :

Մի՛ ամբառնար զքեզ յերկինս . քանզի ահա հրեշտակք են վերնագոյն քան զքեզ . եւ մի՛ անարժան համարիր զայլ ընկերս քո բնակեալս յերկրի . վ͂ զի են 'ի Ներ-քոյ քո . ո՞չ ապաքէն ամենեքին Նոքա են գործ Նոյն ձեռին :

Դու , որ երջանիկ ես շնորհօք արարչին

քո, զի՞նչ իշխանութիւն ունիս դնել ՚ի
տանջանս զայլ արարածս իւր. զգո՛յշ լեր.
զի մի դարձցի այս ընդդէմ քո։
Ո՞չ ծառայեն և նոքա ընդ քեզ նմին նմա.
ո՞չ եդ նա զօրէնս իւր նաև ՚ի մէջ նոցա.
ո՞չ ունի նա փոյթ վ՟ն պահպանութե նց.
և դու իշխես լուծանել զայն։
Մի՛ համարիր զատել լաւագոյն քան
զբոլոր աշխարհ, և մի դատապարտեր
իբր սուտ զայն, որ ոչ համաձայնի ընդ
ըմբռնման քում. Ո՞ւստ քեզ իշխանութի
վճիռ հատանելոյ վ՟ն այլոց. կամ ո՞ եբարձ
զիրաւունս ընտրութե այլոց։
Որքան իրք, որք մերժեալ են, այժմ
ընկալեալ են իբր ճշմարտութի. և որ-
քանիք, որք այժմ ընկալեալ են իբր
ճշմարիտք, եղիցին յետոյ անարգեալ.
փոփոխակի. ապա զորմէ՞ երբէք մարդն
կարէ լինել ապահով։
Արա՛ զբարին, զոր ճանաչես. և եր-
ջանկութիւն եղիցի առ քեզ. Առաքի-
նութիւն է առաւել իրակութի քո աս-
տանօր, քան թէ իմաստութիւն։
Ճշմարիտն և սուտն առաջի մատուցա-
նին ընդ նոյն երեւութիւ, յայնժամ,
որում մեք ոչ կարեմք հասու լինել.
զինչ ապա, բայց եթէ մեծամտու-
թի

թի մեր կարասցէ ձկտել բացորոշել ։
Մ՛եք դիւրաւ հաւատամք զայն, որ է ՚ի վեր քան զիմացողութի մեր. հպարտութի մեր առնէ մեզ յայս ձկտել, առ ՚ի տալ հաւատալ, թէ իմանամք զայն. Ո՞չ է այս յիմարութի և յանդգնութիւն ։

Ո՞վ է նա, որ գիտէ առնել համարձակուէ. Ո՞ է նա, որ ջատագովէ առաւել յամառուէ զկարծիս իւր. Մ՛իշտ նա, որ է առաւել տգէտ. վ՟ն զի միանգամայն է և առաւել հպարտ ։

Ա՛մ մարդ, որ տոգորեալ է կարծեօք իւրովք, ցանկայ մնալ ՚ի նմին. բայց առաւել քան զամենեսին նա, որ ունի աւելի մեծամտութի. Ն՛ա ոչ շատանայ մուծանելով յայն զոգի իւր, այլ կամի պարաւանդել նաև զայլս առ ՚ի հաւատալ զայն ։

Մ՛ի ասիցես, թէ ճշմարտութին հաստատեալ է ՚ի բզմ՟ ամաց, կամ թէ ստուգութին իցէ կայունացեալ վ՟ն բազմութե՟ նց, որք հաւատան ։

Մ՛ի առաջադրու՛ի մարդկային ունի զայնքան աւագութի, որքան մեան,
եթէ փաստն ոչ արասցէ ՚ի
նա տարբերութի ։

Գ. Ր.-

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.

Ախորժակք մարդոյ, որք վնասակարք են ինքեան և այլոց :

## ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

### Ագահութիւն :

Հարստութիւնք ոչ են արժանի մեծի իմիք ուշադրութե. վ՟ն այսորիկ ոչ է արդարացուցանելի մեծ իմն հոգածութիւն վ՟ն ստանալոյ զնա :

Ըղձութիւն այնորիկ, զոր մարդն կոչէ բարի, և ուրախութիւն, զոր ցուցանէ 'ի ստանալն զայն, հիմնեալ է միայն 'ի կարծիս. Մի՛ եղիցիս առաջնորդեալ կարծեօք խաժամուժին. քննեա՛ դու ինքնին զարժողութի իրաց. և ոչ լինիցիս ագահ :

Անչափաւոր իմն ցանկութիւն հարստութեանց է թոյն իմն մուծեալ 'ի հոգւոյ. Նա ապականէ և խանգարէ զամ՟ բարի, որ 'ի նմա. և իսկոյն ընդ արմատանալն՝

նամ

ամ առաքինութի , ամ պատուականու_
թի , ամ զգայումն բնական նմանութեան :
Ընչաքաղցն փարթամութեանց վաճառէր
զորդիս իւր ընդ ոսկւոյ . Ամօթք իւր
կարէին մեռանել , քանզի նա բանայր
երբէք զարկղ իւր . ոչ խնայէ և ոչ
եւս անձին իւրում յայսմ մասին . և
խնդրելով զերջանկութի, եղանի թշուա_
ռական :

Որպէս մարդ , որ վաճառէ զտուն իւր
առ 'ի գնել այնու զզարդարանս , այսպէս
է նա , որ կորուսանէ զխաղաղութի իւր 'ի
խնդիր փարթամութեց , յուսալով լինել
երջանիկ վայելելով 'ի նոսա :

Ուր թագաւորէ ագահութիւն , ծանիր .
զի հոգին է աղքատ . Նա , որ ոչ հա_
մարի զհարստութիս նախապետական
բարի մարդոյ , ոչ անփոյթ առնէ զայլ
ամ բարեաց առ 'ի 'ի ձեռս բերել զայսո_
սիկ միայն :

Նա , որ ոչ երկնչի յաղքատութէ իբր 'ի
մեծագոյն չարէ բնութե իւրոյ , ոչ կամի
վաճառել զանձն իւր այլ ամ չարեաց
առ 'ի խորշել յայնմանէ :

Ով դու յիմար , տուր պատասխանի .
ոչ է առաւել յարգոյ առաքինութին քան
զհարստութիս . ոչ է անիրաւութին ա_

ռա_

ռաւել անարգ քան զաղքատութիւն . Ա՛մ մարդ կարող է ստանալ ըստ բաւականին մ՚ն պիտոյից իւրոց . լե՛ր շատացեալ այ-սու՛իկ . և երջանկութիւ քո եղիցի քեզ բարեկամ՝ յանհանգստութէ նր . որ կամի գանձել աւելի ։

Բնութիւն թագոյց զոսկին ընդ հողով իբր անարժան տեսութէ . նոյն ինքն զար-ծաթն եւ 'ի ներքոյ ոտից քոց առ 'ի կոխան լինել . Ո՞չ ապաքէն կամեցաւ նա այսու՛իկ զեկուցանել քեզ, թէ ոսկին ոչ է արժանի հայեցուածոց քոց , թէ ար-ծաթն ոչ արժանաւորի մտադրութէ քում ։

Ագահութիւն առաքէ 'ի ներքոյ հողոյ զբիւրաւորս ողորմելեաց . և սոքա հա-նեն 'ի ձեռն բռնաւորաց նց զվրէժս 'ի նոցանէ . որ և փոխառէ զտեարս ա-ռաւել ողորմելիս քան զգերիս իւրեանց ։

Երկիրն պակասի 'ի բարի բերոց իւրոց, ուր առատանայ գանձուք . խոտ ոչ բու-սանի, ուր թագուցեալ է ոսկին ։

Որպէս անդ ձին ոչ գտանէ խոտ , և ոչ ջորին զգարման իւր . որպէս անդէն գաշտք ցորենոյ ոչ ծաղկին առ կողեւք բլրոցն , որպէս ձիթենին ոչ տայ ա-տէն զպտուղ իւր, և ո՛չ որթք զողկոյզս իւրեանց , այսպէս չի՛ք բարի ինչ 'ի

ծոց

ծոց նր , որոյ սիրտն կայ միշտ յարեալ 'ի վ՛ր գանձուց իւրոց :
Զուարթութիւնք ծառայք են իմաստնոյն . բայց բանաւորք են 'ի վ՛ր հոգւոյ յիմարին :
Ագահն ծառայէ ոսկւոյ իւրում . բայց ոսկին ո՛չ ծառայէ նմա . նա ստացեալ ունի զինչս իւր , որպէս հիւանդն զջերմն . այրէ զնա և խոշտանգէ . և ոչ կամի 'ի բաց թողուլ զնա մինչև 'ի մահ :
Ոսկին ապականեաց զառաքինութիւնս բիւրաւորաց . բայց թերևս աճեցոյց զբարի հանգամանս ուրուք :
Ո՛չ ապաքէն առաւել ճոխութի՛ն է 'ի մէջ առաւել չարագործաց . ապա ընդէ՞ր ցանկաս լինել երևելի 'ի ստացմանն նորա :
Ո՛չ լեալ է միշտ ճշմարիտ , զի առաւել իմաստունքն լեալ են չքաւորք . և ո՛չ է իմաստութի՛ն երջանկութի :
Ո՛չ ապաքէն չարագոյնքն 'ի տեսակէ քումմէ ստացեալ են միշտ զմեծ բաժինն . և միթէ վախճան նոցա ո՞չ եղև ապերջանիկ :
Աղքատու՛ին պակասի 'ի բ՛զմ իրաց . բայց արծաթսիրու՛ին զլանայ ինքեան զբոլորն .
Ագահն ոչ կարէ լինել բարի ումեք ընաւ . այլև առ անձն իւր է անգութ :
Լե՛ր ճարտարամիտ 'ի պաճարել զոսկի ,
բայց

բայց լեր առատաձեռն ՚ի բաշխելն զայն . Մ՝արդն ոչ երբէք է այնքան երջանիկ , որքան մինչ հաղորդէ զերջանկութ՛ին այլում՝ ումեք ։

# ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

## Շռայլութիւն ։

Եթէ է մոլութ՛ի իմն մեծագոյն քան զախտն կուտելոյ զհարստութ՛իս , այս եղիցի չարաշար ՚ի գործ ածելն զայնս ։

՚Նա , որ վատնէ շռայլաբար զոմ՛ , զոր ունի աւելորդաբար , գողանայ յաղքատէն զայն , առ որ բնութ՛ին տուեալ է նմա իրաւունս ինչ ։

՚Նա , որ վատնէ զգանձս իւր , ՚ի բաց հրաժարի ՚ի հանգամանացն առնելոյ զբարի . և խափանէ ինքեան զվարժուի առաքինութ՛եց , որք բերեն ընդ իւրեանս զփոխարէնս իւրեանց . որոց վախճանն ոչ այլ ինչ է , բայց եթէ երջանկութ՛իւնն ։

Առաւել դժուարին է լինել երջանիկ հան-

հանդերձ փարթամութեք, քանթէ լինել գոհ գոլով զուրկ ՚ի նոցանէ ․ Մ՛արդն հրամայէ անձին իւրում առաւել դիւրաւ յաղքատութե, քան թէ ՚ի ճոխութե : Ա՛ղքատութիւն ոչ խնդրէ, եթէ ոչ զմի միայն առաքինութի․ այս է, զհամբերութի առ ՚ի տանել այնմ․ Հարուստն յանցաւոր է, եթէ ոչ ունի զսէր, զբարեխառնութի, զխոհեմութի և զայլ բարութեանս :

Ա՛ղքատին յանձնեալ եղև միայն բարին կացուե իւրոյ․ փարթամին վստահացեալ է բարի լինելն հազարաւորաց :

Նա, որ պարգևէ իմաստնապէս զգանձս իւր, տայ ՚ի բաց զաւանդեանս իւր․ Նա, որ խնդրէ դիզանել, աճեցուցանէ զցաւս իւր :

Մ՛ի հրաժարեր ՚ի տալոյ օտարի ումեք զայն, զորոյ ունի զպէտս․ մի զլանար եղբօր քում և ոչ իսկ զայն, որ է սիրելի նաև անձին քում :

Ծ՛անիր, զի առաւել բերկրութի է քեզ զուրկ լինելն յայնց իրաց, զորս տուեալ ես, քան ՚ի ժառանգելն զայնս մեծաւ առատութե առանց գիտելոյ ՚ի գործ ածել զնոսա :

# ՀԱՏՈՒԱԾ ԵՐԲՈՐԴ․

## Վրէժխնդրութիւն ։

Արմատ վրէժխնդրութեան է 'ի տկարութեան ոգւոյ․ առաւել անարգք և երկչոտք աւելի տուեալ են զանձինս այնմ ։

Ո՞վ խոշտանգէ զնոսա, զորս ատեայ․ ո՞վ դնէ 'ի տանջանս զնոսա, որք գողացեալ են․ Անհերոտքն ։

Միայն նոքա․ որք զգայունք են առ նախատինս ինչ, խնդրեն վրէժխնդրել այնմ․ այլ ազնուական ոգին անարժան համարի առնել, թէ այսպիսի ինչ գժգմնեցոյց զիս ։

Եթէ անարգանքն ոչ է անարժան քինախնդրութեան քո, նա, որ առնէ քեզ զայն լինի 'ի նմին ժամանակի անարգ․ և կամեի՞ր դու մտանել 'ի մենամարտութիւն ընդ միում փայրագունի քան զքեզ ։

Արհամարհեա զմարդն, որ ջանայ նախատել զքեզ․ անգոսնեա զնա, որ կամի բերել քեզ վրդովմունս ։

Այսպէս ոչ միայն պահեսցես դու ըզ-

խաղաղութի՛ քո , այլ և ածցես 'ի վ՛ր զբովանդակ պատիժս վրիժուց առանց ցածուցանելոյ զքեզ առ 'ի վրէժխնդրութի՛ ընդդէմ՝ Նորա :

Ո՜ որ օրինակ մրրիկն և որոտումն ոչ առնեն զապաւորութի ինչ յարեգակն կա՛ յաստեղս , այլ Թափին զկատաղութի՛ իւրեանց 'ի վ՛ր քարանց և ծառոց , այսպէս անարգանք ոչ ժամանեն ներգործել 'ի վ՛ր ոգւոյ մեծաց . այլ հըպին 'ի նոսա միայն , որք նմանք են անարգողաց իւրեանց :

Տկարութի՛ հոգւոյ մղէ առ վրէժխնդրութի՛ն , վեհանձն արհամարհէ զխէթս . այն զի բարի առնէ նմա , որ գունգործեաց վրդովել զնա :

Ընդէ՞ր խնդրես զվրէժ ո՛վ մարդ . առ ի՞նչ վախճան հետամուտ լինիս այնմ . Թերևս՝ խորհիս պատժել այսուիկ ըզթշնամին քո . Գիտես՛ , զի յայնմանէ կրեսցես դու ինքն զմեծագոյն տանջանս :

Վրէժխնդրութի՛ն կրծէ զսիրտ Ն՛ր , որ նիւթէ զայն , մինչդեռ նա , ընդդէմ որոյ ուղղեալ է , կայ անդորր :

Անիրաւ է 'ի պատիժսն , զորս ածէ 'ի վ՛ր . վ՛ն զի բնութի՛ն ոչ էր սահմանեալ զայն վ՛ն քո . նա , որ կրէ զանիրա-

րաւուն, ոչ պարտի ներքոյ անկանել այլոց պատժոց. և ոչ պարտի յաւելուլ զցաւ 'ի վէր վշտին, որ պատճառեցաւ նմա յայլմէ :
Մ՝արդն, որ խորհի զվրէժխնդրութին, ոչ շատացեալ մտասուքն, զոր ընկալեալ է, յաւելու 'ի վէր անձկութեց իւրոց ըզ-պատիժն, որ պարտի այլում ումեք. մինչդեռ նա, որ վնասեացն, ծիծաղի, և խնդայ ընդ չարն, զոր թշնամին իւր աճեցուցանէ :
Վրէժխնդրութին ցաւալի է 'ի գիտա-ւորուէն, և վտանգաւոր 'ի կատարմանն. ցանցաղակի հարուածն անկանի ճշգր-տիւ, ուր ուղղեալ եղև. և ահա նա ոչ զմտաւ ածէ, թէ պարտի դառնալ յետս ընդդէմ ինքեան :
Մ՝ինչ քինախնդիրն ջանայ վնասել թըշ-նամւոյ իւրում, բազում անգամ յառաջ ածէ զեղծումն իւր. և մինչ կամի տալ կորուսանել զմի աչն հակառակորդին իւրոյ, կորուսանէ զերկոսեան զիւրսն :
Եթէ ոչ հասանէ ձգտման իւրում, գան-գատէ. եթէ հասանէ, զղջանայ. եր-կիւղն արդարուէ տայ նմա կորուսանել զխաղաղուին ոգւոյ իւրոյ. և խոկումն ձողողելոյ զնա յայնմանէ՝ խռովէ զոգի բարեկամին իւրոյ :

Կարօ՞ղ է մահ հակառակորդին քո յագե-ցուցանել զատելութ՛ի քո. առաքելն զնա 'ի հանգիստ կարէ՞ տալ քեզ զխաղա-ղութ՛ի։

Կամիս դու զղջացուցանել զնա վ՟ս խուէ-լոյն զքեզ. յաղթեա՛ նմա և ներեա՛։ 'Ի մահուան նա ոչ ճանաչէ զվերնա-գունութ՛ի քո, և ոչ ևս զգայ զկարողու-թ՛ի ցասման քո։

Վրէժխնդրութ՛ին պահանջէ, զի վրէժ-խնդիրն յաղթանակեսցէ. և զի նա, որ խուեացն զնա, զգայցէ զօրութ՛ի նր. և զի կրեսցէ հետևաբար զպատիժ ինչ. և զղջանայցէ վ՟ս լինելոյ պատճառ նր։ Այս է վրէժխնդրութ՛ին ներշնչեալ 'ի ցասմանէ. բայց առաւել լրացեալն է արհամարհելն։

Մարդասպանութ՛ին վ՟ս երեք անարգանաց յառաջգայ միայն 'ի փոքրոգութ՛է. նա, որ կատարէ զայն, երկնչի, զի մի՛ թշնա-մին կեցցէ և վրէժխնդիր լինիցի։

Մահն աւարտէ զհակառակութ՛ին. այլ ոչ նորոգէ զհամարումն. սպանանելն է ներգործու՛ի իմն նախազգուշու՛ե. և ոչ քաջասրտու՛ե. կարէ լինել ապահով, այլ ոչ պատուաւոր։

Ինչ է առաւել դիւրին՝ քան զխնդ-

րելն

րեյն զվրէժ վ՟ խեթի իրիք · այլ ոչինչ
այնչափ առնէ զպատիւ , որչափ ներելն
զայն ։

Մեծագոյն յաղթութիւն , զոր մարդն
կարէ ստանալ , է 'ի վ՟ր անձին իւրոյ ·
նա , որ ոչ արժանի համարի վրէժխն֊
դիր լինել վ՟ իրիք անարգանաց , դար֊
ձուցանէ ընդդէմ՝ ն՟ր , որ զայրացոյցն
զնա ։

Յորժամ խորհիս զվրէժխնդրութիւն ,
խոստովանիս, թէ դու զգացեալ ես զխէթ ·
յորժամ գանգատես զայնմանէ , ձա֊
նաչես զքեզ ցաւագնեալ · ապա ուրեմն
կամիս դու յաւելուլ զայս յաղթանակ
'ի վ՟ր հպարտութ՟ե թշնամւոյ քո ։

Ոչ է անարգանք այն , որ ոչ զգացեալ
լինի · ապա զխ՟րդ , որ արհամարհէ
զայն , կարիցէ վրէժխնդիր լինել այնմ ։

Եթէ խորհիս լինել անպատուութ՟ե հան֊
դուրժել անարգանաց իմիք · և յիշխա֊
նուե քում առնել աւելի · այս է , ոչ
թոյլ տալ , զի ունիցի զարտագործու֊
թ՟ի ինչ ։

Նարի օձանք յամօթ առնէն զնա , որ
կամէր լինել քեզ թշնամի · մեծութ՟ի հոգ֊
ւոյ զարհուրեցուցէ զնա , որ խորհէր
վնասել քեզ ։

Որչափ և մեծ իցէ խէթն, առաւել ճշմարիտ և առաւել գեղեցիկ փառք է 'ի ներելն. և որչափ առաւել վրէժխնդրութի՛ն եղիցի արժանի ջատագովութե՛, այնչափ առաւել եղիցի պատիւ 'ի գըթութեանն :

Ունի՞ս դու իրաւունս լինելոյ դատաւոր դատի քում, լինելոյ մի 'ի դատախազից, և հանդերձ այնու արտասանելոյ զվճիռն. Յառաջ քան զդատապարտելն՝ թող, զի այլ ոք ասիցէ, թէ արդար է :

Վրէժխնդիրն երկուցեալ է, և վհատեցեալ. բայց նա, որ գործէ գթութի՛, երկրպագեալ է. գովու՛է գործոց նր՛ մնայ միշտ, և սէր բոլանդակ աշխարհի ձգի 'ի նա :

## ՀԱՏՈՒԱԾ ԶՈՐՐՈՐԴ.

### Անողորմութի՛, Ատելութի՛ և Նախանձ :

Եթէ վրէժխնդրութի՛ն է դարուլելի, զի՞նչ ապա լինիցի անողորմութի՛ն. Ահաւանիկ ունի նա զամ՟ վատթարութի՛ս մի- սոյն,

ռոյն , բայց միշտ պակասին նմա պատճա-ռանք գրգռութեան ։

Մարդիկ հրաժարին յայնմանէ իբր ար-տաքոյ բնութե իւրեանց . և ամաչեն իբր 'ի ներհակէ սրտից իւրեանց . և վն այսր կոչեն զայն ամարդութի ։

Ապա ուստի՞ է ծագումն իւր . յի՞նչ իբրէ մարդկայնոյ յառաջ գայ գոյութի՞ւն . Ահա ահն և երկիւղն , 'ի սոցանէ ծնանի նա ։

Դիւցազն դարձուցանէ զսուսեր իւր ընդ դէմ թշնամւոյ , որ դիմակաց լինի , բայց իբրև նուաճէ զնա , իսկոյն շա-տացեալ է այնուիկ ։

Ճշմարիտ պատիւն ոչ ջանայ եղծանել զոք , որ երկնչի . ոչ է առաքինութի յառ-նելն 'ի մի վայրագունի . Նուաճեա ըզ-յանդուգն , և ներեա խոնարհին , և ընկալցիս զլրացեալ իմն յաղթութի ։

Նա , որ պակասի յառաքինութե առ 'ի հասանել առ այս վախճան , նա , որ ոչ ունի զքաջասրտութի 'ի վեր ելանելոյ անդր , լնու զտեղի յաղթութեն մար-դասպանութե՞ն , և զտեղի վերնագունութեն կատարածին ։

Նա , որ երկնչի յոյ , ընդ վայր հար-կանէ զամ ինչ . Ընդէ՞ր բռնաւորք են

անողորմք · բայց եթէ, զի կեան 'ի
զարհուրանս :

Գոմփոն յարձակի 'ի վ՛ր գէշս, թէ-
պէտ և ոչ իշխէր և ոչ իսկ հայել 'ի
նա, յորժամ էր 'ի կեանս · բայց շունն
որսական՝ պատերազմի ցորչափ կենդանին
է · և ոչ գիշատէ զնա յետոյ :

Քաղաքական պատերազմունք են առաւել
արիւնալիցք · վ՟ն զի նոքա, որք առնեն
զայն, են վեհերոտք · դաւակիցք են սպա-
նողք · զի 'ի մահուան լուծ է · Ո՛չ է
երկիւղն, որ առնէ տեսանել նչ թէ
կարեն մատնել :

Առ 'ի ոչ լինել անողորմ լե՛ր վերագոյն
ատելուն · առ 'ի ոչ լինել տմարդի, մի՛
ցածուցաներ զքեզ առ մախանս :

Իւրաքանչիւր մարդ կարէ նկատել յեր-
կուս տեսիլս · 'ի միում երևեսցի նա
անհանգիստ, 'ի միւսում նուազ ձեռ-
նտակար · խնդրեա՛ նշմարել զնա յայնմ ·
որ նուազ նեղէ զնա · և այսպէս ոչ ու-
նիցիս պատճառ ձեռնտելոյ նմա :

Ո՛ ինչ բնաւ է այն, զոր մարդն ոչ կարէ
առնել զեղանել 'ի բարին իւր · Ո՛ այն-
մանէ, որ առաւել ձեռնտէ մեզ, պար-
տիմք մանաւանդ գանգատել, քան թէ
ատել զնա · Մարդն կարէ հաշտել վերս-
տին

տին ընդ նմա, ընդ որում զանգատէ . բայց ոչ սպանանէ զայլս, եթէ ոչ զնա, զոր ատեայ :

Եթէ զրկեցար դու 'ի յուսացեալ բարերարուէ իմեքէ, մի՛ զայրանար . կորուստ բանականութե՛ քո է կորուստ առաւել մեծ, քան զոր կարիցես առնել :

Ո՞ զի գողացան 'ի քէն զվերարկուն, կամէի՞ր մերկացուցանել զքեզ նաև 'ի հանդերձէ քումմէ :

Յորժամ նախանձիս մարդոյ, որ ստացեալ ունի զպատիւս . յորժամ պատւանուանք նր և մեծութի իւր գրգռեն զօրտմտութի քո . խնդրեա՛ ճանաչել, թէ ուստի՞ հասեալ են նմա . հետազօտեա՛, թէ որովք հայթհայթանօք է նա 'ի ժառանգութե՛ նր . և յաչաղանք քո փոխեսցի 'ի գթութի :

Եթէ նոյն բաղդն ընծայեալ էր քեզ նովին գնով, լե՛ր հաւաստի, զի եթէ լինէիր դու իմաստուն, 'ի բաց հրաժարէիր յայնմանէ :

Զի՞նչ է գինն, որ վճարի վ՛ն պատուանուանց, եթէ ոչ մարդելուզութե՛ն . զիա՞րդ ստացեալ լինի իշխանութե՛ն, բայց եթէ լինելով գերի նորա, որ ընձեռէ զայն :

Կամէի՞ր կորուսանել զսեպհական ազա_

տու_

տութեն քո առ 'ի լինել ընդունակ բա_
նայոյ պաշտպանութեն այլոյ ուրուք. կէ՛ կա_
րես դու նախանձել նմա, որ առնէ զայս:
Մարդն ոչ ստանայ ինչ 'ի վերնագունէ
եւրմէ, եթէ ոչ գնով ինչիք. եւ այս գին
կարէ լինել աւելի մեծ քան զարժողութի
իւրն. Կամէիր շրջել ընդ Հակառակս
զամլորութիս աշխարհի. Կամէիր ստանալ
զայն, որում ցանկաս. եւ 'ի նմին ժա_
մանակի ունել առ քեզ նաեւ զգինն:
Որպէս դու ոչ կարես յաջողել զայն.
զոր ոչ կամէիր ընդունել, արհամար_
հեա՛ զայս պատճառ առելուե. արտաք_
սեա՛ 'ի հոգւոյ քումմէ զայս առիթ ծնա_
նելոյ զանողորմութե:
Եթէ դու պատուեալ ես, կարեսնախան_
ձել նմա, որ ստանայ զայն զոհելով զպա_
տիւն. Եթէ ճանաչես զարժողութի ա_
ռաքինուե ո՞չ ողբաս զնա, որք փոխա_
նակեալ են զայն ընդ անարգ գնոյ:
Յորժամ ուսեալ ես տեսանել զբարին
մարդկան առանց տրտնջելոյ, լուիցես
նաեւ զերրական երջանկութի նց հաճոյք:
Տեսանելով զերջանկութին պատահել
միում ումեք, որ արժանի է, ուրախա_
ցիր. քանզի առաքինութին զուարճա_
նայ ընդ երջանկութի առաքինեոյն:

Նա.

Նա, որ խնդայ ընդ երջանկութի այլոյ ուրուք, անձեցուցանէ այսուհիկ զիւրն.

## ՀԱՏՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

### Թախծութե՛ն սրտի,

ոգի ուրախին զուարթացուցանէ զե-րեսս վշտացելոյն. այլ վհատութե՛ն թախ-ծելոյն աղաւաղէ նաև զկենդանագոյն հրճուանս:

Ո՞ինչ է աղբիւր տխրութե՛ն, բայց եթէ տկարութի իմն ոգւոյ. զի՞նչ զօրացուցա-նէ զնա, բայց եթէ պակասութի հոգւոյ. Պատրաստեա՛ զքեզ մարտնչիլ ընդ նմա. և նա թողցէ քեզ զասպարէզն յառաջ քան զպատերազմն:

Նա է թշնամի իմն տեսակի քո, վո՛կ արտաքսեա՛ զնա ՚ի սրտէ քումմէ. նա թունաւորէ զծաղիկ կենաց քոց. վ՛ այսորիկ մի՛ թոյլ տար մնանել յօթե-վան քո:

Նկարէ նա զկորուստ իւրաքանչիւր փոք-րիկ իրի իբր եղծումն բաղդի քո. Ըմ-բռնելով զոգի քո վ՛ փանաքի իրաց, զա-

զարտաւղեցուցանէ զուշադրութի՛ քո ՚ի կարեւորաց. Գիտեմ, զի զոր ցուցանէ նա երբ եղեալ, ոչ այլ ինչ է, բայց եթէ մարգարէութի՛ իմն:

Նա թմբեցուցանէ զառաքինութի՛ս քո. եւ թաքուցանէ ՚ի նոցանէ որք տեսանելով զայնս կամէին պատուել. նա փաժանէ և գաղէ զնա, մինչ առաւել հարկաւոր է կիրառութի՛ նոցա:

Նա ձնշէ զքեզ չարեօք. եւ ունի կապեալ զձեռս քո, յորժամ ունիս պէտս ինչ առ ՚ի ազատել զքեզ ՚ի ձնշողէ քումմէ:

Եթէ կամիս խորշիլ յանարգութենէ, եթէ կամիս արհամարհել զամ վատահամբաւութի, եթէ կամիս արտաքսել ՚ի սրտէ քումմէ զամ անիրաւութի, մի հանդուրժեր, թէ տրտմութի տիրեսցէ նմա:

Մի՛ հանդուրժեր նմա կերպարանել զիմաք բարեպաշտութե. զգո՛յշ լեր զի մի խաբեսցէ զքեզ ընդ պատրուակաւ իմաստութե. Կրօնն է մի պատուելոյ զարարիչն քո. մի թողուր ծածկիլ ՚ի տխրութե:

Իմաստութի՛ն առնէ զքեզ երջանիկ. գիտեմ զի նա ոչ երբէք ծածկեալ է տրտմութեամբ:

Մարդն

Մարդն ոչ ունի զայլ պատճառ տրտմութեան, բայց եթէ զվիշտս. Ապա ընդէ՞ր ոչ զուարճանայ սիրտ իւր, յորժամ պատճառք այսոքիկ բարձեալ են. և ո՞չ է այս լինել ողորմելի իմն սեպհական կամօք ։

Որպէս յուղարկաւորն մեռելոյ, որ երևի տրտում, վ՟ զի է վճարեալ, այսպէս է մարդն, որ է տխուր առանց ունելոյ զայլ պատճառ, բայց եթէ զվատթար հիւթ իւր ։

՚Նոյն պարագայք պատճառեն զուրախութի ՚ի միում, և զտրտմութի ՚ի միւսում. ահա ուրեմն ոչինչ դիպուած է ըստ ինքեան և ըստ բնութե ողբալի. այլ գործէ ըստ որակութե մարդոյն, որում պատահի ։

Ցոյց ցմարդիկ. եթէ տրտմութի նց փոխատրէ գիրս ՚ի բարեգոյնս. և նոքին իսկ խոստովանեսցին, թէ այս տրտմութի է յիմարութի իմն. Նոքա գովեսցեն զնա, որ տանի չարեաց համբերութբ. և որ ընդ առաջ ելանէ ձախորդութե քաջասրտութբ. Պարտ է զհետ երթալ գովութեց նմանողութբ ։

Տրտմութին է ընդդէմ բնութե. վ՟ զի ամբոխէ զշարժմունս իւր. և առնէ անա-

խորժ

խորժ զայն , զոր նա արարեալ է սիրելի :

Որպէս կաղնին անկանի 'ի մէջ փոթորկաց , և ոչ վերամբառնայ զգլուխ իւր , այսպ տեղի տայ սիրտ մարդոյ ուժգնութեան տրտմութեան . և այսպէս ոչ ևս դառնայ 'ի նախկին վիճակ իւր :

Որպէս ձիւնն հալի 'ի ստորոտոց լերանց վ՟ անձրևացն , որք անկանին 'ի վ՟ր նոցա , այսպէս գեղեցկութիւն ջնջի յերեսաց վասն արտասուացն . և եթէ 'ի միումն և եթէ 'ի միւսում ոչ ևս վերադառնայ երբէք նոյնն :

Օ՝որ օրինակ մարգարիտն լուծանի 'ի քացախոյ , որ երևի 'ի սկզբան անդ աղօտացուցանել միայն զմակերևոյթ նր՟ , այսպէս է երջանկութի՟ քո ո՛վ մարդ . ապականեալ վ՟ տրտմութեան սրտի , թէպէտ 'ի սկզբանն երևեցի միայն ծածկել զայն ստուերաւ իւրով :

Նկատեա՛ զտրտմութիւն 'ի Հրապարակն փողոցս , անկարկեա՛ 'ի վ՟ նր՟ 'ի բազմամբոխ տեղիս . խորշի նա յիւրաքանչիւր ումեքէ . և իւրաքանչիւրոք փախչի 'ի ներկայութենէ նր՟ :

Ր. Հաւանին նա զմա՛րդ գլխակորեալ է . և որպէս զծաղիկ մի , որոյ Հատեալ իցէ արմատ . նկատեա՛ , ո՛րպէս ունի զաչս

սևե_

սեւեռեալս յերկիր. և որք ոչ ծառայեն նմա յայլ պէտս, բայց եթէ առ ՚ի լալ ։

Ընդունայն է այնպիսին կենցաղակցութ՛. Գտանի՞ ՚ի սրտի նր սէր ընկերութե. կամ՞ բանականութի ՚ի հոգւոջ նր. Հարց ցնա զպատճառ սորա. և նա ո՛չ գիտէ. հետազօտեա զառիթն. և ոչ գտցես ինչ ՚ի նմա. Այլ սակայն ընկճեալ ՚ի վախճանի, երթայ ՚ի գերեզման. և ոչ ոք խնդրէ, թէ ուր իցէ ։

Մինչ դու գիտացողութ՛, և ո՞չ ճանաչես զայս. ունիս զբարեպաշտութի, և ո՞չ իմանաս զխայլանս քո ։

Ա՛ծ հաստեաց զքեզ ողորմութ̃ իւրով. և կամեցաւ, զի եղիցիս երջանիկ. ապա թէ ոչ, բարերարութ̃ իւր ոչ էր կամեցեալ կոչել զքեզ ՚ի գոյութի. ապա զիա՞րդ իշխեցեր ընդդէմ կալ կամաց նր ։

Մինչ առաւել երջանիկ ես անմեղութ̃, մատո՛ նմա զառաւել պատիւ. և զի՞նչ է տժգոհութի քո, զի տրտնջես ընդդէմ նորա ։

Ո՞չ հաստեաց նա զա՛մ ինչ փոփոխելի. ապա զիա՞րդ իշխես ողբալ ՚ի վր փոփոխմանց ։

Եթէ ճանաչեմք զօրէնս բնութե, ընդէ՞ր կա–

կամիմք գանգատել զնոցանէ. եթէ որ-
գիտանամք զայն, զինչ կարեմք ամբաս-
տանել, եթէ ոչ զկուրութի՛ւն մեր առ-
փորձն, որք յամ՛ վայրկենի ընդառաջ
ելանեն մեզ:

Գիտեմ, զի դու ոչ ես այն, որ պար-
տի տալ օրէնս աշխարհի. պարտակա-
նութի՛ւն քո է ենթարկել զքեզ այնց, զորս
տեսանես. եթէ անհաճոյ են քեզ, գան-
գատանք քո ոչ այլ ինչ են, բայց եթէ
յաւելուածք տանջանացդ:

Մ՛ի խաբեր զքեզ մնոտի կարծեօք. և
մի համարիր, թէ տրտմութի՛ւն թե-
թևացուցանէ զթշուառութի՛ւս. է թոյն
ինն ընդ կերպարանօք դեղոյ. յորժամ
ցուցանէ բառնալ զսուրն ՚ի կրծոց,
յայնժամ մխէ զայն ՚ի սիրտ քո:

Յորժամ տրտմութի՛ւն զատուցանէ զքեզ
՚ի բարեկամացքոց, նոյն է, թէ ասիցէ,
թէ ոչ ես ընդունակ կենցաղակցու՛ե.
յորժամ թաքուցանես զքեզ ՚ի հեռաւոր
տեղիս, նոյն է ասել զքէն, թէ ամաչես:

Ոչ է բնութե՛ քո հանդիպել դժբաղդութեց
առանց կրելոյ. և ոչ բանականութի՛ւն
խնդրէ զայն. պարտ քո է կրել զդժբաղ-
դութիւս իբրև զմարդ. բայց պարտիս ևս
լինել զգայուն որպէս զմարդ:

Արտասուք կարեն ելանել յաչաց քոց · թէպէտ սիրտ քո չիցէ զուրկ յառաքինութե · այլ ոչ լալ առանց բանաւոր պատճառի , և ոչ կարի իմն շատ ։

Մ՝եծութի չարին ոչ հաշուի 'ի թըւոյ արտասուացն , որք ծաւալին · մեծամեծ ցաւք վերնագոյնք են այսոցիկ վկայութեց · որպէս մեծամեծ ուրախութիւնք են 'ի վեր քան զամենայն բացայայտութի ։

Զ՞ինչ տկարացուցանէ զոգին , որքան ցաւն · զ՞ինչ ընկճէ զնա , որքան տրտմութիւնն ։

Եղիցի՞ երբէք տրտումն պատրաստական առ ազնուական ձեռնարկութիւնս · կամ լինիցի՞ 'ի պատճառս առաքինութե ։

Մ՝ի Ներքոյ արկաներ զքեզ չարեաց , յորժամ ոչ կարեն յառաջ ածել ըզշահս · և մի երբէք զոհեսցես զհայթհայթանս առնելոյ զբարի վ՟ն այնր , որ ըստ ինքեան է չար իմն ։

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ։

Օգուտք, զոր մարդն կարէ ստանալ 'ի մէջ քաղաքակցաց իւրոց։

## ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

### Ազնուականութիւն և պատիւ.

Ազնուականութիւն ոչ դադարէ, բայց եթէ 'ի հոգւոյ. և ո՛չ գոյ ճշմարիտ պատիւ, բայց եթէ յառաքինութենէ։

Շնորհ Նահապետաց կարէ ստացեալ լինել վաստուծք. աստիճանք և պատուանուանք կարեն գնիլ դրամով. բայց այս ոչ է ճշմարիտ պատիւ։

Ազնուութիւնք ոչ կարեն ամբառնալ առ իրական փառս ինչ զգործօղ նոցին. և ոչ ոսկին կարէ ազնուացուցանել զմարդիկ։

Յորժամ պատուանուանք են փոխարէնք առաքինութե՛, յորժամ ոք ամբարձեալ լինի, վն զի ծառայեալ է հայրենեաց իւրոց, նա, որ բաշխէ զպատիւս, ունի զայնքան փառս, որքան նա, որ ընդունի զայն. և այսու բարեբարեալ լինի աշխարհ։

Կա-

Կամէի՞ր դու ամբարձեալ լինել առանց յենելոյ մարդկան զվասներն . կամ թէ կամէի՞ր վտանգել զիրաւունս քո առ պատիւս անկանիլ ընդ խնդրով ։

Յորժամ առաքինութիք դիւցազին ուրուք իջանեն առ որդիս իւր , յայնժամ պատուանեանք իւր բարուռք ընկերակցին նց. բայց յորժամ նա , որ ժառանգէ զնա , է աննման 'ի նմանէ , որ արժանի էր այնց , ո՞չ պարտի ասիլ , թէ նա այլասեռեալ է ։

Ժառանգական պատիւն համարեալ է առաւել ազնուական . այլ բանն ջատագովէ զնա , որ ստացեալ է զայն ։

Նա , որ անարժան գոլով բողջէ առ քաջագործութիւս նախնեաց իւրոց վն մեծութե իւրոյ , նման է գողոյ , որ աղերսէ զպաշտպանութի սրբուեց ։

Զինչ բարի է վն կուրի միոյ , եթէ ծնողք իւր կարող էին տեսանել . զինչ բարերարութի է վն համեր միոյ , եթէ հաւն իւր էր ճառամբան . այսպէս զինչ արդիւնք են վն անարգի միոջ , եթէ նախնիք իւր էին ազնուականք ։

Հոգի մի պատրաստեալ առ առաքինութի մեծացուցանէ զստացողն իւր . և բաւական եղիցի առանց պատուանուանց ամ-

բառնալ զնա 'ի վեր խաժամուժին :
'Նա ստացի զպատիւ, յորժամ այլք
միայն ընդունէին զայն. և կարասցէ ասել
նչ, այսպիսիք էին այնք մարդիկ, յորոց
փոխանցեան փառք ձեր :

Զոր օրինակ ստուերն զհետ երթայ
մարմնաւոր գոյացութեան. այսպէս միշտ
ճշմարիտ պատիւն կայ յետոյ առաքինութեան :

Մի՛ ասեր, թէ պատիւն է որդի համար_
ձակութեան. և մի՛ հաւատար, թէ զխանգն
կենաց կարիցէ վճարել ստացումն. այս
ոչ է պարտական միայն գործողութեան, այլ
և եղանակին գործելոյ :

Ամենեքեան ոչ են կոչեցեալք վարել
զղեկ թագաւորութեան. և ոչ են զօրք հրա_
մայելի յիւրաքանչիւր ումեքէ. Գոր_
ծեա՛ բարւոք յայն իրս, որք յանձ_
նեալ են պաշտօնի քում. և մնասցէ քեզ
գովութիւն :

Մի՛ հաւատար, թէ առ 'ի ստանալ
զհամբաւ հարկաւոր իցէ յաղթել խոչ_
ընդակաց, կա՛մ թէ պարտ իցէ աշխատութեան
և վտանգի պատահել. Կինն, որ է
պարկեշտ, արժանի է գովութեան. մարդն,
որ է պատուական պարտի պատուել :

Ծարաւ համբաւոյ բուռն է. ցանկութիւն
պատուոյ հզօր է. և նա, որ շնչէ 'ի մեզ
զայ_

զայսոսիկ , արարեալ է զայն առ մեծ ինչ վախճան :

Յորժամ հարկաւոր են հասարակութ՛ե գործողուէք յուսահատականք , յորժամ կեանք մեր պարտին գնել 'ի վտանգի վ՛ն բարւոյ հայրենեաց , զի՛նչ բաց 'ի փառասիրութէ կարէ յաւելուլ զօրութի 'ի վե՛ր առաքինութե :

Ընդունելն զպատիժս ոչ բերկրեցուցանէ զազնուական ոգիս . այլ արժանաւորելն այն՛ց է վարձ նոցա :

Աչ լաւագոյն է , թէ ասիցի , ընդէ՞ր այս մարդ ոչ ունի զարձան մի , քան՛թէ հարցանիցի , վ՛ն էր կանգնեալ է նմա արձան :

Փառամոլն կամի լինել միշտ առաջին յամբոխին . ինքն մղի յառաջ . և ո՛չ երբէք նայի , թէ ո՞ է յետ իւր . Տեսանելն զմիոք յառաջ՝ պատճառէ 'ի հոգւոյ ն՛ր զմեծագոյն անձկութ՛ի , քան՛թէ թողուլն զհազարաւորս զկնի՛ կարիցէ պատճառել նմա զուրախութ՛ի :

Արմատ փառամոլութ՛է գոյ յա՛մ մարդիկ . բայց ոչ ամէ յամենեսեան . երբեմն երկիւղն զգետնէ . յոմանս ընկճեալ է 'ի պարկեշտութ՛է :

Այն է հանդերձ հոգւոյ . առաջին , զոր

ընդունի ընդ մարմնոյ իւրում. և վերջին, զոր 'ի բաց դնէ յանջատման իւրում:

Այն է պատիւ իմն բնուեքում, յորժամ բարուք ուղղեալ է. բայց յորժամ ուղղես առ չար առարկայս, յամօթ առնէ զքեզ և ապականէ:

Ի սիրտ մատնչին փառամոլութեան թաքուցեալ է. կեղծաւորութիւն ծածկէ զերեսս նր վերարկուաւ իւրով. և ցուրտ թաքնութիւն մատակարարէ նմա զանոյշ խօսս. բայց 'ի վախճանի տեսանիցի իրն հոլանեալ:

Օձն ոչ կորուսանէ զխայթ իւր, թէպէտ և իցէ թմբրեալ 'ի սառնամանեաց. ատամն իժի ոչ է բեկեալ, թէպէտ և ցուրտն քակէ զերան նր. շարժեա՛ց 'ի գութ 'ի վր կացութե նր. և նա ցուցցէ քեզ զբարս իւր. ջեռո՛ զնա 'ի ծոցի քում, և նա շնորհակալ լինիցի զքէն տալով քեզ զմահ:

Նա, որ է ճշմարտիւ առաքինի, սիրէ զառաքինութիւն վս իւր. և արհամարհէ զգովուին, որ է սիրեցեալ 'ի փառամոլուէ:

Որքան ցանկալի լինէր վիճակ առաքինութե, եթէ ոչ կարէր լինել երջանիկ.

բայց

բայց եթէ գովասանու՚ք այլոյ ուրուք · Այց կարէ ազնուական է առ՚ի խնդրել զվարձ · և ոչ կամի, և ոչ իսկ կարէ վճարել ։

Արեգակն որքան առաւել բարձրանայ, նուազ ստուեր առնէ, այսպէս որքան առաւել բարձր է առաքինութիւն, նուազ պէտս ունի որոնելոյ զգովութիս · սակայն ոչ կարէ ՚ի բաց խորշիլ յիւրոց փո- խարինաց պատուոյ ։

Փառքն, որպէս ստուեր իմն փախչի ՚ի նմանէ, որ հետամուտ լինի այնմ · բայց երթայ զկնի հետոցն՚ր, որ կամէր փախ- չել յայնմանէ · եթէ դու զհետ պնտի- ցես այնմ առանց արժանեաց, ոչ կա- րասցես երբէք ստանալ զայն · եթէ դու արժանաւորեսցես այնմ, թէ և թաքուս- ցես զքեզ, նա ոչ բարձիթողի արասցէ զքեզ ։

Երթ զհետ այնմ, որ է պատուական, արա զայն, որ է արդար, և գովութի խղճի մտաց քոց եղիցի քեզ առաւել հաճոյական, քան թէ բարձրաձայն գո- վասանութի բիւրաւորաց, որք ոչ գիտեն, եթէ դու արժանի իցես այնց ·

# ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

## Գիտութիւն և ուսումն.

Առաւել ազնուական զբաղումն մարդկեղէն հոգւոյ է ուսումն գործոց արարչին իւրոյ:

Որում հաճոյ է ուսումն բնուէ, իւրաքանչիւր առարկայ բերէ նմա զհաւատս ինչ 'նոյ իւրոյ. և 'ոմն ինչ, որ հաւաստէ զայս, ընձեռէ զառիթ երկրպագութե:

Հոգի իւր յոմն վայրկենի ամբարձեալ է յերկինս. կեանք իւր է անընդհատ իմն ներգործութի պաշտօնասիրուէ:

Եթէ ամբառնայ զաչս 'ի բարձունս, ո՞չ գտանէ նա զերկինս լի սքանչելեօք նորա. եթէ հայի 'ի խոնարհ 'ի վր երկրի, ո՞չ պարտի որդն աղաղակել առ նա. խորհիս, եթէ ոչ էր ամենակարողութի կարէր այլ ոք կերպացուցանել զիս:

Մինչ մոլորակք կատարեն զընթացս իւրեանց, մինչ արեն մնայ 'ի տեղւոջ իւրում, մինչ գիսաւոր աստղն ընթա-

նայ

նայ 'ի լոյծ օդում, և դառնայ նորոգ 'ի սահմանեալ գնացս իւր, ո՞ այլ ոք, բայց եթէ ա՛ծ քո կարող եղև ստեղծանել զնա. ո՞ բայց 'ի յանսահման իմաստութե՛ կարողացեալ է ասել 'ի նոսա օրէնս ։

Նկատեա՛ ով մարդ, որ զարմանաս ընդ աննուաց նշոյլ նց, թէ որչափ սրընթայք են շարժմունք նց. և սակայն մինն ոչ մտանէ 'ի ճանապարհ միւսոյն ։

Հայեա՛ց սակաւ մի 'ի տարածեալ երկինս. և նշմարեա՛ զբերս իւր, քննեա՛ զներքոյս նր. և տես՛ զինչ պարունակեն. ո՞չ ապաքէն իմաստութիւն և կարողութիւն կարգաւորեալ է զբովանդակն ։

Ո՞վ հրամայեաց խոտոյ աճել. ո՞վ տաղանէ զայն յիւրում ժամանակի. նկատեա՛, զի եզն արածի այնու. ձին և խաշն սնանին նովաւ. և ո՞վ է ապա, որ խնամակալ լինի զնա նոցա ։

Ո՞ աճեցուցանէ զցորեանն, զոր դու սերմանեցեր, ո՞ հատուցանէ քեզ հարիւր փոխանակ միոյ ։

Ո՞ հատուցանէ զնա քո ըստ ժամանակին զձիթենին եզխաղողն. թէպէտ և դու ոչ գիտես զպատճառ նց ։

Նոյն իսկ ճանճն ոչ կարէ գոյանալ

յին-

յինքենէ . և ոչ այլ ոք բաց յոյ կարէ ստեղծանել զայն :

Անասունք գիտեն զգոյացուցիչն , այլ ոչ զարմանան . ուրախանան ՚ի վ՛ր կենաց իւրեանց , այլ ոչ գիտեն , թէ զրաւեչոց է . Ամ՟ ինչ հետևէ ընթացից իւրոց ՚ի յաջորդումն . և ոչ գոյ կորուստ մի միայն տեսակի ՚ի հազարաւոր ծնունդս :

Դու , որ տեսանես , թէ ո՛րչափ ա՛մ ինչ է սքանչելի ՚ի մասունս իւր , կարես լաւ ես ՚ի կիր արկանել զակն քո , բայց եթէ ՚ի նշմարել ՚ի նա զմեծութի՛ արարչին քո . միտք քո կարէ լաւագոյնս պարապել , քան թէ ՚ի քննել զզարմանալիսն :

Կարողութի՛ն և ողորմութի՛ն յայտնեալ են ՚ի ստեղծման նց . արդարութի՛ն և բարութի՛ն արտափայլեն ՚ի դարմանս պատրաստեալս վ՛ն նց . Ամենեքեան երջանիկ են ՚ի զանազան եղանակս իւրեանց . և ոչ երբէք յաչաղէ մինն զմիւս .

Ուսումն խօսից ոչ է ստուգիւ համեմատելի առ այս . յինչ գիտուէ գան յառաջ աւելի ճանաչմունք , քանթէ ՚ի պատմուէ բնուէ .

Յորժամ յարգեցեր զկերտուած նր , հետազօտեա զպէտսն առ ՚ի ճանաչել , թէ եր_

երկիրն ոչինչ յառաջ ածէ, որ ոչ կա_
րիցէ լինել քեզ պիտանի. Ո՞չ ապաքէն
կերակուրք, հանդերձեղէնք և դեղօրայք
վ՟ն հիւանդուե՟ց քոց բոլորեքեան բղ-
խեալ են յայսմ և եթ աղբերէ:

Ուրեմն նա միայն է իմաստուն, որ ճա_
նաչէ զայն. նա միայն է հանճարեղ, որ
նկատէ զայն. Այլ ՚ոմ գիտութի, որ
է առաւել օգտակար և նուազ ունայն.
նախագասեա զայն այլոց, և ՚ի գործ ած
և ՚ի շահ ընկերի քո:

Կեալ և մեռանել, հրամայել և հնա_
զանդել, առնել և կրել, ո՞չ են սոքա այն
՚ոմ, յորս տակաւին պարտիս խորհել.
Բարոյականութին ուսուսցէ քեզ զայն.
տնօրէնութի կենաց պարզաբանեսցէ քեզ
զայն:

՚Նկատեա և գտցես, զի գրեալ են ՚ի
սրտի քում. և դու ունիս պէտս միայն
յուշ ածելոյ զն՟ա. դիւրինք են առ իմա_
ցումն. լի՛ր ուշադիր. և ՚ի մտի ունիցիս
զնոսա:

Այլ ՚ոմ գիտուի անօտի է. այլ ՚ոմ ճա_
նաչումն անպարծուի է. ըստ որում ոչ
է հարկաւոր և ոչ բարերար առ մարդն.
և ոչ կարէ առնել նմա աւելի բարի կ՟մ
աւելի պատիւ:

Գա_

Պաշտօնատարութիւն առ ՚ած քո, և բարեկամութիւն առ քաղաքակիցս քո, ո՞չ են այսորիկ մեծագոյն պարտականութիւնք . Ո՞նչ կրթեսցէ զքեզ լաւագոյն յառաջնումն, բայց եթէ ուսումն գործոց նր. զի՞նչ հրահանգեսցէ զքեզ լաւագոյն յերկրորդումն, բայց եթէ խնամել զկապակցութիս քո եզկախմունս :

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

Պատահմունք բնականք .

## ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

Յաջողութիւն և Ձախորդութիւն .

Մի թոյլ տար, զի յաջողութիւն բարձրասցուսցէ զսիրտ քո տարապայման . և մի ընկճեր զոգի քո աւելի քան զչափն այնու, զի բաղդն երեւի ընդդէմ քո : Նպաստք նց ոչ են կայունք . վ՛նվ մի հիմներ ՚ի վր նր զվստահութիւն քո . Սպառնալիք նր ոչ տեւեն միշտ . վ՛ն այսորիկ ՚ի յուսոյ ուսիր զհամբերութիւն :

Համ-

Համբերել բարեպէս ձախորդութեանց դժուարին է . բայց լինելն միջասահման ՚ի յաջողութ՛ե, է մեծութ՛ի իմաստութ՛ե ։

Բարին և չարն են փորձք , որք տան ճանաչել զկայունութ՛ի քո . և ոչ այլ ինչ կարէ քեզ հաւաստել զքաջու՛ի ոգւոյ քո-վ՛նկ զգոյշ լեր , յորժամ եղիցիս ընդ ազդեցութ՛ նոցա ։

Աշմարեա՛ զյաջողութ՛ին , ո՛րքան քաղցրութ՛ ողոքէ զքեզ . ո՛րքան անզգալաբար զրկէ զքեզ ՚ի զօրութ՛է և յուժոյ քումմէ ։

Թէպէտ լեալ ես հաստատուն ՚ի չար բաղդի , Թէպէտ լեալ ես անյաղթելի ՚ի ձախորդու՛իս , հանդերձ այսու տիր-եալ եղեր ՚ի նմանէ , ոչ ճանաչելով , Թէ զօրութ՛ի քո ոչ ես վերադառնայ , որչափ և դու տակաւին մեծ կարես ունեցիս յայնմանէ ։

Տառապանքն շարժէ ՚ի կարեկցութիւն զթշնամիս մեր . բարեդիպու՛իք և երջանկութ՛ին առնեն , զի ՚ի նոյն իսկ բարեկամաց յաչաղեցիմք ։

Ձախորդութիւնն ուսուցանէ զմեծամեծ գործողութ՛իս . և է դայեակ դիւցազնու՛ե և քաջասրտու՛ե . նա , որ վայելէ յառատու՛ե ոչ վտանգեսցէ զանձն առ ՚ի ստանալ

նալ աւելի . և ոչ նա , որ ունի զա՛մ հանգիստ իւր դիցէ զկեանս իւր 'ի վտանգի ։

Աշխարհիս առաքինութ՛ին գործէ յա՛մ պարագայս . բայց պատահումն յաճախակի փոխատրէ զնա առաւել երևելի ։

'Ի ձախորդուէ՛ մարդն տեսանի բարձի թողի եղեալ յայլոց . գտանէ , զի բոլոր յոյս իւր հաւաքեալ է յինքն . յայնժամ զարթուցանէ նա զոգի իւր . և կռուելով ընդ դժուարուե՛ց , յաղթէ նոցա ։

'Ի յաջողութ՛իս համարի զանձն ապահով . խորհի լինել սիրեցեալ յամենեցունց 'ի նոցանէ , որք մարդկլուզեն շուրջ զսեղանով նր . եղանի անզգոյշ և անփոյթ . ո՛չ տեսանէ զվտանգն , որ է առաջի նր . վստահանայ յայլս և սոքա վերջապէս խաբեն զնա ։

Ա՛մ մարդ կարէ խորհրդակցել 'ի դժբաղդուէ՛ . այլ յաջողութ՛ին կուրացուցանէ զճշմարտութ՛ին ։

Լաւագոյն է տրտմութ՛ին , որ առաջնորդէ առ անդորրուէ՛ , քան զուրախութ՛ին , որ տանէ զմարդն անբաւական տանելոյ վշտաց . և որ յետոյ ընկղմէ զնա 'ի նոսա ։

Կիրք մեր թելադրեն մեզ զվերջինս . չափաւորու՛ին է գործ իմաստուէ՛ ։

Լեր

Լեր արդար 'ի բոլոր կեանս քո · լե՛ր շատացեալ յա՛մ փոփոխմունս ն՛ր · այսպէս հանցես օգուտ յա՛մ դիպուածոց · այսպէս ա՛մ ինչ , որ պատահէ քեզ , եղիցի վ՛ն քո նիւթ իմ՛ն գովութե՛ :

Իմաստութիւն փոխատրէ զա՛մ ինչ յօգուտ · և նովին ծանրութի՛ հայի յա՛մ կերպարանս բաղդին · նա ուղղէ զայն , որ է բարի · և յաղթէ չարին · և է անշարժ յամենայնի :

Մ՛ի և մի՛ իւիք մեծամտեսցես 'ի յաջողութե՛ · և մի՛ յուսահատ լինիս 'ի ձախորդու՛իս , մի՛ խնդրեր զվտանգս · բայց և ոչ իսկ փախիցես յառաջ քան զնոսա անարգու՛ի · կա՛ց զքաջասրտութի՛ արհամարհելոյ զամենայն , որ ոչ է յերկարատև :

Մ՛ի թոյլ տար , թէ ձախորդութի՛ն խորտակեսցէ զթևս յուսոյ · և ոչ թէ յաջողութի՛ն խաւարեցուսցէ զլոյս խոհականութե՛ն :

Որ յուսահատի զվախճանէն , ոչ երբէք հասանէ այնմ · և նա , որ ոչ տեսանէ զխորխորատն , կորիցէ 'ի ներքս անդ :

Նա , որ հաւատայ ժառանգել զյաջողու՛ին իբր իւր սեպհական բարի , նա ,

որ

որ առէ՛ նմա, ընդ քեզ կամիմ հաստատել զերջանկութիւն իմ, այնպէսէն արկանէ զխարխափ իւր 'ի յատակ ինչ աւազուտ զոր վերադարձ ալեկոծութեն 'ի բաց առեալ տանի:

Ո՜ որ օրէնակ ջուրն, որ հոսէ 'ի լերանց, ոռոգանէ 'ի գնացս իւր առ ովկիանոս՝ զամ անդաստանս, որք շուրջ կան զեզերօքն իւր, և ոչ զկայ առնու 'ի տեղւոջ ուրեք, այսպէս բաղդն այց առնէ մարդկան. շարժումն իւր է յառաջ դիմողական. և ոչ կամի զտեղի տանել. է անկայուն իբրև զհողմ. զի՞րդ ապա կամէիր ունել զնա. Յորժամ նա զիրկս արկանէ զքև, երջանիկ ես. բայց 'ի նմին վայրկենի, յորում դարձուցանես զքեզ առ 'ի գոհանալ զնմանէ, նա այն ինչ անցեալ է առ այլ ոք:



# ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

## Ցաւք և հիւանդութիւնք.

Հիւանդութի՛ք մարմնոյ առնեն միշտ զտր-տմութիւն 'ի յոգւոջ. մինն ոչ կարէ վայելել 'ի բարի առողջութե՛, եթէ միւսն է հիւանդ։

Ցաւն է 'ի մէջ ո՛մ չարեաց այն, որ առաւել զգացեալ լինի. և է այն, որոյ վ՟ո բնութի՛ն մատուցանէ սակաւ դեղս։

Յորժամ կայունութի՛ քո լքանէ զքեզ, կոչեա՛ յօգնութի՛ զբանականութի՛ քո. յորժամ կորուսանես զհամբերութի՛ն, կարդա՛ առ յոյսն։

Արելն է հարկ իմն հաստատեալ 'ի բնութե՛ քում. Կամէի՞ր, զի հրաշք պատսպա-րէին զքեզ յայսմանէ. կամ թէ զան-գատեսցես, վ՟ո զի պատահէ քեզ, մինչ նոյնն հանդիպի ամենեցուն։

Անիրաւութի՛ իմն է սպասել զազատու՛ի յայնմանէ, առ որ ծնեալ ես. ուրեմն ենթադրեա՛ զքեզ պարկեշտութե՛ օրինաց սեպհական պայմանի քո։

Կամէիր ասել յեղանակաց , մի շարու_
նակել զընթացս ձեր . ո՛չ զի ես մի
ծերացայց . ո՞չ է լաւագոյն համբերել
խաղաղութեան այնմ , յորմէ ոչ է հնար
խորշել :

Ցաւն , որ տեւէ շատ , չափաւորեալ է .
վնկ ոչ պարտիս գանգատել զայնմանէ .
այն , որ է բանական , է սուղ . և դու
խոկ տեսանես զվախճան նր :

Մարմին քո ստեղծեալ եղէ առ 'ի լինել
հպատակ ոգւոյ , յորժամ դու վշտա_
ցուցանես զոգին վն չարեաց մարմնոյ ,
ահաւանիկ ներգործես ընդ հակառակս
օրինաց բնութե :

Օ որ օրինակ իմաստունն ոչ վշտանայ ,
եթէ փուշ մի պատառէ զհանդերձ նորա ,
այսպէս համբերողն ոչ տագնապէ զոգի
ւր , վն զի այն , որ ծածկէ զնա ,
խոնեալ լինի :

## ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ .

### Մահ .

Որպէս յառաջ ածումն հրահանգե_
լեաց հաւասատէ զաշխատանս ալքիմիա_
կու_

կանաց, այսպէս մահն է վկայութիւն կե-
նաց մերոց. և առհաւատչեայ, որ ցու-
ցանէ զուղղութիւն գործողութեանց մերոց։
Կամիս դատել զկենաց ինչ, քննեա՛ զշր-
ջան նր. վախճանն ստուգեսցէ զջան նր.
և ուր ոչ ես դոյ կեղծաւորութիւն, երևի
ճշմարտութիւն։

Նա ոչ է չարաչար ծախեալ զկեանս
իւր, որ գիտէ մեռանել բարեպէս. և
ոչ կարէ համարիլ կորուսեալ զբոլոր
ժամանակ իւր նա, որ ծախեաց զվեր-
ջին բաժին նր առ պատիւ իւր։

Նա, որ մեռանի, ոպ պարտն է, ոչ է
ծնեալ 'ի զուր. և ոչ իսկ եկեացյան-
օգուտս նա, որ մեռանի երջանկաբար։

Նա, որ խորհի, թէ պարտ է մեռանել,
շատացեալ է, մինչ կենդանին է. Նա,
որ զուն գործէ 'ի մոռացօնս արկանել
զայն, ոչ ունի զհաճութիւն ինչ. 'ամ
ուրախութիւն երևի նմա գոհար ինչ.
զորմէ կասկածի յամ վայրկենի կորու-
սանել։

Կամի՞ս ուսանել մեռանել ազնուակա-
նօրէն, թող, զի ախտք քո մեռցին յա-
ռաջ քան զքեզ. Երջանիկ է նա, որ
եղերէ զիրակութիւս կենաց յառաջ քան
զմահ իւր. զի յորժամ հասանէ ժամն,

ոչ

ոչ ունի առնել զայլ ինչ, բայց եթէ մեռանել. և ոչ յօժարի յապաղել. քանզի ոչ ևս ունի առնել ինչ 'ի ժամանակէն:

Ո՜վ փախչիր 'ի մահուանէ. վ՞ս զի լինէր տկարութ՛ին իմն. մի՛ երկնչիր յայնմանէ. վ՞ս զի ոչ գիտես, զինչ իցէ. այն, զոր ճանաչես ստուգիւ, է, զի ազատէ զքեզ յամ՛ ցաւոց քոց:

Ո՜վ հաւատար, թէ երկայնագոյն կեանքն իցէ առաւել երջանիկ. այն, որ է լաւագոյն ծախեալ առնէ առաւել պատիւ մարդոյն. և նոյն ինքն վայելեսցէ 'ի շահեկանութիւն ն՛ր յետ մահուան:

Այս է լրացեալ տնօրէնութիւն մարդկային կենաց:

ՎԵՐՋ.